



Մ Կ Ր Տ Ի 2 Է Մ Ի Ն

ԳԼՈՂԽԾ ԺԱ.

Էմինի հրատարակչական գործունէութիւնը արտա-
յայտուել է վեց հայ բնագրի հրատարակութեամբ՝ Յով-
հաննու կաթողիկոսի Իրասխանակերտեցւոյ Պատմու-
թեան Հայոց, Ղազարայ Փարպեցւոյ թղթոյն առ Վա-
հան, Տէրն Մամիկոնէից, Մ. Կաղանկ. պատմ. Աղուա-
նից, Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութեան Հայոց,
Վարդանայ Բարձրբերդեցւոյ Տիեզերական պատմութեան
և Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութեան
տանն Սիսական, որոնցից չորսը՝ Փարպեցու թուղթը,
Կաղանկատուացու, Մխիթարի և Բարձրբերդեցու պատ-
մութիւնները նա առաջին անգամն է լոյս ընծայել:

Ով որ ծանօթ է Հայոց գրականութեան վերածը-
նութեան շրջանին, նա լաւ գիտէ, թէ ի՞նչ տեղ է
բռնում այդ գործում թէ իւր դժուարութեամբ և թէ
իւր արգասաւորութեամբ հայ բնագրների հրատարակու-
թիւնը: Այդ գործունէութիւնը կամ աշխատանքը կազ-
մում է ամեն բանի հիմքն ու սկիզբը, առանց դորան
անկարելի կլինէր ոչ թէ միայն գրականութեան վե-
րածնութիւնը, այլ և նորա հասարակ ուսումնասիրու-
թիւնը, մինչև իսկ նորա գոյութիւնը ևս վտանգի են-
թարկուած կլինէր: Յայտնի է, որ Հայոց գրչագիր մա-
տեանների մնացորդները մինչև հայ տպագրութեան
սկզբնաւորութիւնը ցրուած էին Հայաստանի զանազան
խուլ ու դժուարամատոյց անկիւններում՝ հին վանքե-
րի ու եկեղեցիների պահարաններում, դարակներում,
խցերում և մասնաւոր մարդկանց տներում, ընկած

*) Տես ՂԼԼԻՄՅԱ 1899 թ. Ա գիրք:

փոշու ու խոնաւութեան մէջ, փտելու, հրդեհի ճարակ և մկնբերին կերակուր դառնալու վտանգին ենթարկուած: Շատ սահմանափակ թուով մասնաւոր անհատներն էին, որ միջոց ունէին օգտուելու նոցանից, իսկ ընդհանրութիւնը զրկուած էր այդ արտօնութիւնից: Դորա հետեւանքն էր շատ ուրիշ պատճառների հետ միասին և գրականութեան անկումն ընդհանրապէս և մասնաւորապէս մաքուր գրաբառի կորուստը, որովհետեւ մեր դասական լեզուի մաքուր աղբիւրները, ընտիր օրինակները ամբողջովին ամփոփուած էին այդ ձեռագրների մէջ: Հայ գրականութիւնը անկումից ազատելու, մաքուր գրաբառը իսպառ կորչելու վտանգից փրկելու համար, անհրաժեշտ ձեռագրների հաւաքելը և, որ զլխաւորն է, նոցանից օգտուելու գործը հեշտացնելը: Ահա այդ դժուար գործին ձեռնարկում են տաջին նուագ Հայ տպարանատէրերը, մեծ դժուարութեամբ ու զոհողութեամբ հաւաքելով գրչագրները յայտեղից այնտեղից և տպագրութեամբ տարածելով նոցա ժողովրդի մէջ և նոցա գործածութիւնը ընդհանրացնելով: Զիշտ է, տաջին անգամ հրատարակուածները մեծաւ մասամբ, կամ, լաւ է ասել, բացառապէս կրօնական բովանդակութեամբ մատեաններն էին՝ Աստուածաշունչ, Սաղմոս, Ժամագիրք, Պատարագամատոյց, Նարեկ, Շարական, Յայսմաւուրք, Յիսուս որդի, Ընդհանրական, Մաշտոց, Զաշոց և այլն, որովհետեւ պէտք էր նախապէս բաւականութիւն տալ ժողովրդի կրօնական-եկեղեցական սահմաններին ու կարիքներին, ճիշտ է, ձեռագրների հրատարակութիւնը գործի նորութեան, դժուարութեան և տպարանատէրերի անպատրաստականութեան պատճառով տաջին ժամանակները թէ տպագրութեան արուեստի գեղեցկութեամբ ու մաքրութեամբ և թէ բնագրերի հրատարակութեան ճշտութեամբ անկատար ու անբաւարար էր,

բայց արդէն ճանապարհը հարթուած էր և մնում էր միայն Վենետիկի, Ամստերդամի, Կոստանդնուպօլսի, Մառսելի, Լիվոռնօյի, Իլլովի, Խալքարեանի ու Արդութեանի տպարանների սկսածը շարունակել; զարգացնել և կատարելագործել: Այդ գործն էլ իւրեանց ձեռքն են առնում Մխիթարեանք, Ս. Էջմիածինը, Երուսաղէմի Ս. Յակովբը և մասնաւոր մարդիկ՝ բարեխիշտակ Շահնազարեան Կարապետ վարդապետը Պարիզում, արտասահմանի օտար հայագէտները, Յովհաննէս Զոհրաբեանը, Շահնաշրպետը, Քերովբէ Պատկանեանը, Կարապետ Եղեանը և միւսները ⁴⁶⁾: Ահա հէնց այդ ասպարիզում գործում է և Էմինը, արտագրելով վերոյիշեալ հրատարակութիւնները: Բնագրների հրատարակութեան գործը, որ մինչև ցայսօր դեռ շարունակուում է և պէտք է շարունակուի, ինչպէս եջեւում է, դեռ երկար ժամանակ, որովհետև անդադար չ'հրատարակուած ուրիշ ձեռագրներ են գտնուում, որ պէտք է լինում հրատարակել, գտնուում են հին հրատարակուած ձեռագրների ուրիշ աւելի ընտիր օրինակներ, և հարկաւորում է հը-

⁴⁶⁾ Ձեռագիր հաւաքելու գործում մի առանձին եռանդ ցոյց է տուել բարեխիշտակ Յովհաննէս եպիսկոպոս Շահնաթուհեանը, որ թէ անձամբ, թէ ծանօթների ու բարեկամների ձեռքով շատ ձեռագիր է հաւաքել կամ արտագրել Մայր-Աթոռի մատենադարանի համար: Նորա աշխատանքով է եղել, որ փոխադրուել են Ս. Էջմիածին Մաղարթայի Ս. Նախավիսոյ վանքի ձեռագրները, որոնց մէջ և այն նշանաւոր աւետարանը, որ պոյմ Մայր-Աթոռի մատենադարանի զորդն է կազմում: Նորա աշխատանքով է եղել, որ երկրորդ անգամ 37 թուին կարգի է բերուել և ցուցակագրուել Մայր-Աթոռի մատենադարանը: Առաջին անգամ կարգի է բերուել ու ցուցակագրուել այդ մատենադարանը երջանկայիշատակ Ներսէս Աշտարակցու հրամանով և Մսերի աշխատութեամբ 1828 թուին, Տես Սեդրակեանի «Շահնաթուհեանցի կենսագրութիւնը». էջ՝ 120—128.

ները նորից աւելի կատարելագործուած կերպով հրատարակել, մի երկար ժամանակեայ, մանրակրկիտ, տաժանելի աշխատանք պահանջող գործ է: Հրատարակիչը, եթէ իւր հրատարակելի բնագիրը նոր է, մի հատ է և ինքը պէտք է նախնական հրատարակութիւն անի, ստիպուած է ուշադրութեամբ կարդալու ամբողջ ձեռագիրը, որ յաճախ այնպէս էլ հեշտ բան չէ, մանաւանդ երբ ձեռագիրը գրուած է երկաթագրի մի քանի խառնուած տեսակներով, ստիպուած է մտքով վերականգնելու խառնադրուած տեղերը, որովհետեւ մեր ձեռագրներէից շատերը, անխնամք պահուած լինելու պատճառով, գոյնը տուած, սևացած, դեղնած, ջնջուած և կտրտուած են լինում, ստիպուած է բազմաթիւ սխալները ուղղել, սխալները, որոնք սպրդած են լինում բնագրի մէջ արտագրողների անձեռնհաս լինելուց, տգիտութիւնից, ստիպուած է լինում կէտադրութիւնը դնել, որովհետեւ ձեռագրերի կէտադրութիւնը կամ բոլորովին անկանոն է լինում, կամ ամենեւին չի լինում և, վերջապէս, ստիպուած է լինում այդ բոլորն արտագրել, սրբագրել և տպագրութեան յանձնել: Հրատարակիչ գործը աւելի ևս դժուարանում է, եթէ հրատարակելի բնագրի ձեռագիրը մի քանի օրինակ է, որովհետեւ այդ դէպքում, բացի վերոյիշեալ բոլոր գործողութիւններից, հարկաւոր է լինում և նոցա միմեանց հետ բազդատել, ընտրել լաւ ընթերցուածքը, տարբերութիւնը լուսանցքների վերայ նշանակել, չենք ասում արդէն այն, որ հրատարակիչները ինքեանք են շատ անգամ ստիպուած լինում ձեռագրների գրութեան թուականները և միւս հանգամանքները որոշելու և ծանօթաբանութիւններով պարզելու, որովհետեւ ձեռագրները յաճախ կամ բոլորովին անթուական են լինում և կամ յիշատակարանները թուականների հետ պատռուած: Այս այսպէս լինելով, շատ

հեշտ է եղած հրատարակութիւններից գաղափար կազմել նոցա հրատարակիչների հմտութեան մասին: Ճիշտ է, այս դէպքում մեծ դեր է խաղում և ձեռագրների յատկութիւնը, որոնց վերալից եղել է հրատարակութիւնը, բայց և այնպէս հրատարակիչի հմտութիւնը մեծ նշանակութիւն ունի: Էմիլի հրատարակութիւնները իւրեանց մաքրութեամբ, ճշտութեամբ և կէտադրութեան կանոնաւորութեամբ ու ծանօթաբանութեամբ ցոյց են տալիս, որ նա, ըստ ամենայնի, հմուտ և բարեխիղճ հրատարակիչ է եղել: Նորա հրատարակութիւնների մէջ ի հարկէ չի կարելի գտնել բոլոր այն առաւելութիւնները, որ մենք տեսնում ենք մեր մի քանի նոր հրատարակիչների գործերում, ինչպէս օրինակի համար, Եղեանի հրատարակութիւններում, բայց պէտք է 'ի նկատի առնել ժամանակը, երբ Էմիլը կատարել է իւր հրատարակութիւնները, ծանօթաբանութիւնների այն նիւթը, որ մատակարարել է նրան ժամանակակից հայագիտութիւնը և ձեռագրների այն օրինակները, որոնց վրալից նա արել է իւր հրատարակութիւնները: Էմիլը իւր հրատարակութիւնները արել է 53, 60 և 61 թուականներին, այսինքն մի այնպիսի ժամանակ, երբ մեր գրականութիւնը տակաւին նոր էր սկսել կանոնաւոր կերպով զարգանալ, երբ դեռ շատ բան մութ էր ու չպարզուած, ուստի և դեռ միջոց ու նիւթ չկար այնպիսի հարուստ ծանօթաբանութիւններով մեկնել բնագիւղը, այնպիսի ընդարձակ և ընտիր յառաջաբաններով բացատրել հեղինակների կեանքի հանգամանքները, բնագրի գրութեան և նորա բովանդակութեան նիւթ եղած դէպքերի պայմանները, որ մենք տեսնում ենք Պ. Եղեանի հրատարակութիւններում: Էմիլի ձեռքի տակ եղած ձեռագրների օրինակները, որոնց վերալից նա արել է իւր հրատարակութիւնները, բոլորը ևս համեմատաբար ա-

ւելի նոր ժամանակի ընդօրինակութիւն լինելով, անկատար ու թերի են եղել, ուստի և բնականապէս նոցա վերալից եղած հրատարակութիւններն էլ չպէտք է կատարեալ լինէին, չենք ասում արդէն այն, որ նորա հրատարակութիւններից չորսը նախնական հրատարակութիւն լինելով, պարունակում են իւրեանց մէջ այդ տեսակ հրատարակութիւններին յատուկ բոլոր պակասութիւնները: ⁴⁷⁾ Էմինի հրատարակութիւններից մանաւանդ արժանի է ուշադրութեան Ղազար Փարպեցու թուղթը, որի հրատարակութիւնը իւր կատարելութեամբ դեռ միակն է մեր գրականութեան մէջ, որովհետեւ մինչև ցայսօր թղթի մի ուրիշ ձեռագիր օրինակ դեռ չի գտնուել մեր մէջ: Նա իւր 1848 թուին արած ճանապարհորդութեան ժամանակ պատահում է, ի միջի այլոց, և Ս. Էջմիածնում և ծանօթանում բարեյիշատակ Յովհաննէս եպիսկոպոս Մահաթումեանի հետ և նորանից իմանում թղթի ձեռագրի գոյութեան մասին ու խնդրում նորա ընդօրինակութիւնը: Թղթի այդ միակ ձեռագիր օրինակը գտնուել էր Ս. Էջմիածնի մատենադարանում 1829 թուին, երբ Մսեր Զմիւռնացին ձեռնարկած լինելով կազմել ձեռագրների գրացուցակը, աչքի էր անցկացրել բոլոր ձեռագրները: Դորա վերալից ընդօրինակուել էր երեք

⁴⁷⁾ Բացառութիւն է կազմում միայն Դրասխանակերտցու պատմութիւնը, որի հրատարակութիւնը հանգուցեալը արել է Մսեր Մագիստրոսի անթուական գրչագիր օրինակից 1843 թուին Երուսաղէմում տպարդուած ընագրի բաղդատութեամբ: Մագիստրոսը այդ գրչագիրը ընտրել անել էր 1828 թուին Ս. Էջմիածնում Ենովբեան Ստեփանոս արքեպիսկոպոսի գրքերի միջից և համեմատել էր նորան իւր 1824 թուին Զմիւռնայում գաղափարած անթուական օրինակի և Ն. Պօլսից Յովհաննէս Դէորդեան վարդապետի ձեռքով բերուած և 12 գրչագրների բաղդատութեամբ արուած օրինակի հետ:

օրինակ՝ մէկը Շահխաթունեանի համար, որից և եպիսկոպոսը հատուածներ էր կարգացել Էմինին, միւսը Սսերի համար, որ տարել էր իւր հետ, նախ Քիշինեփ, լետոյ անտեղից էլ Մոսկուա, և վերջապէս, երրորդը Դանիէլ վարդապետի համար: Վերագառնալով Մոսկուա, նա ստանում է իւր ցանկացած ընդօրինակութիւնը և բաղդատելով նորան Սսերի օրինակի հետ, 1853 թուին լոյս է ընծայում ընդարձակ լառաջաբանով և կարեւոր ծանօթութիւններով: Բայց որովհետեւ ձեռագրների երկու օրինակն էլ գաղափարուած են լինում մի և նոյն օրինակից, այդ պատճառով էլ Էմինը շատ չի կարողանում շահուիլ իւր արած բաղդատութիւնից և ստիպուած է լինում մի քանի մութ տեղեր այնպէս էլ թողնել առանց բացատրութեան, ինչպէս ուր խոստովանում է և ինքը իւր յառաջաբանում: Այդ հրատարակութեան վերալից է արիւլ հանգուցեալ Մ. Նալբանդեանցը «Թղթի» իւր աշխարհաբառ թարգմանութիւնը, որ նորա մահից յետոյ 68 թուին հրատարակել է նորա ընկեր Տէր-Գրիգորեանը: Այն ընդարձակ ծանօթաբանութիւնները, որ հանգուցեալ հրապարակախօսը կցել է իւր թարգմանութեան, ուղղուած են գլխաւորապէս Էմինի դէմ և բանակուռի ձև ունին: Թողնելով մի կողմը Նալբանդեանցի բանակուռի ձևի առանձնատկութիւնները, որ նորա տաք բնավորութեան հետեանքը պէտք է համարել, մենք այստեղ չենք կարող չնկատել, որ նա իւր սրամիտ նկատողութիւններով և հմտալից գրական-պատմական հետազոտութիւններով ճշտել ու լրացրել է Էմինի ծանօթութիւնները և շատ է նպաստել ընդհանրապէս բնագրի մի քանի մութ տեղերի պարզելուն: Էմինը, օրինակի համար, «Թղթի» «ծախեալ բազում գանձ» շինեալ զարդարեաց նաև զսուրբ կաթողիկէ եկեղեցին՝ ի նոր քաղաքի խօսքերի տակ ծանօթաբանում

է՝ «կամ զՎաղարշապատ իմանալ պարտ է և կամ զմեր-
ձակայն Նորք»։ Նալբանդեանցը հանգուցեալ գիտնակա-
նի այդ սխալը ուղղում է, ապացոյց տալով, որ այդ-
տեղ «Նորք» ի խնդիր լինել չի կարող, այլ Նոր-քաղաքի,
որ նոյն իսկ Վաղարշապատն է, իսկ Վաղարշապատի ս.
Կաթողիկէ եկեղեցին մեր այսօրուայ ս. Էջմիածինն է։
Էմինը «Թղթի» մէջ յիշուած «քահանայապետ աշխար-
հին» տէր Մուշէ-ի մասին կարծիք է յայտնում, որ դա
հայոց կաթողիկոս Տէր-Մուշէն է, որ կաթողիկոսացել
է 502 թուին Սամուէլից յետոյ։ Նալբանդեանցը ուղ-
ղում է այդ սխալը և ապացոյց է տալիս. որ այդ Տէր-
Մուշէն Սիւնեաց վիճակաւոր եպիսկոպոսն է, Ստեփան-
նոս եպիսկոպոսի յաջորդը և Պետրոս Քերթովի նախորդը
և որ քահանայապետ կոչուած էին ոչ միայն կաթողի-
կոսները, այլև եպիսկոպոսները։ Էմինը կարծում է, որ
Թղթի մէջ յիշուած Հրատ Կամսարականը Արշաւիր Կամ-
սարականի որդի Հրահատ Կամսարականն է, որի անու-
նը Ղազար Փարպեցին կրճատելով, Հրատ է դարձրել։
Նալբանդեանցը ապացոյց է տալիս, որ Փարպեցին չէր
կարող այդպէս կրճատել Հրահատ անունը և որ այդ
միայն արտագրութեան սխալ է, աղաւաղումն է, ուրիշ
ոչինչ։ Էմինը Փարպեցու ծնողներին «ականաւոր և հա-
րուստ» է համարում, իսկ Նալբանդեանցը հերքում է
այդ կարծիքը, ապացոյց տալով, որ հրատարակչի մէջ
բերած պատճառաբանութիւնները բաւական չեն Ղա-
զարին «ականաւոր և հարուստ» մարդու որդի ենթադ-
րելու։ Էմինը բնագրի «Մի արդարև պատմեսցի այս 'ի
դէթ ըստ բանի ողբոյն և մի լուիցէ 'ի դրունս Ասկա-
ղովնի» հատուածի մէջ «ի գէթ» բառը սրբագրում է
«գէթ», իսկ Նալբանդեանցը «գէթ» բառը յատուկ ա-
նուն է համարում և ապացոյց է տալիս, որ բնագրի
«ի գէթ»-ը կանոնաւոր է։ Էմինը Թղթի մէջ յիշուած

«Սևուկ» բառը մարդու անունն է համարում և կարծում է, որ այդ յայտնի Անձևացեաց իշխան Սևուկն է, բայց Նալբանդեանցը ինքը հրաժարուելով մի որ և իցէ որոշ բան ասելու այդ Սևուկի մասին, նոյն ժամանակ մեծ սրամտութեամբ և պատմական փաստերով ապացոյց է տալիս, որ այդ եթէ մարդու անունն է, և ոչ թէ տեղի, յամենայն դէպս Անձևացեաց Սևուկ իշխանը լինել չի կարող: Իմինը կարծում է, որ Փարսեցին, բացի Աղան Արծրունուց, աշակերտել է և ս. ս. Սահակին ու Մեսրոպին և նոցա հրամանով գնացել է արտասահման կրթուելու, իսկ Նալբանդեանցը հաստատ կերպով հերքում է այդ կարծիքը և ապացոյց է տալիս, որ նա միայն աշակերտել է Աղանին և որ «թարգմանիչքը» նորա աշակերտութեան ժամանակ արդէն մեռած են եղել, ուրեմն և նա չէր կարող նոցա հրամանով Յունաստան երթալ և ալլն:

Առհասարակ Իմինը իբրեւ հնութեան յարգը հասկացող մարդ շատ էր սիրում Հայոց ձեռագրները և նոցա հաւաքելու, ցուցակագրելու խնդիրը մի շատ կտրւոր գործ էր համարում մեր գրականութեան համար: Նա իւր ուսուցչութեան առաջին օրերից մինչև վերջը անդադար նամակներով յորդորում էր իւր բարեկամներին, ծանօթներին և ընկերներին ուշադրութիւն դարձնել Հայոց հին թղթերի ու ձեռագրների վերայ, հաւաքելու նոցա ու ուղարկելու իրան, նա յորդորում էր և իւր բազմաթիւ աշակերտներին զբաղուելու այդ գործով և իրան նպաստելու գրչագիր մատենաների մի մատենադարան կազմելու: Մենք յաճախակի և շատ գովասանք ենք լսել նորա բերանից իւր ընկեր և բարեկամ Սայաթ-Նովայի գիտնական հրատարակիչ յայտնի Հախվերդեանի մասին, որ նորան ուղարկել էր մի հատուած Հայոց Գահ-նամակից, որ հանգուցեալ բժիշկը գտել էր մի հին ձեռագրի կազ-

մում և քիմիական միջոցներով մագաղաթի գոյնը տուած տառերին վերագարձնելով նոցա նախկին դրութիւնը, կարողացել էր կարդալ նորան: «Եթէ մեր կրթուած երիտասարդները, յաճախակի կրկնում էր նա, հետեւէին Իւրի Հախվերդեանի օրինակին, մեր հին գրականութիւնից շատ բան կազատուէր կորստից և մեր ժողովրդական գրականութիւնը կունենար շատ ազնիւ մշակներ»: Հանգուցեալի այդ յորդորանքները անսպասախան կամ անհետեանք չէին մնում. նորա աշակերտները կամենալով նիւթ մատակարարել իւրեանց ուսուցչի ուսումնասիրութեան գործին, յարգելով նորա կամքն ու ցանկութիւնը, որոնում, գտնում էին իւրեանց բնակութեան տեղերում պահուած ձեռագրները և ուղարկում էին նորան. նորա ընկերները, բարեկամները ու ծանօթները մասամբ յարգելով նորա ուսումնականութիւնը, մասամբ էլ կամենալով երախտահատոյց լինել Լազարեան ճեմարանին և նորա հիմնադիրներին իւրեանց պատկանած գրչագրներն էին ընծայում նորա մատենադարանին: Այսպիսով ժամանակի ընթացքում հանգուցեալը հասել էր իւր նպատակին: Նա կազմել էր իւր սեփական ձեռագրների փոքրիկ մատենադարանը և հիմք էր դրել ներկայումս Լազարեան ճեմարանում գոյութիւն ունեցող գրչագիր մատենանների հաւաքածուին: Թէ որքան էր հանգուցեալի սեփական ձեռագրների թիւը նորա կենդանութեան ժամանակ—, չենք կարող ասել, ինչպէս և չենք կարող ասել, թէ որքան ճշմարիտ էին այն լուրերը, որոնք տարածուած էին և շատերի ականջին հասած, որ իբրև թէ նա ճեմարանի անունով ստացուած ձեռագրներից մի քանիսը իրան է սեփականացրել, իւր մատենադարանին է յատկացրել: Մենք միայն կարող ենք այսքանը ասել, որ տեսել ենք հանգուցեալի ձեռագրները՝ Սամուէլ Անեցին, Կիրակոս

Գանձակեցին, Մազիստրոսի թղթերը և միւսները և յատկապէս լիշում ենք Աղեքսանդր Մակեդոնացու պատմութեան մի ընտիր ձեռագիրը զարգարուած բազմաթիւ պատկերներով: Եմինը սովորութիւն ունէր ցոյց տալու ձեռագրների գործով հետաքրքրուողներին մասնաւորապէս իւր ուսանողներին իւր ձեռագրները և սիրում էր պատմել նոցա գրուելու, պահուելու և միւս հանգամանքները: Նա պատմում էր, ի միջի ալլոց, թէ ինքը վերջին անգամ Թիֆլիսում եղած ժամանակ անձամբ ականատես է եղել, թէ ինչպէս են ներկայումս Հայերը պահում իւր մօտ գտնուած թանկագին համարուած ձեռագրները: Նա իւր բարեկամներից իմանալով, որ մի պարոնի մօտ գտնուում է Խորենացու ձեռագիրը, կամեցել է տեսնել նորան, յուսալով, որ, գուցէ, հնարաւոր լինի այդ նոր ձեռագրով պարզել հին, հրատարակուածի մութ տեղերը: Բայց անյայտ պարոնը ամենաինչ կամեցել ցոյց տալ, զանազան պատճառներ է՝ բերել և արգելքներ յարուցել: Մեծ թախանձանքներից և ուրիշ զանազան միջոցներ գործ դնելուց յետոյ, վերջապէս, յաջողեցրել է տեսնել ձեռագիրը, փաթաթած բազմաթիւ լաթերի ու թաշկինակների մէջ, և համոզուել է, որ դա համեմատաբար նոր ժամանակուայ գրուած մի այնպիսի ընդօրինակութիւն է, որից չի կարելի շահուիլ:

Լազարեան ճեմարանի ձեռագրների զարգը, ինչպէս յայտնի է, կազմում է նորա հռչակաւոր հին աւետարանը: Արասուբազարցի Խաչիկեանը, որ ընծայարբերել է այդ թանկագին հնութիւնը ճեմարանին, ինչպէս մենք լսել ենք, Եմինի միջնորդութեամբ, արժանացել է վեհազնեայ Խաչատուր ալայի առանձին գոհունակութեան. նորա երկու որդիքը, մեծանուն հոգաբարձուի հրամանով սան են ընդունուել ճեմարանում:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Եմինի հրատարակութիւնները, բացի տպագրութեան մագրութիւնից, ընագրի ճշտութիւնից, համեմատութիւնների առատութիւնից, նշանաւոր են և իւրեանց յառաջաբաններով: Նորա վեց հրատարակութիւնից մէկը՝ Մխիթար Ալբիվանցու պատմութիւնը ամենեւին յառաջաբան չունի, երկուսը՝ Կաղանկատացու և Ստեփաննոս եպիսկոպոսի պատմութիւնները յառաջաբանի տեղ միայն փոքրիկ նախերգանքներ ունին իբրև ծանուցագրեր, թէ ինչ ձեռագրների օրինակներից է եղել տպագրութիւնը, իսկ երեքը՝ Փարսեցու թուղթը, Բարձրբերդեցին և Յովհաննէս կաթողիկոսը բաւականին ընդարձակ և արժանի ուշադրութեան յառաջաբաններ ունին: Թողնելով մի կողմ Փարսեցու թղթի յառաջաբանը, որ թէև ամենաընդարձակն է, բայց նոր բան չի պարունակում իւր մէջ, բացի հեղինակի յայտնի կենսագրութիւնից, որ ամբողջապէս առնուած է թըղթի բովանդակութիւնից, մենք այստեղ կանգ կառնենք գլխաւորապէս Բարձրբերդեցու և Դրասխանակերտցու յառաջաբանների վերայ, որոնց մէջ պարունակուած տեղեկութիւնները իւրեանց ժամանակին նորութիւն են եղել մեր գրականութեան համար և որոնք ներկայումս ևս դեռ իսպառ չեն կորցրել իւրեանց թարմութիւնը: Բարձրբերդեցու յառաջաբանի մէջ հրատարակիչը խօսելով իւր հրատարակութեան հանգամանքների մասին, ՚ի միջի ասլոց, մէջ է բերում երջանկալիշատակ Ներսէս Աշտարակեցու կոմս Նիկոլայ Պետրովիչ Ռումեանցովին գրած նամակը, որ մեզ տեղեկութիւն է տալիս Մոսկուայի յայտնի թանգարանի հիմնադրի և Հայոց Եփրեմ կաթողիկոսի մէջ եղած գրագրութեան մասին: Նա յայտ-

նում է, որ իւր հրատարակութիւնը արել է իւր մատենադարանի ձեռագրի անթուական օրինակից համեմատութեամբ Ռումեանցովի թանգարանի օրինակի, որ դադարեցրուած է ս. Էջմիածնի մատենադարանի ձեռագրի օրինակից և ընծայուած Ռումեանցովին 1814 թուին: Այդ ժամանակները դեռ Վրաստանի առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոսի նամակից, որ կցած է ձեռագրին և գրուած նոյն գրչագրութեամբ, որով գրուած է և ամբողջ ձեռագիրը, մենք իմանում ենք, որ կոմս Ռումեանցովը հիմնարկելով իւր նշանաւոր թանգարան-մատենադարանը, 'ի միջի այլոց, դիմել է և երջանկալիշատակ եփրեմ կաթողիկոսին և հայկական գրչագիր մատեանների օրինակներ է խնդրել իւր գրատան համար: Թէ ինչ խեղճ գրութեան մէջ է եղել այն ժամանակները Մայր-Աթոռի հարուստ մատենադարանը—, այդ երևում է այն հանգամանքից, որ երջանկալիշատակ կաթողիկոսը երկար որոնելուց յետոյ, կարողացել է գտնել մեր մատենագրների երկերից միայն երկու ձեռագիր օրինակ՝ Բարձրբերդեցու և Մատթէոս Ուռհայեցու պատմութիւնները, որ և ուղարկելով Թիֆլիս, հրամայել է Ներսէսին ընդօրինակել տալ նոցա և ուղարկել վեհադնեսայ Յովակիմ Եղիազարեանին կոմսին մատուցանելու համար: Վարդան Բարձրբերդեցու ձեռագիրը գրուած է եղել 1432 թուին, իսկ Մատթէոս Ուռհայեցունը 1688-ին: Դրասխանակերտեցու յառաջաբանում, բացի հեղինակի յայտնի համառօտ կենսագրութիւնից, արժանի են ուշագրութեան երկու կէտ՝ ձեռագիր օրինակների հանգամանքները, որոնց վերայից եղած է տպագրութիւնը, և Միքայէլ Չամչեանի կարծիքի քննադատութիւնը: Հրատարակիչը իւր տպագրութիւնը, ինչպէս անցեալ գլխի մէջ արդէն առիթ ունեցանք յիշելու, արել է Մսերի ձեռագիր օրինակից ըաղգատութեամբ Երուսա-

ղէմում 1843 թուին եղած տպագրութեան, իսկ Մսերը իւր ձեռագիր օրինակը, ինչպէս երևում է նորա նամակից, որ ամբողջապէս մէջ է բերուած յառաջաբանում, կազմել էր երեք օրինակից՝ իւր սեփական, որ նա ընդօրինակել էր Զմիւռնայում 1824 թուին. Յնովքեան Ստեփաննոս եպիսկոպոսի օրինակից, որ նա ստացել էր Ս. Էջմիածնում 1828 թուին, և. վերջապէս, Յովհաննէս վարդապետ Շահաթունեանցի օրինակից, որ նա բերել էր Կոստանդնուպօլսից և որ սրբագրուած էր 12 ձեռագիր օրինակների համեմատութեամբ: Միքայէլ Չամչեանը իւր «պատմութեան» երկրորդ հատորում խօսելով Յովհաննէս պատմաբանի մասին, ասում է, թէ նա, նախ, իւր պատմութեան առաջին մասը մինչև Աշոտ գրել է մինչև իւր կաթողիկոսանալը, վերջին մասը՝ իւր կաթողիկոս լինելուց յետոյ, երկրորդ, առաջին մասում նա իրան ցոյց է տալիս թշնամի Քաղկեդոնականներին, համարելով նոցա Նեստորական, իսկ երկրորդ մասում «նա յաւէտ հաճեալ է ընդ նոսա», ինչպէս այդ կարելի է տեսնել նորա Կոստանդին Պերփեռուժէն կայսեր գրած նամակից և հետևեալ խօսքերից՝ «իսկ իմ չուեալ գնացի 'ի գաւառն Դերջան և ամսօրեայ աւուրս ինչ 'ի նմա գետեղեալ թէպէտև ստէպ ստէպ հրաւիրակն կոչէր սիրալիր կամօք երթալ 'ի պալատն առ կայսր, սակայն ես ոչ կամեցայ զմտաւ ածեալ, թէ գուցէ գտցի ոք և ընդ ակամբ հայեսցի զանդ երթալն իմ՝ 'ի Քաղկեդոնիտսն յարակցեալ ինձ համարեալ: Եւ այդպէս ոչ կամեցայ գնալ 'ի գալթակղութիւն մտաց տկարաց»: Էմինը արգօյ պատմագրի այս կարծիքի մէջ որքան բառ, այնքան էլ սուտ է գտնում: Նորա կարծիքով Յովհաննէս պատմաբանը իւր պատմութիւնը գրել է միանգամից, շարունակաբար իւր ձեռութեան հասկում, ուրեմն, կաթողիկոսութեան ժամանակ, առա-

ջին մասը հակիրճ և համառօտաբար քաղուածք անելով նախկին հալ պատմագրների գրուածներէց, իսկ երկրորդ մասը պատմելով ընդարձակօրէն իբրև ականատես բոլոր անցած-գնացած անցքերին, ինչպէս այդ ապացոյց են տալիս թէ նորա յառաջաբանի և թէ բուն պատմութեան շատ տեղերը: Նա ապացոյց է տալիս, որ պատմաբանը թշնամի է Քաղկեդոնականներին ոչ միայն իւր պատմութեան առաջին մասում, այլ և երկրորդ մասում ևս, որ Չամչեանի ակնարկած խօսքերը բոլորովին հակառակն են ցոյց տալիս, որ կաթողիկոսի կայսեր գրած թուղթը ոչ մի խօսք, մինչև իսկ ոչ մի ակնարկ չի պարունակում իւր մէջ այն բանի մասին, որ իբրև թէ պատմաբանը իւր կաթողիկոս լինելուց յետոյ, յաւէտ հաճեալ է ընդ Քաղկեդոնիտս: Եմինը զարմանալով հարցնում է, թէ արդեօք ինչն է ստիպել Չամչեանին և նորա համահոխներին, ինչպէս, օրինակի համար, Քաբրիէլ Ալվազեանին, որ նոյն կարծիքը կրկնել է և հաղորդել Փէլիքս Լաժարին, անխղճաբար բռնաբարելով մեր հեղինակների գրուածները, ծուռ մեկնելով նոցա խօսքերի իմաստը: Եւ գալիս է այն եզրակացութեան, որ մեր նոր պատմագրի և նորա համախոհների միակ և միակ նպատակն է մի բարի ծառայութիւն մատուցանելու Հռովմայ եկեղեցուն, ցոյց տալով, որ հայերը Քաղկեդոնական են եղել և միայն նոր հայերն են, որ շեղուել են ճշմարիտ ճանապարհից: Իսկապէս ապացոյցի կարօտութիւն էլ չ'կայ, որ Յովհաննէս կաթողիկոսը, ինչպէս և նորա բոլոր նախորդները, հակաքաղկեդոնական են եղել. դորա համար բաւական է միայն կարգալ նորա երկասիրութիւնը, որ մարդ գալ այն եզրակացութեան, որ Չամչեանը և նորա համախոհները լոյսին խաւար են ասում և ընդհակառակը, քարոզելով, որ պատմաբանը կաթողիկոսական գահը բարձրանալուց յետոյ, յաւէտ հաճեալ

է ընդ նոսա», այսինքն ընդ Քաղկեդոնիտս: Մինչև իսկ Ֆրանսիացի Եւթէն Բորէն, որ ծանօթ է եղել մեր հեղինակի պատմութեան, այնպիսի կարծիք է կազմել նորա մասին, որ նա ոչ միայն հակաքաղկեդոնական է եղել, այլև գլխաւոր պատճառն է եղել, որ հայերը մնացել են «հերձուածողութեան» մէջ: Նա իւր դէպի արևելք արած ճանապարհորդութեան ժամանակ հասնելով Հայաստանի Բարձր-Հայքի Դարանաղեաց գաւառի Թորդան աւանը, միտքն է բերում, որ մի ժամանակ այդ կողմերը եկել է Յովհաննէս կաթողիկոսը և առաջարկում է կարգաւ նորա դէպի Դերջան արած ճանապարհորդութեան կտորը նորա պատմութիւնից, իւր կողմից հետևեալ տողերն աւելացնելով իւր ճանապարհորդական լիշողութիւնների մէջ՝ «Պատրիարքս այս, որոյ ամբարտաւանութիւն և յամառութիւն հաւասարի նորին իսկ հանճարոյ, մեծապէս պատճառ են լեալ թողեալ մնալով հայոց 'ի հերձուածողութեան, այսպէս պատմէ զիւր ուխտագնացութիւն»: 'Ի հարկէ, ով որ ծանօթ է հայոց եկեղեցու պատմութեան, երբէք չի համարձակիլ ասել, թէ հայերը հերձուածող են և կամ թէ մէկը, մանաւանդ Յովհաննէս պատմագիր կաթողիկոսը հայերի հերձուածողութեան մէջ յարատեւելու պատճառ եղած լինի, բայց այստեղ խնդիրը դորա մասին չէ: Այստեղ կարևորն այն է, որ Եւթէն Բորէն Դրասխանակերտեցուն հակաքաղկեդոնական է համարում: Միանգամայն անհասկանալի է, թէ Չամչեանը ընչից է եզրակացնում, որ մեր այդ հեղինակը «յաւէտ հաճեալ է ընդ Քաղկեդոնիտս»:

Եմինը ընդհանրապէս հաւանելով Միլիթարեանց գրական գործունէութեան, նոյն ժամանակ ատելով առտում էր նոցա առաքելութեան գործունէութիւնը և նոցա ձգտումը կրօնական պրոպագանդայի նպատակով

աղաւաղելու հայոց հին մատենագրների գրուածները և թիւր կարծիք տարածելու գիտնական աշխարհում հայոց ազգային եկեղեցու մասին: Նա կրօնական մոլեռանդութիւն շունչեր, ազգային եկեղեցու երգութեալ պաշտպան չէր, նա մինչև իսկ եկեղեցիների միութեան, բոլոր քրիստոնեաների մի հօտ և մի հովիւ լինելու սիրահար էր, բայց զանազան առաքելութիւնների, արուեստական կերպով սարքած պրոպագանդաների մեջ ջոյով քրիստոնեաների մէջ քրիստոնէութիւն տարածելը անազնուութիւն էր համարում: Նա հայոց ազգային եկեղեցին, ըստ ամենայնի, ուղղափառ էր համարում և հաստատում էր, որ ով որ միայն աշխատանք յանձն կառնի ուսումնասիրելու հայոց եկեղեցու դաւանութիւնը նորա իսկական, անսղտոր աղբիւրներից՝ եկեղեցական գրքերից, աղօթքներից, երգերից, հայ եկեղեցու հայրերի գրուածներից, նա ուրիշ համոզմունք չի կարող կազմել, ուրիշ եզրակացութեան չի կարող գալ, անքան այդ աղբիւրները մաքուր են, անքան նոքա ուղղափառ են: Այն բոլոր թիւր կարծիքները, որոնք տարածուած էին և տարածուած են հայոց եկեղեցու մասին արեւելեան և արեւմտեան քրիստոնեայ աշխարհներում, նա համարում էր արգասիք կամ տգիտութեան, կամ չար դիտաւորութեան: Թիւր կարծիքների մի մասը նա տգիտութեան արգասիք էր համարում, որովհետև նոցա յայտնողները թողնելով բուն աղբիւրները, կամ չկարողանալով նոցանից օգտուել, օգուտ են քաղել իւրեանց գրուածների համար կողմնակի, օտար, անմաքուր աղբիւրներից, որով և անգիտութեամբ սխալանքի մէջ են ընկել: Մի մասն էլ նա համարում էր արդիւնք չար դիտաւորութեան, որովհետև նոցա յայտնողները շատ գեղեցիկ իմանալով իւրեանց ձեռքի տակ եղած օտար աղբիւրների արժէքը և միջոց

էլ ունենալով օգտուելու բուն աղբիւրներէց, դարձեալ շարունակել են օգտուել նոյն աղբիւրներէց, որով և սխալանքի մէջ են ընկել գիտակցաբար: Իսկ այդ թիւր կարծիքների հիմք եղած օտար, կողմնակի աղբիւրները նա համարում էր միջնադարեան լատին կրօնաւորների և յոյն արեղանների տարեգրները, յիշատակարանները, փամանակագրութիւնները և պատմութիւնները: Լատին կրօնաւորները իւրեանց ունիտորական գործունէութեան ասպարիզում պատահած լինելով խիստ ընդգիմութեան ազգային եկեղեցու ներկայացուցիչների կողմից, յայտնի բան է, չեն կարողացել իւրեանց գրուածներում անաշտութիւն պահպանել և անկեղծութեամբ խօսել հայ եկեղեցու մասին. նոքա բնականապէս աշխատել են ստուեր ձգել հայ եկեղեցու վերայ, թիւր մեկնելով նորա դաւանութեան հիմունքը, ծիծաղելի ներկայացնելով նորա ծէսերը, կարգ ու կանոնները: Բիւզանդացի արեղաններն էլ իւրեանց քրոնիկոնները գրած լինելով հայոց եկեղեցու իւրեանց եկեղեցուց բաժանուելուց յետոյ, ատելութեամբ առլցուած լինելով դէպի Հայերը, որոնք յամառութեամբ շարունակում էին մնալ իւրեանց ազգային եկեղեցու ծոցում, ուշադրութիւն չ'դարձնելով ոչ կայսրների իշխանական պահանջի, ոչ նոցա տուած նեղութիւնների և ոչ նոցա խորամանկ առաջարկութիւնների վերայ, ի հարկէ, չեն խղճահարուել ամեն տեսակ անհեթեթ լուրեր, տեղեկութիւններ մտցնել իւրեանց գրուածների մէջ հայոց եկեղեցու մասին: Ահա այդ տեսակ թիւր տեղեկութիւնների հետեանք էր Եղուարդ Դիւրլոէի այն կարծիքը, որ նա յայտնել էր հայ եկեղեցու մասին իւր Մատթէոս Ուռհայեցու առաջին խաչակիր արշաւանքին վերաբերեալ հատուածի թարգմանութեան յառաջաբանում, հայերին «միաբնակ»

կոչելով⁴⁸⁾ և այդ տեսակ թիւը տեղեկութիւնների հետեւանք էր նշանաւոր Դեպքերի կարծիքը, որ նա յայտնել էր Հայոց եկեղեցու մասին իւր «Զրոյցներ քրիստոնէական եկեղեցիների միութեան մասին» յօդուածում⁴⁹⁾ Հայերին «Յակոբեկեան» կոչելով։ Վերջապէս, այդ թիւը տեղեկութիւնների հետեւանքն էր, որ ռուս հեղինակները անգիտակցաբար գործ էին ածում «Նեստորական և Եւտիքեան» տերմինները, երբ տեղը գալիս էր խօսելու Հայոց եկեղեցու և նորա դաւանութեան մասին, չենք ասում արդէն այն, որ ռուս ամբօր «армянинъ» և «армянинъ» բառերը համանիշ էր համարում։ Ահա այդ թիւը կարծիքները հերքելու և հայ եկեղեցու մասին ճիշտ հայեացք կազմելու համար է լինում, որ էմինը իւր գրական գործունէութեան մի մասն էլ նուիրում է Հայոց հոգեւոր գրականութեան։ Նա նախ և առաջ գրում է Դիւլօրէին, մատնացոյց է անում նորա սխալի վերայ և առաջարկում է նորան նախապէս ուսումնասիրել Հայոց եկեղեցու դաւանութեան իսկական աղբիւրները և յետոյ արդէն իւր կարծիքը յայտնել այդ մասին։ Փրանսիացի հայագէտը հետեւում է իւր գիտնական հայ բարեկամի խորհրդին, սկսում է ուսումնասիրել նորա ցոյց տուած աղբիւրները և, իւր առաջուկ կարծիքին հակառակ, բոլորովին ճիշտ եզրակացութեան է գալիս, որ և յայտնում է ա-

⁴⁸⁾ «Comme la majeure partie des ses Compatriotes, *ասում է Դիւլօրիէն այդ յառաջաբանում*, il (Matthieu d'Edesse) professait le monophisme, c'est-à-dire le dogme qui n'admet qu'une seule nature en Jesus-Crist, et qui fut condamné par le concile de Chelcédoine, en 451».

⁴⁹⁾ Դեպքերի Զրոյցները Թարգմանաբար տպագրուած են «Православное Обозрѣніе» ամսագրի 72 թուականի օգոստոսի համարում։

առնձին յօդուածով: Դիւլօրէին հետեւում են միւս թէ ֆրանսիացի, թէ բէլգիացի և թէ անգլիացի գիտնականները և կամաց-կամաց ճիշտ հայեացք է կազմուում հայոց եկեղեցու մասին բոլոր արեւմտեան Եւրոպայում: Անգլիացիք մինչև անգամ թարգմանում են մի ամբողջ շարք աղօթքներ հայերէնից և հրատարակում են նոցա երկու առանձին գրքովներով, որոնցից առաջինը սահմանում են հոգևորականների ընթերցանութեան համար, իսկ միւսը—աշխարհականների: Թէ առաջին և թէ երկրորդ գրքովի մէջ գտնուած աղօթքները սահմանուում են հաղորդուելուց առաջ կարդալու համար և թարգմանչի կողմից նուիրուում են՝ առաջինը Վալտեր Կերրին, իսկ երկրորդը—Սալիսբերեան եպիսկոպոսին: Այնուհետև էմինը ձեռնարկում է հերքելու և ուղղելու արեւելեան աշխարհում, մասնաւորապէս Ռուսաստանում տարածուած թիւր կարծիքները: Այդ նպատակով նա 1865 թուին թարգմանում է Ներսէս Լամբրոնացու «Ատենաբանութիւնը», որ հայ եկեղեցու խաղաղասէր հոգու և համբերող բնաւորութեան ամենալաւ արգասիքը կամ արտայայտութիւնը կարելի է համարել. 1864 թուին նա խմբագրում է «Очеркъ исторіи армянской восточной церкви», 1873 թուին նա թարգմանում է 14 հատ Շարական, որոնց մէջ պարզ կերպով երևում է հայ եկեղեցու դաւանութիւնը Քրիստոսի բնութեան մասին. 1861 թուին նա գրում է իւր «По поводу учения о единомъ естествѣ во Христѣ» յօդուածը. վերջապէս, 1879 թուին նա թարգմանում է և ամբողջ Շարականը, ուրի մէջ հետաքրքրուող ընթերցողը կարող է լիովին մեկնութիւն գրտնել իւր բոլոր երկբայութիւններին, տարակուսանքներին և կասկածանքներին հայ եկեղեցու դաւանութեան և վարդապետութեան մասին: Եւ այս բոլորը նա առաջ

տպագրում է կրօնական «Православное Обзорѣніе» ամսագրում, յետոյ հրատարակում է և առանձին գրքերով ու բրոշուրներով, որպէսզի կարողանալ, ըստ կեանքաց, ընթերցողներին մեծ «կոնտինգենտ» գտնել և որքան կարելի է մեծ ծաւալով տարածել նոցա ուսու հասարակութեան զանազան խաւերում: Բացի սորանից, նա իւր այդ գրուածներին յառաջաբաններում, ինչպէս, օրինակի համար, «Вступление къ Краткому очерку исторіи Армянской Восточной церкви» վերնագիր կրող յառաջաբանում, որ նա գրել է իւր խմբագրած «Очеркъ исторіи Армянской Восточной церкви» գրուածքի համար, նա մատնացոյց է անում բոլոր այն գրուածներին վերայ, որոնցից կարող են օգտուել հայ եկեղեցու իսկական դաւանութեան ծանօթանալու ցանկութիւն ունեցող ուսու ընթերցողները: Էմինի վերոյիշեալ հրատարակութիւններից Հայոց եկեղեցու հանգամանքներին տեղեկանալու տեսակէտից առանձին ուշադրութեան արժանի են նորա խմբագրած «Очеркъ»-ը ⁵⁰⁾ և դորա համար իբրև յառաջաբան կամ ներածութիւն գրած «Вступление»-ն և «По поводу

⁵⁰⁾ «Очеркъ Исторіи Армянской Восточной церкви»-ն մենք կոչում ենք խմբագրութիւն, որովհետև Էմինը միայն նորա աչքի է անցկացրել խմբագրել է, այսինքն լրացրել ու սրբագրել է: Այդ գրուածքը առաջ գրուել է մի հայի ձեռքով՝ ֆրանսերէն լեզուով և հրատարակուել է 1855 թուին Պարիզում ֆրանսիացի արեւելագէտներից մէկի աշխատութեամբ. դա կապմուտ է մի մասը կամ բաժինը այն գրքի, որ կոչւում է՝ «Histoire, dogmes, tradition et liturgie de l'eglise arménienne orientale etc»: Էմինի ցուցմունքով ուղղափառ քահանաներից մէկը, որ կամեցել է մի ստոյգ գաղափար կազմել Հայոց եկեղեցու մասին, թարգմանել է այդ գրուածքը ռուսերէն և Էմինի հսկողութեամբ ու խմբագրութեամբ տպագրել «Православное Обзорѣніе» ամսագրում:

ученія о единомъ естествѣ во Христѣ» յօգուածր: Մասնաւորապէս արժանի են ուշադրութեան այդ գրուածներում երեք կէտ՝ Հայոց քրիստոնէութիւն ընդունելու ժամանակը, հայոց եկեղեցու բաժանուելու հանգամանքները և հայոց եկեղեցու յունաց եկեղեցու հետ միանալու ձգտումները: Եմինը ապացոյց է տալիս, որ 312 թուին, այսինքն նախ քան Կոստանդինոս Մեծի քրիստոնէութիւն ընդունելը, քրիստոնէութիւնը Հայաստանում արդէն պաշտօնապէս ընդունուած կրօնքն է եղել, ուրեմն և Հայերը անդրանիկ քրիստոնեայ ազգն են: Նորա ապացոյցները երկու տեսակ են՝ մէկը ազգային Հայոց աղբիւրները՝ Ագաթանգեղոսը և Զենոբ Քլակը, որոնք ուղղակի ասում են, թէ հայերը արդէն քրիստոնեայ են եղել, երբ լուր է ստացուել Կոստանդինոսի դարձի մասին, միւսը օտար, յունացը—Եւսեբեայ ժամանակագրութիւնը, որ իւր IX գրքի 8 գլուխում մեզ հաղորդում է, թէ Մաքսիմինոս կայսրը պատերազմ հրատարակեց իւր ի վաղուց հետէ դաշնակից բարեկամ Հայերի դէմ, կամենալով նոցա քրիստոնէութիւնից հեռանալու թեան դարձնել: Հայերի Քաղկեդոնի ժողովը չընդունելը Եմինը վերագրում է հետեւեալ պատճառներին՝ Հայերը պարսից պատերազմի պատճառով չկարողացան ներկայ գտնուիլ ժողովին. Եւսեբէսի և Պիոսկորոսի կողմնակիցները, ի միջի այլոց, Հայաստանում ևս լուրեր էին տարածել, թէ ժողովը կամենալով խոյս տալ Եւսեբէսի մոլորութիւնից, ընկել է Նեստորի մոլորութեան մէջ. Լևոնի Թոմարի այն տեղը, որտեղ ասուած էր, թէ Քրիստոս ունէր երկու բնութիւն, որոնցից մէկը հրաշքներ էր գործում, միւսը ենթարկուած էր չարչարանքի, լաւ չէր թարգմանուած հայերէն: «Մէկը և միւսը» բառերը թարգմանուած էին հայերէն «Ոմն և Ոմն» բառերով, որ

Հայոց լեզուի հոգուն համեմատ գործ է ածուում միայն շնչաւոր առարկայի, անձի համար, և ոչ թէ անշունչ առարկայի համար: Այսպիսով Հայոց թարգմանութեան մէջ սոմարի գլխաւոր իմաստը «Ոմն» բառի գործածութեամբ փոխուած էր. «Ոմն և Ոմն» ոճը այնպէս էր գործածուած, որ նա վերաբերում էր ոչ թէ բնութեան, այլ անձին, որից և Հայերը եզրակացնում էին, որ ժողովը, ճիշտ որ, ընկել է Նեստորի մօլարութեան մէջ, երկու տարբեր անձն ճանաչելով Քրիստոսի մէջ: Յոյների մէջ այդ ժողովի վարդապետութեան մասին այնպիսի անհամաձայնութիւններ ծագեցին և այնքան երկար շարունակուեցին նոքա, որ Վասիլիսկոս կայսրը 475 թուին մերժեց այդ ժողովը, իսկ հետեւեալ Զենոն կայսրը 476 թուին հրատարակեց «Հենոտիկոնը», որով ոչ միայն մերժեց Քաղկեդոնի ժողովը, այլ և մինչև անգամ արգելեց խօսելու նորա մասին: Յունական բառերը՝ «Ֆիզիս, ուսիա և իպոստագիս» չէր կարելի ճիշտ թարգմանել, որովհետև Հայոց լեզուում իպոստաս կամ անձն բառը խառնուում էր ֆիզիս կամ բնութիւն բառի հետ: Այսպիսով երբ Յոյները ասում էին, թէ Քրիստոսի մէջ երկու բնութիւն կայ, Հայերը այնպէս էին հասկանում, որ Յոյները երկու անձն միացնում են միմեանց հետ: Վերջապէս, մի քանի յոյն և ասորի եպիսկոպոսներ 482 թուին հաւաքուելով Եդեսիայում, հանդիսաւոր կերպով մերժեցին Քաղկեդոնի ժողովը: Էմինը պնդում է, որ Վաղարշապատի ժողովից լեւոյ Հայոց եկեղեցին քանիցս ձգտումն է ցոյց տուել նորից միանալու Յունաց եկեղեցու հետ: 629 թուին Եզր կաթողիկոսը Կարնոյ ժողովում ընդունել է Քաղկեդոնի ժողովը. 647-ին Ներսէս Շինողը ճաշակուել է յոյն քահանայի ձեռքից. Յովհան իմաստասէրը 719—720 թուերին կայացած ժողովներում Հայոց եկեղեցու անունով

Հրապարակով խոստովանել է երկու բնութեան վարդապետութիւնը. 862 թուին Ձաքարիա կաթուղիկոսը սկսել է յարաբերութիւն ունենալ Փոտիաս պատրիարքի հետ և միացել է Յունաց եկեղեցու հետ. 966-ին Վահան կաթուղիկոսը միանալու նպատակով դաւանութեան թուղթ է ուղարկել Պոլեւկոս պատրիարքին և նորանից ուղղափառ ճանաչուել. վերջապէս, 1179 թուին Հռոմ-կլայի ժողովը Գրիգոր Դ. կաթուղիկոսի նախագահութեամբ և 33 գլխաւոր եպիսկոպոսների մասնակցութեամբ պաշտօնապէս ընդունել է Յունաց եկեղեցու հետ միանալու առաջարկութիւնը: Բացի այս բոլորից, էմինը «Очеркъ»-ի ներածութեան մէջ ձգտում է ապահովեցնել Հայերին իւրեանց ազգութիւնը պահպանելու վերաբերութեամբ, ասելով, թէ եկեղեցիներէ միութիւնը չի կարող վտանգ սպառնալ հայերի ազգութեան, որովհետեւ ահա Հայերի մի մասը թողել է իւր ազգային եկեղեցին և ընդունել է կաթոլիկութիւն ու բողոքականութիւն, բայց դորանով չի կորցրել իւր ազգութիւնը:

Որ Հայոց եկեղեցին ընդունելով երեք առաջին տիեզերական ժողովները, դաւանելով Քրիստոսի բնութեան խնդիրը այնպէս, ինչպէս որ դաւանում են Հայոց և ընդհանուր եկեղեցու բոլոր նշանաւոր հայրերը, Ուղղափառ է եղել և է-, այդ մասին կասկած լինել չի կարող, բայց որ երբ և իցէ Հայոց եկեղեցին ձգտումն ցոյց տուած լինի ընդունելու Քաղկեդոնի ժողովը, այդ ուղիղ չէ: Ծիշտ է, եղել են դէպքեր, ժամանակամիջոցներ, ինչպէս, օրինակի համար, 862—1179 թուերին, երբ Հայերը կամենալով վերջ դնել իւրեանց և Յունների մէջ եղած թշնամութեան, ձգտումն են ցոյց տուել միանալու Յունաց եկեղեցու հետ, բայց նոքա միանալ ասելով երբէք չեն հասկացել Քաղկեդոնի ժողովի ընդունելը: Չ'պէտք է մոռանալ, որ եզր կաթուղիկոսը Կար-

նոյ ժողովից յետոյ դաւաճան է ճանաչուել ու մեր-
 ժուել ազգից, Ներսէս Գ.ը ստիպուած է եղել հրաժա-
 րուել կաթողիկոսութիւնից, Վահանը գահընկէց է ե-
 դել, Ներսէս Լամբրոսացին և Գրիգոր Տղան հայրենի
 սուրբ աւանդութիւնը դրժող են հռչակուել արեւելեան
 եպիսկոպոսներէց: Չ'պէտք է մոռնալ և այն, որ
 862—1179 թուերի միանալու արձանագրութիւնները
 այնպէս են կազմուած եղել, որ նոցա մէջ ամենեւին յի-
 շուած չի եղել Քաղկեդոնի ժողովի ընդունելու խնդի-
 րը, ալ միայն պարզուած է եղել խնդրի զուտ դաւա-
 նաբանական մասը: Գուցէ, ասողներ լինին, թէ միա-
 նալն ու Քաղկեդոնի ժողովն ընդունելը համահաւասար
 բաներ են: Այո՛, բայց ոչ բոլորովին: Հայերը նշովելով
 Եւտիքէսին, նոյն ժամանակ մերժել են և Քաղկեդոնի
 ժողովը, որովհետեւ դա կանոնաւոր ժողով չի եղել, ո-
 րովհետեւ այդ ժողովին մասնակցող եպիսկոպոսները իւ-
 րեանց կարծիքները յայտնել են իշխանութեան ճնշման
 ներքոյ, որովհետեւ Լեոնի տօմարը այնպէս չի պարզել
 բնութեան խնդիրը, ինչպէս որ հասկանում էր Հայոց
 եկեղեցին, հետեւելով առաջին երեք տիեզերական ժո-
 ղովներին և Կիւրեղ Աղեքսանդրացու և Աթանաս Մե-
 ծի տուած մեկնութիւններին: Չենք կարծում, որ միայն
 Լեոնի տօմարի հայերէն սխալ թարգմանութիւնն եղած
 լինի պատճառ, որ Հայերը ուրիշ մեկնութիւն են տուել
 նորան, որ նոքա միշտ խուսափել են նորանից, «չար
 ու մարդախանձ տօմար» կոչելով նորան, որովհետեւ,
 բացի հայերէն թարգմանութիւնից, Բաբէլէն կաթողի-
 կոսը և առհասարակ Վաղարշապատի ժողովակառնները,
 որոնց մէջ, 'ի հարկէ, յունագէտներ ու լատինագէտ-
 ներ էլ կ'լինէին, անկասկած իւրեանց ձեռքին ունեցել
 են և յունարէն բնագիրը. չենք կարծում նոյնպէս, որ
 Հայոց լեզուն, որ հինգերորդ դարում իւր զարգացման

գազաթնակէտին էր հասել, դեռ այնքան աղքատ լինէր, որ չ'կարողանար ճշտութեամբ թարգմանել «ֆիզիս, իպոստասիս և ուսիս» բառերը. վերջապէս, մենք չենք կարծում, որ Հայոց եկեղեցին միանալուց յետոյ էլ կարողանայ պահպանել իւր ազգային գոյնը և ազգի պահպանութեան համար այնպիսի ամուր նեցուկ լինի, ինչպէս նա եղել է մինչև ցայսօր: Հայ կաթողիկէները, ճիշտ է, չեն կորցրել իւրեանց ազգութիւնը, բայց ո՞ր հայ-կաթողիկէները — հայածէսները, իսկ լատինածէսները կորել են հայութեան համար և կորչելու վերայ են: Չ'պէտք է մոռանալ, որ Լեհաստանի և Խտալիոյ բազմաթիւ կաթողիկ Հայերը և Հայաստանի Հայ-Հռոմէները կորան, իսկ ազգային եկեղեցուն հաւատարիմ մնացածները մինչև ցայսօր էլ դեռ կան: Ինչով էր կամենում հանգուցեալ Էմինը ապահովեցնել Հայերին, որ նոքա միանալուց յետոյ էլ կարող կ'լինին պահպանել իւրեանց ազգային-եկեղեցական ծէսերը, ժամասացութեան լեզուն և կրօնական աւանդութիւնները: Եւ յետոյ, միթէ հանգուցեալը հակասութիւն չէր տեսնում իւր գործողութիւնների մէջ, երբ 59 թուին Պաբրիէլ վարդապետ Ալվազեանի վարդապետարանի մի երկու մուտ տեղի պատճառով այնքան ալմուկ էր բարձրացնում, որ գործը հասնում էր իշխանութեան, իսկ 72 թուին ինքը ուղղակի միութիւն էր քարոզում արևելեան եկեղեցու հետ:

Ընդհանրապէս Էմինը կարծում էր, որ մեզ Հայերիս պէտք է մեր եկեղեցու դաւանութիւնը բարձրաբարբառ քարոզելու համար, եկեղեցական ընդհանուր ժողովով մի ընդհանուր դաւանութեան թուղթ կազմել, որպէս զի հնար լինի մէկ անգամ ընդ միշտ կարկելու չարախօսների բերանը և միջոց տալու ցանկացողներին պարզ և ճշգրիտ գաղափար կազմելու մեր

դաւանութեան մասին ամենայտաւ աղբիւրից: Ճիշտ է, մեր մէջ անցեալներում դաւանութեան թղթեր շատ են կազմուել, բայց դոցանից և ոչ մէկը ընդհանրութեան կնիք չի կրել. դոցա մի մասը առանձին-առանձին անձնաւորութիւնների գործ է եղել և համարուել անհատական համոզմունքի արգասիք, մի մասն էլ առանձին կուսակցութիւնների ձեռքի գործ և արգասիք զանազան քաղաքական դիտումների և նպատակների: Չ'պէտք է մոռանալ, որ հայերը քաղաքականապէս թոյլ լինելով, ստիպուած են եղել լաճախակի կամ յոյների, կամ եւրոպացիների օգնութեան դիմել: Բայց որովհետեւ ցանկալի օգնութիւնը խոստացուել է և տրուել է միայն եկեղեցիների միութեան պայմանով, այդ պատճառով էլ հայերը լաճախակի դաւանութեան թղթեր են գրել և տուել պահանջողներին, հայոց եկեղեցու դաւանութիւնը դոցա մէջ ներկայացնելով համեմատ կաթոլիկ կամ յոյն եկեղեցու դաւանութեան: Մի խօսքով, աշտեղ ևս կրկնուել է այն, որ տեղի է ունեցել Յունաց և արևմտեան եկեղեցիների յարաբերութեան մէջ: Յայտնի է, որ ժե. դարի կիսին Փլորենտինեան ժողովում Յոյները, որոնք այդ ժամանակները կարօտ էին պապի և արևմտեան թաղաւորների ձեռնտուութեան թուրքերի դէմ, ամեն տեսակ զիջողութիւն արին, մինչև անգամ ընդունեցին նոյն իսկ «filioque» դաւանութիւնը: Բացի ներսէս Շնորհալու և Գրիգոր Դ-ի դաւանութեան թղթերից, որոնցից առաջինը թարգմանաբար մէջ է բերուած Տրոյիցիկու ուսումնասիրութեան մէջ ⁵¹⁾, դա-

⁵¹⁾ Տրոյիցիկու ուսումնասիրութեան լիակատար վերնագիրն է՝ «Изложение вѣры церкви армянскія, начертанное Нерсесомъ, каволикосомъ армянскимъ, по требованію боголюбиваго государя Грековъ Мануила.—Историко-догматическое изслѣдованіе въ связи съ вопросомъ въ воссоединеніи армянской церкви съ православною. С.П.Б. 1875 г.»:

ւանութեան թղթի հալկական օրինակներ կարելի է գտնել այլ ևս հայկաթուղիկ արքեպիսկոպոս Աղեքսանդր Բաղբեանի «Պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց» գրքի մէջ, իսկ թարգմանական օրինակներ — Ասողիկի ռուս թարգմանութեան մէջ Էմինի թարգմանութեամբ, Կիրակոս Գանձակեցու Ֆրանսիական թարգմանութեան մէջ Բրոսսէի թարգմանութեամբ, Մատթէոս Ուռհայեցու Ֆրանսիական թարգմանութեան մէջ Դիւլօրէի թարգմանութեամբ և այլն։ Սոքա և սոցա նման բազմաթիւ թղթերից և ոչ մէկը պարտաւորեցուցիչ չի եղել Հայերի համար, ոչ մէկը չի ընդունուել ազգի ամբողջութեան կողմից իբրեւ հայ եկեղեցու զաւանուութեան հանգանակ, ուստի և Տրոյիցիին և նորա նմանները չարաչար սխալուել և սխալուում են, իւրեանց ուսումնասիրութիւնների հիմք ընդունելով Ներսէս Շնորհալու և միւսների զաւանուութեան թղթերը և նոցա հիման վերայ եզրակացութիւններ անելով հայ եկեղեցու զաւանուութեան մասին ընդհանրապէս։

ԳԼՈՂԻՄ ԺԳ.

Էմինի դիւցաբանական գրուածներն են՝

Ա. Объ Арѣ Прекрасномъ.

Բ. Очеркъ религіи языческихъ армянъ.

Գ. Ваханъ Вишапакахъ армянской мифологіи есть Индра Vritrahan Риг-Веды.

Դ. Отвѣтъ на замѣчанія Г. Патканова.

Այդ չորս գրուածքից մանաւանդ հետաքրքրական են վերջին երկուսը։ Ваханъ Вишапахъ-ахъ Ը, որ հանգուցեալը հրատարակել է 1873 թուին առանձին տետրակով, ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի փոքրիկ դիւցաբանական համեմատութիւն։ Իւր այդ համեմատութեան

մէջ հանգուցեալ գիտնականը հիմնուելով այն հանգամանքի վերայ, որ Հայոց հեղինակներից Ագաթանգեղոսը և Խորենացին Վահագնին ներկայացնում են վիշապներին քաղող, սպանող, ուրեմն և ախոյեան խաւարին, որ Անանիա Երևակացին և Փիլոն Եբրայեցու թարգմանը նոյն Վահագնին նույնացնում են արևի հետ, որ հայ հեղինակներից մի քանիսը «Ապողոն» անունը թարգմանում են Վահագն անունով, և որ, վերջապէս, վահագն բառը բաղկացած է «վահ» և «ագն» բառերից, որ նշանակում է «աստուած-արև», եկել է այն եզրակացութեան, որ Վահագն Հայոց դիւցաբանութեան մէջ արևի աստուած էր: Յետոյ նա քննելով հնդկական դիւցաբանութիւնը, գտել է, որ Ռիգ-վեդայի մէջ արևի աստուածը համեմատ Հայոց ագնին նոյնպէս կոչուում է Agni, իսկ ինդրա աստուածը շատ անգամ կոչուում է Agni, ուրեմն ինդրան նոյն Agni-ն է և դարձեալ նշանակում է արևի աստուած, ուրեմն և Հայոց Վահագն համապատասխանում է Հնդկաց Ռիգ-վեդայի ինդրային: Այդ ճանապարհով շարունակելով իւր հետազոտութիւնները, նա գտել է այն, որ Ռիգ-վեդայի ինդրան համարուում էր վիշապի լաղթող և հէնց այդ պատճառով կրում էր վռիտուահան մակդիրը, ինչպէս որ Հայոց վահագն վիշապներին քաղելու համար կոչուում էր վիշապաքաղ, ուրեմն և Հայոց վահագնի վիշապաքաղ մակդիրը համապատասխանում Ռիգ վեդայի ինդրայի վռիտուահան մակդիրին: Ահա այս բոլորի վերայ հիմնուելով նա, վերջապէս, եկել է մի ընդհանուր եզրակացութեան, թէ Հայոց Վահագն վիշապաքաղը Հնդկաց Ռիգ-վեդայի ինդրա վռիտուահանն է: Իմինը իւր այդ համեմատութեան մէջ, 'ի միջի ալոց, հարևանցօրէն մի քանի խօսք է ասում և հանգուցեալ Քերովբէ Պատկանեանցի «Нѣскольکو словъ о названіяхъ древнихъ ар-

МЯНСКИХЪ МѢСЯЦЕВЪ" գրուածքի մէջ գտնուած մի նկատողութեան վերաբերմամբ, որով և սաստիկ գրգռուում է նորան իւր դէմ և առիթ տալիս նորան խիստ և անարդար քննադատութեան ենթարկելու «Համեմատութիւնը»: Մենք ասում ենք խիստ և անարդար, որովհետև Պատկանեանցի քննադատութիւնը, բացի իւր յարձակողական ընդհանուր խիստ բնաւորութիւնից, պարունակում է իւր մէջ և այնպիսի ակնարկութիւններ, խօսքեր ու նախադասութիւններ, որոնք ոչ միայն թուլատրելի չեն մի լուրջ վիճաբանութեան մէջ, այլ և ուղղակի վիրաւորեցուցիչ են Էմինի անձնաւորութեան համար: «Замѣчанія на статью Г. Эмина Вахагн-Випапаках армянской мифологіи есть Индро Ври-трахан Риг-Веды», ինչպէս կոչուում է Պատկանեանցի քննադատութիւնը, ճգնում է հաստատել, որ Վահագն Ռիգ վեդայի իզրա-վուտուհանը չէ, այլ Ուեստայի վերետրագնան: Պատկանեանցը պնդում է, որ «վեհ» բառը Հայոց լեզուում երբէք չի գործածուել աստուած բառի նշանակութեամբ, որ Հայոց լեզուում օ երկարը, այսինքն Է-ն, չի փոխուում օ կարճի, այսինքն Ը-ի, ուստի և «վեստ կամ վէստ» բառից չի կարող գոյանալ «վրստահ», որ «փոր» բառը նշանակում է՝ чрево, впадина, ущелье և չի համապատասխանում սանսկրիտ «pru» բառին, որ Վահագնի երգի մէջ Էմինը սխալ է թարգմանել՝ Море разрѣшилось красненькимъ тростникомъ», այլ պէտք է թարգմանել՝ «И красненькій тростникъ въ морѣ былъ одержимъ муками», որ նոյն երգի մէջ սխալ է թարգմանուած՝ «И изъ пламени выбѣгалъ юноша», այլ պէտք է թարգմանել՝ «И въ пламени бѣгалъ юноша» և այլն: Պատկանեանցը «գիլլետանտ» է կոչում Էմինին և վերջացնում է իւր նկատողութիւնները, ասե-

լով՝ «Գործին պէտք է ձեռնարկել ըստ չափու կարողութեան. չե՞ս կարող գլուխ հանել, մի էլ ձեռնարկիր»։ Ահա այս քննադատութեան դէմ է գրել Եմինը իւր «Отвѣтъ на замѣчанія Г. Патканова», որ իւր խտուութեամբ շատ էլ լետ չի մնում Պատկանեանցի քննադատութիւնից, չ'նայելով, որ տպագրուածը դեռ երկրորդ, աւելի մեղմացրած խմբագրութիւնն է։ Պատասխանի այդ չափազանց խտուութիւնն է լինում պատճառը, որ հանգուցեալը իսկոյն չի կարողանում թուլատուութիւն ստանալ տպագրելու համար։ Նա առաջ իւր պատասխանը տպագրում է Վիեննայում և այնտեղից ուղարկում է Ս. Պետերբուրգի գրաքննչական ատեանը, բայց ատեանը արգելում է, առարկելով, որ այդ պատասխանը իւր խտուութեամբ կարող է վայր ձգել ուսանողների աչքին ուսուցչապետի վարկը։ Եմինը դիմում է տպագրական գործերի գլխաւոր կառավարութեան, որից և առաջ է գալիս մի երկար գրագրութիւն, որ, սակայն, ոչ մի դրական հետեանքի չի հասցնում նորան. գլխաւոր կառավարութիւնը հաստատում է գրաքննչական ատեանի վճիռը։ Այն ժամանակ նա մեղմացնում է իւր պատասխանի ոճը և մի քանի խիստ տեղերը և այդպիսի բարեփոխուած ձևով ուղարկում է Մոսկուայի գրաքննչական ատեանը և ստանում է տրպագրելու թույլտուութիւնը։ Նորա պատասխանի գլխաւոր նպատակը, բացի բուն հերքումից, լինում է և այն, որ նա ցանկանում է, որ իւր բրոշիւրը շուտով տարածուի գիտնական աշխարհում, որովհետեւ դորա մէջ նա նոր ապացոյցներով հաստատել էր, թէ Վահագնը աստուածութիւն է։ Հանգուցեալի մեր ձեռքին գտնուած նամակներից մէկում մենք հետաքրքրական մանրամասնութիւններ ենք գտնում «Պատասխանի» և նորա տրպագրութեան հանգամանքների մասին։ «Քո անցեալ

սեպտեմբերի 11-ից զբաժ նամակիդ, զբուժ է նա այդ մասին իւր ընկերին, ես միայն այժմ եմ պատասխանում, այսինքն չորս ամսից յետոյ (26 յունուարի 75 թ.): Իմ այսքան լուելուս պատճառը մի շատ հասարակ բան է — ժամանակ չունէի: Դորա վերայ եթէ աւելացնենք և իմ բնածին ծուլութիւնս, քեզ համար պարզ կլինի, թէ ինչո՞ւ ես այդքան երկար ժամանակ լուութիւն պահեցի: Կայ, սակայն, և մի երրորդ պատճառ, որ ինձ ստիպեց այդքան լետաձգել քո նամակիդ պատասխանը. ես կամենում էի միանգամից ուղարկել քեզ և՛ նամակս և՛ այն բրոշիւրը, որ սորա հետ միասին կստանաս: Դորա հրատարակութեան պատճառը ուսուցչապետ Պատկանեանցի յօդուածն է, որի մասին քեզ ասել է ՅՄ — քահանան ⁵²⁾, վերջինիս հօրեղբայրը, այն-

⁵²⁾ Այստեղ խօսքը բանաստեղծ Ռափայէլ Պատկանեանցի հօր յայտնի Տէր-Գաբրիէլի մասին է, որ մեռաւ 1889 թուին Պետերբուրգում 87 տարեկան հասակում: Թողնելով երեք որդի և երեք աղջիկ: Աւելորդ չենք համարում այստեղ մէջ բերել Պատկանեանց տոհմի համառօտ ազգաբանութիւնը, որից ընթերցողը կարող է տեղեկութիւն ստանալ այդ նշանաւոր տան սկզբնաւորութեան մասին և պարզ գաղափար կազմել Տէր-Գաբրիէլ քահանայի, Ռափայէլ Պատկանեանցի և Քերովբէ Պատկանեանցի ազգակցութեան մասին:

Տէր-Պետրոս Մինասիբ (1678—1744) Պօլսի Ղալաթիոյ եկեղ-

Տէր-Պետրոս Մինասիբ-օղլի (ծ. 1714) Պօլսի Ղալաթիոյ եկեղ-

Միքայէլ Ռեստէն (հեղ. բժշկարանի), Տէր-Գաբրիէլ (քահ. Ղալասուբաղարում), Սերովբէ Պատկանեանք.

Սերովբէ վարժ. Պատկանեան (1760—1836) Թիֆ. և Հաշտարի.

Գէորգ (աստիճ. Հ. Նախչ.), Տէր-Գաբրիէլ, Միքայէլ, Տէր-Պետրոս
1802—1889

Ռափայէլ Պատկանեանց Քերովբէ Պատկ.

քան խորհրդաւոր կերպով, և որ նա այնքան վարպետութեամբ թաքցրել է քեզանից, այն ինչ շտապել է նորան ուղարկել Տիգլանեանցին ⁵³⁾։ Պէտք է ասել քեզ, որ բրոշիւրս պիտի լոյս տեսնէր դեռ անցեալ տաւալ կիսին, որովհետեւ նա այն ժամանակ արդէն տըպագրուած, վերջացած էր Վիեննայում իմ այնտեղ եղած ժամանակ։ Վիեննայից գրուածքս օգոստոսին ուղարկուեց Ս. Պետերբուրգի գրաքննչական ատեանը, որ և արգելեց նորան, ինչպէս մի հրատարակութիւն, որ կարող է վալր ձգել ուսանողների աչքին ուսուցչապէ-

Տէր-Գաբրիէլը կամ, ինչպէս նորան կոչում է Էմինը, օչ—բաճանան ուսել էր Հաշտարեանի Ռուսաց Սեմինարիայում, 1817—1827 թիւը ուսուցիչ էր եղել տեղական Հայոց դպրոցում և դորա հետ միասին քարտուղարի պաշտօն էր վարել կոնսիստորիայում, 1827 թուին նա տեղափոխուել էր Նոր-Նախիջևան, 1832 թ. ձեռնադրուել էր քաջանայ, 1825 թ. տեղափոխուել էր Թիֆլիս Նորաշենի եկեղեցին և վարել էր Ներսիսեան դպրոցի տեսչի և կրօնուսոյցի պաշտօնները ու հրատարակել էր Արարատը, 1852 թ. նա վերադարձել էր Նոր-Նախիջևան, յարել էր Հայրապետեան կուսակցութեան և մեղադրուելով Խալիբին սպանելու փորձ անելու գործում, զրկուել էր քաջանայութիւնից և քսորուել հեռաւոր նահանգներից մէկը, 1867—1868 թուականներին նա ապառուել էր քսորից երջ. Գէորգ կաթմիջնորդութեամբ և տարուել էր Պետերբուրգ, Թէև նորան վերադարձրել էին քաջանայութիւնը, բայց նա արդէն քաջանայագործութիւն չէր անում, ուստի և այդ մտքով նա օչ—բաճանայ էր։

⁵³⁾ Այստեղ խօսքը Լազարեան ճեմարանի աշակերտ Սարգիս Աւետիքեան Տիգլանեանցի մասին է, որ 1830 թուին աւարտելով իւր ուսման ընթացքը Մոսկուայի համալսարանի բանասիրական բաժնում, եղել է ուսուցիչ Լազ. ճեմարանում, Նոր-Նախիջևանի գաւառական դպրոցում, Սիմֆերոպոլի գիմնապիոնում և տեսուչ Խալիբեան դպրոցում, նա մեռել և թաղուել է Եյսկում 1875 թուին։

տի վարկը: Նիշտ է, իմ բրոշիւրիս մէջ կային մի քանի խիստ ոճեր, որոնք առաջ էին եկել Պատկանեանցի տա-
րողը յօդուածի խտուրթիւնից, սակայն գրաքննչական
ատեանը ՚ի նկատի չէր առել վերջին հանգամանքը և
արգելք էր դրել բրոշիւրիս հասարակութեան մէջ տա-
րածուելու գործին: Ես այն ժամանակ ստիպուած եղայ
դիմել տպագրութեան գործերի գլխաւոր կառավարու-
թեան. սկսուեց մի երկար գրագրութիւն, որ շարու-
նակուեց մինչև անցեալ տարուայ վերջը և ոչ մի դրա-
կան հետեանքի չհասցրեց ինձ, բացի նորանից, որ
հաստատեց գրաքննչական ատեանի կարգադրութիւնը:
Այսպիսի հանգամանքներում ինձ մի բան էր մնում
անել՝ ձգել բրոշիւրից խիստ տեղերը և նորան այդ ձե-
ւով ներկայացնել Մոսկուայի գրաքննչական ատեանին:
Ինչպէս մտածել էի, այնպէս էլ արի: Ատեանը թույլա-
տրեց — և բրոշիւրս այժմ քո առաջդ է. կարգւ և պա-
րապ ժամանակդ ասա՛, ի՞նչ տպաւորութիւն է թող-
նում դա քո վերայ: Ես ուզում էի, որ իմ բրոշիւրս
տպագրուի և տարածուի հասարակութեան մէջ, ոչ
այնքան Պատկանեանցին ի նկատի ունենալով, որքան
այն նոր մեկնաբանութիւնները, որ ես արել եմ իմ
յարուցած խնդիրը նոր ապացոյցներով աւելի ևս հաս-
տատելու համար. Վահագնը — աստուածութիւն է: Իմ
բրոշիւրից ուղարկում եմ մի քանի օրինակ՝ մէկը քեզ,
մէկը Տիգրանեանցին, երրորդն էլ ուղարկիւր Ալթուն-
ջիին Թէոդոսիա — ես նորա հետ ծանօթացայ անցեալ
տարի Կարլսբադում —, և, վերջապէս, միւսները, ըստ
քո բարեհայեցողութեան, տո՛ւր նոցա, որոնք հետա-
քըքրուում են այդ խնդրով:

Եմինը հիմնուելով այն հանգամանքի վերայ, որ
Աւետական վերետրագնան քամիլիոնի պէս փոփոխ-
ւում է և զանազան առարկաների՝ հողմի, եզի, ձիու,

ուղտի, խոզի, պատանու, գառի, այծի, թռչունի և այլն կերպարանք է ընդունում, հերքում է Հայոց Վահագնի, որ անփոփոխ է և միշտ պահպանում է իւր մարդկային կերպարանքը, վերետրագնային համապատասխանելը և ցոյց է տալիս, որ այդ կարծիքը իսկապէս Պատկանեանցինը չէ, այլ Լազարդի և Վինդիշմանի, որոնց գտած նմանութիւնը Վահագնի և Վերետրագնայի մէջ հիմնուած է ոչ ներքին բովանդակութեան, այլ միայն արտաքին, անունների նմանութեան վերայ: Նա ապացոյց է տալիս, որ «վահ» բառը մի և նոյն «վեհ» բառն է, և Խորենացու «պիտոյից գրքից» բերած հատուածներով հաստատում է, որ «վեհ» բառը գործ է ածուում Հայոց լեզուում «գերտգոյն» բառի նշանակութեամբ, իսկ երբ առնում է « գիմորոշ յօդը կամ յոգնականի քն, դառնում է գոյական և նշանակում է «գերագոյն էակ կամ աստուած». նա ապացոյց է տալիս, որ Հայոց լեզուում է-ն կարող է փոխուել լի, ուրեմն և վեստ բառից, որ զենդական «vahn» բառի «vahnista» գերագրական աստիճանի կրճատուածն է, կարող է առաջ գալ «վրստահ, վրստահանամ» և այլն: Նա ապացոյց է տալիս, որ Հայոց «փոր» բառը, որ յաճախակի դրւում է տեղի, քաղաքի և գաւառի անունների վերջում, համապատասխանում է հնդկական «pru» բառին, որ նշանակում է «քաղաք» և հերքում է իւր հակառակորդի Հայոց «փոր» բառին վերագրած նշանակութիւնը — впадина, ущелье. նա, վերջապէս, հաստատում է, որ Վահագնի երգի իւր թարգմանութիւնը ճիշտ է, որ Պատկանեանցը չի հասկացել «երկն» բառի նշանակութիւնը, որ նա բացառական հոլովը ներգոյականի տեղ է ընդունել և, որ գլխաւորն է, „Красноныйкій тростникъ въ морѣ былъ одержимъ муками“ ոտանաւորը նա թարգմանել է ոչ հայերէն

քնագրից, այլ Լագարդի գերմաներէն թարգմանութիւնից և չի հասկացել գերմաներէն Geburtswehen բառի նշանակութիւնը: Էմիլի կարծիքով Պատկանեանցի նկատողութիւններն այնքան չնչին բան են, որ խկապէս չարժէր նոցա պատասխանել, իսկ եթէ ինքը պատասխանում է, այդ միայն նորա համար է, որ արեւելագէտներից շատ քչերն են, որ պարապում են Հայոց դասական լեզուի և դիւցաբանութեան ուսումնասիրութեամբ և որ համարձակութիւնը, որից անմասն չէ Պատկանեանցը, գիտական խնդիրներ վճռելու գործում յաճախակի Պատկանեանցի պէս հայկաբաններից և գործին բոլորովին անտեղեակ մարդկանցից ընդունւում է իբրև խորին գիտութիւն: Նորա ասելով Պատկանեանցը երբէք ինքը իւրը չի ասում, այլ միայն կրրկնում է, Ժողովրդականացնում է իւր ուսուցիչների արեւմտեան հայագէտների կարծիքները. նա ուրիշի խօսքերը խեղաթիւրոյ է և այն աստիճան անձնապատան է, որ մինչև անգամ վստահանում է ամենահմուտ թարգմանների գործերում ևս սխալներ գտնել և նոր մեկնութիւններ տալ թարգմանութիւնների լայն տեղերին կամ կտորներին, որոնք գիտնական աշխարհում արդէն ընդունուած, վերջացած են:

Առհասարակ շատ ծանր և ճնշող տպաւորութիւն է թողնում մարդու վերայ Էմիլի և Պատկանեանցի այդ վիճաբանութիւնը: Երկու յայտնի գիտնական, երկու բարձրագոյն դպրոցի հայկաբանութեան ամբիոնի ուսուցչապետ, ամբողջ Ռուսահայոց հայագիտութեան երկու ներկայացուցիչ մի հասարակ գիտական խնդիր վրձնելու գործում չեն կարողանում հանգիստ վիճել, չեն կարողանում գիտական լուրջ վիճաբանութեան յատուկ վայելչութեան չափը պահպանել: Նոքա վիրաւորում են միմեանց, հրապարակ են հանում իւրեանց կրքերը,

վատ բնագրումները, փողոցային լիշոցներ են թափում միմեանց գլխին, չենք ասում արդէն այն, որ նոքա այնքան մանրանում են, որ սկսում են մեղադրել միմեանց տգիտութեան մէջ ամենատարական բաներում անգամ, մինչև իսկ «բոց» բառի բացառական և ներգոյական հոլովների միմեանցից զատել չիմանալու խնդիր են մէջ բերում: Խրատական և միանգամայն բընորոշ է այդ վէճը մեզ համար: Խնչով պէտք է մեկնել այն հանգամանքը, որ երկու համարուեստ հայ չեն կարողանում միմեանց հետ հաշտ ապրել: Երկու հակաբանութեան հայ ուսուցչապետ ատելով ատում են միմեանց, երկու հակաբանութեան ուսուցիչ մի և նոյն դպրոցում սուր են քաշում միմեանց վերայ, երկու գիտնական հայ միմեանց տեսնել չեն կարող, երկու խմբագիր, երկու գրականագէտ միշտ թշնամի են միմեանց և ալսպէս մտքի և ձեռքի արդիւնաբերութեան բոլոր ճիւղերում: Իմինը ատում էր Պատկանեանցին, Նազաբեանցը չէր սիրում Իմինին, Նալբանդեանցը արիւնարբու թշնամի էր Այվազեանին, Ադամեանցը ոչ մի հայ դերասան չէր սիրում, Ռափայէլ Պատկանեանցը միայն իրան էր բանաստեղծ համարում և ալլն և ալլն: Ասենք, թէ քաղաքակրթութեան, կուլտուրայի պակասութիւնից է այդ, բայց միթէ հայը իւր կարգի ազգերից լծէ լաւաջադիմութեան ձգտումներով և թէ բարոյական լատկութիւններով ստոր է. ասենք, թէ վիճողների կրթութեան պակասութիւնից, զարգացման աստիճանի բարձր չ'լինելուց է այդ, բայց միթէ Պատկանեանցն ու Իմինը անզարգացած մարդիկ էին: Ի հարկէ, վիճելը, մրցելը, մինչև իսկ կռուելն էլ պէտք է. ամենայաւաջադէմ ազգերի ներկայացուցիչներն էլ վիճում են, ամեն տեղ էլ մրցողութիւն կայ, ամեն ազգի մէջ էլ կռուում են: Եթէ վէճը չ'լինէր, մտքերի փոխանակու-

Թիւն էլ չէր լինիլ, կէանքի, մտքի շարժում, լառաջադիմութիւն էլ չէր լինիլ, ալլ ա՛նքն տեղ կ'տիրէր թրմութիւն ու մեռելութիւն: Բայց վիճել էլ կա՛յ վիճել էլ, կռուել էլ է՛ա: Կռուել էլ. մերը փողոցալին վէճ է, մերը «Թալֆալական» կռիւ է: Խսդը՛ էութիւնը ալն է, որ մեր կռիւների ու վէճերի մէջ բարի նախանձ չ'էտ, որ ամեն դործի լառաջադիմութեան առհաւատչեան է, ալլ միայն չար նախանձ, ոխ, ատելութիւն, միմեանց տապալելու ցանկութիւն, ձգտումն: Էմինը և Պատկանեանցը իւրեանց ազգի հարազատ որդիքն են նորա բոլոր բնորոշ յատկութիւններով. նոքա ուրիշներից լետ չեն մնացել և վերոյիշեալ վէճով ժամանակին ու տեղին ցոյց են տուել, երևան են հանել իւրեանց ժառանգական յատկութիւնները:

Անհետաքրքրական չեն հանգուցեալի և առաջին երկու դիւցաբանական գրուածները՝ «Объ Арѣ Прокрасномъ» և «Очеркъ религии языческихъ Армянъ»: Յալտնի է ալն հայկական հեթանոսական աւանդութիւնը Յարալէզների միջոցով քաջարի մարդկանց 'ի մեռելոց յառնելու մասին, որ պատմում է Խորենացին, խօսելով Արա Գեղեցկի մասին: Էմինը այդ աւանդութիւնից, որ ալնքան խոր արմատ է ձգած եղել հայ ժողովրդի մէջ, որ պահպանուել է երկար ժամանակ մինչև անգամ ժողովրդի քրիստոնէութիւն ընդունելուց լետոյ էլ, ինչպէս այդ երևում է Փաւստոս Բիւզանդացու մէջ քերած պատմութիւնից Մուշեղ Մամիկոնեանի մասին և Եղնիկ Կողբեցու դատողութիւնից Յարալէզների մասին, եզրակացնում և հաստատում է, որ հեթանոս Հայերը հաւատացել են հոգու անմահութեան և մեռեալների յարութեան վարդապետութեան: Բացի սորանից, հանգուցեալ գիտնականը կործում է, որ հէնց այս հայկական հեթանոսական աւանդութիւնն է եղել, որ ծա-

ռայել է իբրև հիմք Պղատոնի յայտնի Եր-Հայի աւանդութեան, որ յոյն փիլիսոփան մէջ է բերում իւր «Հասարակապետութեան» մէջ: Դորանով նա, եթէ ոչ հաստատ, գոնէ, շատ հաւանական կերպով պարզում է մի խնդիր, որ մինչև 58 թուականը մուծ էր մնացել եւրոպական գիտնականների համար: Մինչև այդ ժամանակ բոլորեքեան էլ գիտէին, որ Եր-Հայի զրոյցը պատկանում է Պղատոնի գրչին, բայց չ'գիտէին, թէ ո՞ր ազգի և կամ ո՞ր տեղի աւանդութիւնն է, որ ծառայել է իբրև հիմք այդ զրոյցին: Ոմանք կարծում էին, որ Եր-Հայը ոչ ալ ոք է, եթէ ոչ նոյն ինքն Զրադաշտը, և մինչև անգամ մէջ էին բերում նորա գրքերից մէկի սկիզբը, բայց ֆրանսիացի գիտնական Կուզենը հերքում է այդ կարծիքը, ապացոյց տալով, որ այդ այդպէս չի կարող լինել, որովհետև Զրադաշտի հէնց այն գիրքը, որի սկիզբը բերուում է իբրև ապացոյց, անվաւեր է: Սակայն Կուզենը ընդունելով հանդերձ, որ յոյն փիլիսոփայի պատմածը մի հիմք պէտք է ունենայ, դժուարանում էր մատնացոյց անել մի այդպիսի ուրիշ աւանդութեան վերայ. նա միայն ենթադրում էր, որ յոյն փիլիսոփան այդ աւանդութիւնը առած պէտք է լինի արևելեան երկրներից իւր դէպի արևելք արած ճանապարհորդութեան ժամանակ: Եմինը հիմնուելով այն բանի վերայ, որ Հայոց Արան և Պամփիւլացի Երը վերին աստիճանի բարեպաշտ անձնաւորութիւններ են, որ նոքա երկուսն էլ պատերազմում մեռած զինուորներ են, որ նոցա երկուսի մարմինն էլ գտնում են պատերազմի դաշտում դիակների մէջ մի քանի օրից լետոյ բոլորովին անարատ և անտխեղծ, որ երկուսի մարմինն էլ հանում են բարձր տեղ-մէկինը խարոյկի վերայ, միւսինը վերնատուն, որ նոքա երկուսն էլ կենդանանում են—մէկը խարոյկի վերայ, իսկ միւսը Յարալէզների լի-

գելուց, և որ, վերջապէս, նոքա երկուսն էլ հայ են և կրում են համարեա միևնոյն անունը, կարծում է, որ Պղատոնը իւր զրոյցին հիմք հէնց ընդունած պէտք է լինի Հայոց Արայի աւանդութիւնը:

Թէև «Очеркъ религіи языческихъ Армянъ» գրուածքի մէջ Եմինը մեզ ներկայանում է ոչ իբրև հետազօտող և քննող, այլ միայն իբրև հաւաքող և զեկուցանող, բայց այնուամենայնիւ դա մեր գրականութեան մէջ առաջին ամփոփ տեսութիւնն է իւր բովանդակութիւնը կազմող նիւթի մասին և, կարելի է ասել, հիմքն է համարուում բոլոր յետագայ տեսութիւնների, հետազօտութիւնների, ուսումնասիրութիւնների նոյն նիւթի մասին: «Очеркъ»-ը, որ թարգմանուել է Ֆրանսերէն Ստադլերի աշխատութեամբ և այդ վերջինից էլ հայերէն Յովհաննէս Տէրոյեանցի աշխատութեամբ, ինչպէս երևում է, միայն առաջին փորձն է եղել հանգուցեալի ապագայում նոյն նիւթի մասին գրելիք աւելի կատարեալ, աւելի մշակուած ուսումնասիրութեան, ինչպէս որ «վէպք հնոյն Հայաստանի»-ն առաջին փորձն ու կարապետն էր նորա «Մովսէս Խորենացին և Հայոց վէպերը» գրուածքին: Հայոց հին կրօնքի ուսումնասիրութեան աւելի մշակուած հրատարակութիւնը պէտք է կազմէր մի ուրիշ մենագրութիւն «Հայոց հեթանոսութիւնը» վերնագրով, որ պէտք է ծառայէր նոյն նպատակին, որին ծառայում էին նորա «Моисей Хоренскій и древній эпостъ армянскій» և «Династическій списокъ Хайкидовъ», և որ նա չ'կարողացաւ հրատարակել: Դորա համար նա 64 թուականից, այսինքն իւր Очеркъ-ը հրատարակելուց յետոյ, շատ նիւթ էր ժողովել, թէ իւր բարեկամների միջնորդութեամբ ժողովրդական հաւատալիքները հաւաքելով և թէ Հայոց հեթանոսութեան մասին գրող հեղինակների գրուածները ուսումնասիրե-

լով: «Իմ գլխումս զանազան մտքեր են պտույտ գալիս, որ պէտք է իրագործել, գրում է նա այդ մասին իւր ընկերին 79 թուի դեկտեմբերի 28 ին. մտածում եմ երեք մենագրութեան մասին՝ «Շամիրամի զրոյցի մասին հայկական աղբււրների համեմատ», «հայկական վէպի մասին», որից մեծ հատուածներ եմ գտել Խորենացու մէջ և «Հայոց հեթանոսութեան մասին», որի համար առատ նիւթ եմ ժողովել»: Թոյլ տուր այժմ, սիրելի Սերգէյ Դանիլովիչ, դարձեալ գրում է նա նոյն նիւթի մասին իւր ընկերին, խնդրել քեզանից-հաղորդել ինձ, եթէ միայն կարելի է ոգիներին վերաբերեալ այն հաւատալիքները և ուրիշ այդպիսի բաներ, որոնց մասին դու լիջում ես քո նամակումդ, այն հաւատալիքները ու զրոյցները, որոնք պահպանուել են Ղուբի Հայերի մէջ, կամ, ճիշտը ասել, հայ պառաւնների բերանում, և որոնք վերաբերում են մեր հեթանոսութեան: Ես դոցանից կօգտուէի իմ «Очеркъ религии языческих Армянъ» գրութեմքս հրատարակելու ժամանակ ⁽⁵⁴⁾:

ԳԼՈՒԽ ԺԴ.

Էմինի հնագիտական ճիւղին պատկանած գրութեաներն են՝

⁵⁴⁾ Գ. Խալաթեանցը Էմինի երկասիրութիւնների չորրորդ հատորում խօսելով հանգուցեալի մահից յետոյ մնացած ձեռագրերի և անտիպ գրութեաների մասին, 'ի միջի 'այլոց, յիշում է և այդ նիւթերի մասին «Հայկաբանի տասնութէկ անտիպ գրութեանց, ասում է նա, իննը հրատարակուած են արդէն Յաննաժողովի լոյս ընծայած հատորներում. մնում են դեռ անտիպ՝ Քիոսի Գրիգոր եպիսկոպոսի եկեղեցիների միութեան մասին ծանօթ երկի հայերէն թարգմանութիւնը և մանր թերթերի վերայ գրուած մի քանի նիւթեր և պատահական նկատողութիւններ հայ դիւցաբանութեան վերաբերմամբ»:

Ա. Арія и Анарія.

Բ. Еврейскіе переселенцы въ древней Арменіи.

Գ. Мидійцы въ древней Арменіи. Новое толкованіе, данное Жюлемъ Оппертомъ слову „Астіагъ“.

Դ. Армавиръ.

Ե. О Цадахъ.

Այս գրուածներէց առանձին ուշադրութեան արժանի է մանաւանդ „Мидійцы въ древней Арменіи“: 1879 թուին Էմինը Հնագիտական Ընկերութեան նիստերէց մէկում կարդացել էր իւր „Еврейскіе переселенцы въ древней Арменіи“ ըեֆերատը, որի մէջ ամփոփել էր Հրէից գաղութի պատմութիւնը Հայաստանում Խորենացու և Փաւստոսի հիման վերայ: Դ՞ո՞ւն տեսակ ըեֆերատ է և նորա „Мидійцы въ древней Арменіи“-ն, որ նա կարդացել է նոյն Հնագիտական Ընկերութեան նիստերէց մէկում հետևեալ 1881 թուին և որին նա կցել է „Новое толкованіе, данное Жюлемъ Оппертомъ слову „Астіагъ“ փոքրիկ քննադատութիւնը: Բացի Հայաստանում եղած Մարաց գաղութի պատմութիւնը անելու նպատակից, Էմինը ալ ըեֆերատը գրելու ալ ևս երկու գլխաւոր նպատակ է ունեցել: Նախ, նա դորանով ցանկացել է մատնացոյց անել այն տարբերութեան վերայ, որ կայ Խորենացու պատմութեան և Ընդհանուր պատմութեան մէջ Աժդահակի վերաբերութեամբ, կամեցել է ցոյց տալ գիտնական աշխարհին, որ միանգամայն անարդարացի և խախուտ հիմունք է Աժդահակի կեանքի վերջին տարիների և նորա մահուան հանգամանքների վերաբերմամբ թողնելը միւս աղբիւրները և միայն Հերոդոտոսի պատմածներով առաջնորդուելը, երկրորդ, նա

դորանով կամեցել է քննադատել Օպաերտի կարծիքը: «Աստիադ» խօսքի մասին, որի պարզաբանութեան համար, ի հարկէ, հարկաւոր էր, որ գիտնական տշխարհը ծանօթ լինի Մարաց Հայաստան գաղթելու հանգամանքներին: Էմինի կարծիքով թէև Մարաց և Հայոց յարաբերութիւնների մասին ոչ մի տեղեկութիւն չեն հաղորդում Հերոդոտոսը և Կտեզիասը, բայց այնուամենայնիւ Խորենացու այդ մասին պատմածները թէ արժանահաւատ են և թէ պատմական հիմք ունին: Պէտք է ի նկատի առնել այն, որ Խորենացին ծանօթ էր և Հերոդոտոսի և Դիոդոր Սիկիլացու պատմածներին Աթդահակի մասին, բայց և այնպէս իւր պատմութեան մէջ Տիգրանի և Աթդահակի յարաբերութիւնների մասին խօսելու ժամանակ նա ամենեւին չի հետևում նոյա: Այդ նորա համար է, որ նա ցանկացել է ուրիշ տեսակ պատմել այդ պատմութիւնը, պատմել այնպէս, ինչպէս որ այդ պատմուում էր հայ ժողովրդի վէպի, աւանդութիւնների մէջ: Իսկ վէպը և ժողովրդական աւանդութիւնները մի այնպիսի արժանահաւատ աղբիւր են հնագոյն պատմութեան համար, որ արժէ, որ նոցա վերայ հիմնուած պատմական հանգամանքներին աւելի մեծ հաւատք ընծայեն գիտնականները: Չպէտք է մոռանալ այս դէպքում այն հանգամանքը, որ, բացի այն աւանդական պատմութիւնից Աթդահակի մասին, որ մէջ է բերում Հերոդոտոսը և որ ընդունուած է ընդհանուր պատմութեան մէջ իբրև ճշմարտութիւն, նոյն Աթդահակի մասին Պարսկաստանում կային և ուրիշ զրոյցներ ու աւանդական պատմութիւններ: Հալիկարնասեսան պատմագէրը աւանդելով մեզ Աթդահակի պատմութիւնը, ուղղակի նկատում է, որ բացի իւր մէջ բերած աւանդութիւնից, որ նա լսել է արժանահաւատ մարդկանցից, Պարսկաստանում կային այլ ևս երեք տեսակ աւանդա-

կան պատմութիւն նոյն առարկայի մասին: Կտեղիասը, որ իբրեւ Արտաշէս արքայի բժիշկ երկար ժամանակ ապրած լինելով Պարսկաստանում, միջոց էր ունեցել ուսանել պարսից լեզուն և իւր «Պարսկական պատմութիւնը» գրելու համար օգտուել էր թագաւորական դիւանից, ամենեւին հաւատ չի ընծայում Հերոդոտոսին: Նա նորա պատմածները Աթափասի մասին առասպել է կոչում, իսկ իրան Հերոդոտոսին—ստախոս, և ինքը բոլորովին ուրիշ տեսակ է պատմում նոյն պատմութիւնը: Բացի սորանից, Պարսկաստանում ժողովրդի բերանում պտտում է եղել և մի ուրիշ զրոյց Կիւրոսի և Տիգրանի մասին, որ մէջ է բերում Քսենոփոնտը իւր «Խրատ Կիւրոսի» կոչուած վիպասանութեան մէջ, Հայոց Տիգրանին յաղթուած և ամբողջ ընտանիքով Կիւրոսի ձեռքը գերի ընկած ներկայացնելով հակառակ Խորենացու պատմութեան, որ, ինչպէս յայտնի է, Տիգրանին է յաղթող և նուաճող ներկայացնում: Այսպիսով դուրս է գալիս, որ Պարսկաստանում մի և նոյն դէպքերի մասին գոյութիւն են ունեցել վեց տեսակ զրոյց, որոնցից իւրաքանչիւրը իւր տեսակէտից է պատմում, պարզաբանում եղել Աթափասի մահուան և Մարաց թագաւորութեան անկման հանգամանքները: Էմինը կարծում է, որ մի այդպիսի զրոյց էլ նոյն դէպքերի մասին գոյութիւն է ունեցել և Հայաստանում և որ հէնց այդ զրոյցն է, որ Խորենացին մէջ է բերում իւր պատմութեան մէջ: Ուրեմն բոլոր զրոյցների թիւը եղել է ոչ թէ վեց, այլ եօթ, որոնցից մեր ձեռքը այժմ հասել է միայն չորսը՝ Հերոդոտոսինը, Կտեսիասինը, Քսենոփոնտինը և Խորենացունը: Այս այսպէս լինելով, Էմինը զարմանում է, որ գիտնականները ընդունում են իբրեւ ճշմարտութիւն միայն Հերոդոտոսինը, առանց ուշադրութիւն դարձնելու միւսների և մանաւանդ

Հայոցի վերայ, Հայոցի, որ իւր ընդդէմակութեամբ, նկարագրութեան գեղեցկութեամբ, մանրամասնութեամբ և պատմական նիւթի առատութեամբ ոչ թէ միայն պակաս չէ, այլ և գերազանց է Հերոդոտոսինից: Ի հարկէ, այդ զրոյցներէից իւրաքանչիւրն էլ, ինչպէս արդէն նկատեցինք, իւրեանց տեսակէտից են ներկայացնում դէպքերը. Պարսից վիպասանները Կիւրոսին են յաղթող ներկայացնում, Հայոց վիպասաններն էլ իւրեանց թագաւորին են յաղթող դուրս բերում: Եմինը Հիմնուելով այն հանգամանքի վերայ, որ զրոյցների թիւը շատ է եղել, որ Տիգրանն ու Կիւրոսը, ինչպէս ցոյց են տալիս վերոյիշեալ զրոյցները, ժողովրդականութիւն են վայելելիս եղել նոյն ժամանակներում բոլոր արեւմտեան Ասիայում, անհաւանական չի համարում, որ իսկապէս Տիգրանը եղած լինի Աժդահակին յաղթողը, սպանողը և նորա երկիրը աւերողը ու ժողովուրդը գերողը, որին ապացոյց կարող է համարուել և Հայաստանում եղած Մարաց գաղութը: Եմինը հերքում է այն նոր բացատրութիւնը, որ տալիս է Մարաց վերջին թագաւորի անուան սեպաձև տառերի յայտնի մեկնաբանող Ժիւլ Օպպերտը իւր «Le peuple et la langue des Mèdes» գրքում: Յայտնի է, որ յոյն պատմագրները երեք տեսակ են կոչում Աժդահակին՝ Աստիագէս, Աստիգաս և Ասպադաս: Առաջինը, որ Հերոդոտոսինն է, համարուում է ամենականոնաւորը, իսկ երկրորդը, որ գործ է ածում Փոտիասը, և երրորդը, որ գործ է ածում Դիոդորոս Սիկիլացին, Աստիագէս բառի սխալ տառադարձութեան և աղաւաղ արտասանութեան հետեւանք են: Եւրոպացի արեւելագէտները Աստիագէս բառից յապաւելով անուանական օս վերջաւորութիւնը, ստանում են Աստիագ բառը, որ և առաջ եկած են համարում պարսկական-գենդական Aji Dahaka բառից. նոքա իւրեանց այդ կար-

ծիրը հաստատում են Հայոց Աժդահակ բառով, որ իւր նշանակութեամբ և տառադարձութեամբ նոյն Aji Dahaka բառի աւելի պարզ հայկական ձևն է և ըստ ամենայնի համապատասխանում է լուսական Աստիագ բառին: Օպպերտը չի ընդունում իւր նախորդների մեկնութիւնը և մի կողմ թողնելով Աստիագէս և Ասպագաս բառերը, առնում է Աստիագաս բառը և մեկնում է նորան պարսկական aristyuga բառով, որ, նորա արելով, նշանակում է՝ „joinant des lances կամ combattant avec des lances“: Նա չի ընդունում և այն, որ Հայոց Աժդահակ բառը պարսկական Aji Dahaka-ի հայկական ձևն է, այլ կարծում է, որ Հայերը, որոնք իբր թէ արևելեան պաշտօնութիւնը մեծաւ մասամբ առել են Յոյներից, Աստիագ բառը փոխել են Աժդահակ: Էմինը ապացոյց է տալիս, որ Հայերը իւրեանց Աժդահակ բառը փոխ են առել ոչ թէ Յոյներից, այլ Մար-պարսիկներից, որ երևում է հէնց նորանից, որ թէ գենդական Aji Dahaka և թէ հայկական Աժդահակը նշանակում են օձ, կամ, լաւ է ասել, վիշապ: որ Աժդահակի գերուած և Հայաստան տարուած ընտանիքը և սերունդը կոչուում են վիշապներ և վիշապազունք, որ Մեղացիք և նոցա երկիրը Հայոց պատմութեան մէջ կոչուում են Մարք, որ, առանց լոգնականի նշան + տառի, համապատասխանում է նոր Պարսկական «մար» բառին, որ նոյնպէս նշանակում է օձ և այլն: Մենք ասացինք, թէ այս բեֆերատը Էմինը կարդացել է Մոսկուայի Հնագիտական ընկերութեան նիստերից մէկում 1881 թուին⁵⁵): Հանգու-

⁵⁵) Էմինը իսկապէս իրան նպատակ էր դրել Հնագիտական Ընկերութեան նիստերում մի շարք բեֆերատներ կարդալու Հայաստանում հաստատուած օտար գաղութների մասին, բայց մեզ անյայտ պատճառով կարողացաւ միայն կարդալ Հրէից և Մուրաց մասին: Նոցա մէջ ինչպէս մենք այդ տեսնում ենք:

ցեալը այդ ընկերութեան պատուաւոր անդամներից մէկն էր և ընդհանրապէս շատ էր հետաքրքրուում ընկերութեան գործունէութեամբ. նա օգնում էր նորան, թէ անձամբ մասնակցելով նորա զբաղմունքներին և թէ իւր խորհուրդներով: Ընկերութեան նախագահ յայտնի Սերգէյ Ուվարով կոմսը և նորա ամուսինը շատ սիրում էին Էմիլին և փոխադարձաբար յարգուում էին նորանից: Ահա այդ փոխադարձ սիրոյ և յարգանքի հետևանքը պէտք է համարել և այն հանգամանքը, որ ութսունական թուականներից ընկերութիւնը սկսում է աւելի հետաքրքրուել հայկական գործերով, աւելի զբաղուել հայկական հնութիւններով: Հանգուցեալ կոմսի խնդիրքով Էմիլն այդ ժամանակները կազմել էր մի բաւականին ընդարձակ տեղագրական ցուցակ կամ ծրագիր «О ПАМЯТНИКАХЪ ДРЕВНОСТЕЙ ВЪ РУССКОЙ АРМѢНІИ» վերնագրով, որի մէջ նա մատնացոյց էր արել Ռուսահայաստանում գտնուած այն բոլոր պատմական տեղերի վերայ, որտեղ, իւր կարծիքով, պէտք էր հնագիտական պեղումներ ու հետազոտութիւններ կատարել: Նա Հայոց պատմագրների, մասնաւորապէս Խորենացու պատմութեան հիման վերայ տեղագրել էր Սարգարաբաղից դէպի հիւսիս-արեւմուտ Արագածի ստորոտում գտնուած Թալինը իւր հին եկեղեցիների և մատուռների աւերակներով և տասերորդ դարի արձանագրութիւններով, Թալիշը իւր հին աշտարակով և 671 թուականին հիմնարկուած և հին արձանագրութիւններով ծածկուած հոյակապ եկեղեցիով, Արշակունեաց ձմեռոց Աշ-

արած նորա Հրէից մասին կարգացած ընթերատում: Նա պէտք է գլխաւորապէս ուշադրութիւն դարձնէր գաղթականների բռնակութեան տեղերի վերայ և աշխատէր, ըստ կարեաց, ճիշտ որոշել նոցա այդ տեղերի տեղագրութիւնը հնագիտական նպատակով պեղումներ անելու համար:

նակը և պատմական Վժան, Տեղեր և Աղց գիւղերը իւրեանց հին աւերակներով, Վաղարշապատը և նորա շրջակայքում գտնուած Օշական, Մուղնի և Կարբի գիւղերի աւերակները իւրեանց շէն և խանգարուած եկեղեցիներով ու վանքերով, Ս. Գրիգորի հիմնարկած և Զ և Ը դարերում վերանորոգուած և բազմաթիւ հին արձանագրութիւններով ծածկուած նշանաւոր Յանավանքը, Արարատի շրջակայքը և մասնաւորապէս Փոքր-Մասիսի գլխին գտնուած «Օղուզների գերեզմանները», Երևանը և նորանից դէպի հարաւ արեւելք և հալաւ-արեւմուտք գտնուած Դուինը, Արտաշատը, Գառնին, «Տըրդատայ թախտը», 1214—1288 թուականներին ապառաժի մէջ փորուած Գեղարդը կամ Ալրի-վանքը, Գեղամայ ծովակը իւր Սևան կղզիով և հին վանքերով, Հին-Նախիջևանը և նորա քաղաքային դարպասի մօտ գտնուած «Նոյի գերեզմանը» և այլն: Բացի Ալրարատ և Սիւնիք նահանգներից, որ հանգուցեալ գիտնականը նպատակ է ունեցել տեղագրել, նա վերոյիշեալ տեղագրական ցուցակին կամ ծրագրին կցել է և Գուգարաց նահանգի մի մասի և Հայ-Աղուանից աշխարհի հնութիւններից մի քանիսի տեղագրութիւնը: Նա մատնացոյց է արել Զորոփոր, Ծորոփոր և Կողբոփոր գաւառների վերայ⁸⁶⁾ և տեղագրել է Զորոգետքի Հաղբատ և 967 թուին Խոս-

⁸⁶⁾ Հատ հետաքրքրական է Էմինի կարծիքը այդ Զորոփոր, Ծորոփոր և Կողբոփոր գաւառների մասին: Նա դոցա «փոր» վերջաւորութիւնից եզրակացնում է, որ մի ժամանակ այդ տեղերում պէտք է բնակուած լինին Հնդկաստանցիք, որովհետեւ Հայոց «փորը» համապատասխանում է Սանսկրիտ «քա» բառին, որ նշանակում է «քաղաք»: Իսկ որ Հայաստանում Հնդկաց գաղթականութիւն եղել է,—այդ երևում է Զենոբ Գլակի պատմութիւնից, որ իւր մէջ տեղեկութիւն է պարու-նակում Տարօնում հաստատուած մի այդպիսի գաղութի մասին:

րովանոյշ Թագուհու շինած Սանահին վանքերը, Բագ-
րատունեաց Թագաւորների գերեզմանները, Իվանէ և
Ջաքարէ սպասաւորների քոյր Թագուհի Նանէի շինած
«միծ կամուրջը» իւր հին արձանագրութեամբ, Օձուն
գիւղը և նորա մօտ գտնուած և Սմբատ Տիեզերակալի
գերեզմանը համարուած հոյակապ դամբարանը, նշանա-
ւոր Քորալը վանքը և Արդուն գիւղի այրերը, «Կարմիր
կամրջի» մօտ գտնուած և այժմ Գեօղալէ կոչուած Հը-
նարակերտ քաղաքի աւերակները, Աղուանից Պարտաւ
մայրաքաղաքի, իսկ այժմ Բերդէ գիւղի աւերակները,
Խաթրավանքը, Խօթավանքը կամ Դադիվանքը 1214
թուին շինած և մինչև ցայսօր դեռ կանգուն մնացած
եկեղեցիով և այլն և այլն։ Սակայն այս բոլոր տեղերից
ու հսութիւններից մանաւանդ զբաւել է նորա ուշագ-
րութիւնը Արմաւիրը, որի տեղագրութեան նա նուիրել
է մի թէև համառօտ, բայց ամփոփ յօդուած «Арма-
виръ» վերնագրով, որ նույնպէս կարդացուել է Հնագի-
տական ընկերութեան նիստերից մէկում։ Թէ երբ է ան-
մարդաբնակ դարձել ու աւերուել Արմաւիրը, մեզ յայ-
տնի չէ. մենք միայն գիտենք, որ նա Հայոց ամենահին
մայրաքաղաքն է եղել և շէն է եղել դեռ հինգերորդ
դարում, իսկ նորա աւերակները գոյութիւն են ունեցել
մինչև 1819 թուականը, երբ Երևանի սարդարը նորա
քարերով շինել է տուել Սարգարաբադը մասամբ և Շահ-
րիար գիւղը։ Էմինը հիմնուելով Խորենացու պատմու-
թեան Բ. գրքի Դ և ԼԹ գլուխների վերայ, որոնց մէջ
«Արմաւիր» անունը վերագրուում է ոչ թէ քաղաքին,
այլ այն բլուրին, որի վերայ նա շինուած է եղել, կար-
ծում է, որ Արմաւիրը իւր անունը ստացել է ոչ թէ
Արմաւիսից, ինչպէս ասում է Խորենացին, այլ իւր տե-
ղից։ Նա նորա տեղը որոշում է, հիմք առնելով Օշա-
կան գիւղը, որ շինուած է Քասախ գետի ափին, որի

մէջ ոչ հեռու գիւղից թափում են մի քանի հեղեղատներ և «Փարպու ջուրը» կամ Շաղուերտը: Այդ հեղեղատներից դէպի արևմուտք գտնուում է Սարգարաբազը, իսկ դորանից դէպի հարաւ-Շահրիարը: Այդ վերջինից էլ դէպի արևելք և Թեփեղիբիից դէպի հարաւ գտնուում է մի կարմրագոյն ապառաժոտ բլուր, որի շուրջը գալարուելով, ինչպէս ասում է Ստեփանոս Տարօնեցին, անցնում է Երասխը: Ահա հէնց այդ բլրի վերայ է, ասում է Էմինը, կանգնած եղել Արմաւիրը: Ներկայումս Երասխը այլ ևս գալարուելով չի անցնում այդ տեղից, որովհետեւ դեռ Երուանդ Բ-ի ժամանակները նա իւր տաշտը փոխելով, հեռացել էր բլրից և քաղաքը իւր ջուրը ստանում էր գետից հանուած մի առուակից: Այժմ էլ դեռ կարելի է տեսնել Երասխի այդ հին տաշտի տեղը, որ պարզ կերպով երևում է և կոչուում է «Ղուռու-Արագ», այսինքն չորացած Երասխ:

Էմինի կարծիքով հնագիտութիւնը ուշադրութիւն դարձնելով ալեոր Հայաստանի վերայ և իւր ցոյց տուած տեղերում պեղումներ կատարելով, դորանով երկու գլխաւոր նպատակի կարող է հասնել՝ նախ, ընդհանրապէս հնագիտութեան համար նշանակութիւն ունեցող գիւտեր կարող է անել, երկրորդ, կարող է ապացոյց տալ Խորենացու պատմածների ճշտութիւնը, Խորենացու, որի արժանահաւատ լինելու մասին գիտնականները արդէն սկսել էին կասկածներ յայտնել: Թէ ինչու համար Էմինի ծրագիրը չ'կատարուեց —, մենք լաւ չը գիտենք, բայց կարծում ենք, որ առաջին անյաջողութիւնը, որ ունեցաւ կոմս Ուվարովը Արմաւրի տեղում պեղումներ անելու ժամանակ, այնպէս հիասթափեցրին նորան, որ նա և նորա յաջորդները այլ ևս չ'վստահացան նոր փորձեր անելու: Թէ Էմինի վերոյիշեալ ընթերցանը Մարաց գաղութի մասին և թէ Ուվարովի

Հայաստանում արած փոքրիկ ճանապարհորդութեան, ս. Եջմիածնի հին նշանաւոր աւետարանի նկարագրութեան և Արմաւրի պեղումների արդիւնքի զեկուցագիրը կարգացուցին Հնագիտական ընկերութեան մի և նոյն նիստում: Մենք չենք լիշում ոչ ամիսը և ոչ ամսաթիւը, երբ այդ նիստը կայացաւ, բայց լաւ լիշում ենք, որ այդ 1881 թուի աշնանն էր, երբ Թիֆլիսում կայացած Հնագիտական ընկերութեան հինգերորդ ժողովը արդէն վերջացել էր և Էմինը վերադարձել էր Թիֆլիսից, իսկ Ուվարովը Հայաստանի ճանապարհորդութիւնից: Մեր միտն է, որ մէկ օր լրագրներից իմանալով, որ այս ինչ օրը այս ինչ ժամին Հնագիտական ընկերութեան նիստը պիտի կայանայ և պէտք է կարգացուեն այս ինչ բովանդակութեամբ Էմինի և Ուվարովի ընթերցանները, շտապեցինք ներկայ գտնուելու մեզ հետաքրքրող նստին: Որոշեալ ժամին մենք անցանք Կրեմլի մօտ գտնուած Մոսկուա գետի կամրջից և դէպի աջ թեքուելով, մտանք Մայիւտա Սկուրատովի նպտմական տունը, որտեղ սովորաբար կայանում են Ընկերութեան նիստերը: Արդէն բաւականին մարդ էր հաւաքուած՝ ինտելիգենտ երիտասարդներ, ուսանողներ, կային և Հայեր: Նիստը տակաւին բացուած չէր և բաղմութիւնը խումբ-խումբ հաւաքուած որը զրուցում էր, որը սենեակից սենեակ մանգալով, դիտում էր Ընկերութեան պատկանած պեղումներից գտնուած հին իրեղէնները: Մեր լաւ միտն է, ի միջի այլոց, մի կոտրած և կէսը փտած միջին հաստութեամբ գերան, որ դրուած էր սենեակներից մէկի անկիւնում, և որի համար ասում էին, թէ չինական պատմական պարսպից է հանուած, բերուած: Վերջապէս, հնչեց զանգակը և բազմութիւնը հաւաքուեց կամարակապ դահլիճը և բռնեց բազմականների համար շարուած աթոռները:

Կանաչ սեղանը իւր պարագաներով շրջապատեցին Ընկերութեան անդամները, որոնց մէջ մեր աչքին ընկան համակրելի նախագահ Կոմսը, Էմինը, ուսուցչապետ Միւլլերը և միւսները, որոնց անունները այժմ չենք յիշում: Առաջ կարդաց իւր զեկուցումը Ուվարովը: Նա նկարագրեց ս. Էջմիածնի թանգարանն ու մատենադարանը, մի քանի համակրական խօսք նուիրեց մատենադարանապետ Ներսէս Եպիսկոպոսին և կանգ առաւ նշանաւոր փղոսկրեայ կազմով հին աւետարանի վերայ: Կոմսը 989 թուին գրուած աւետարանի փղոսկրեայ կազմը համարում էր Խտալիոյ Հռաւեննա քաղաքի աւրուեստագործների ձեռքի գործ, իսկ աւետարանի բնագրի սկզբում գրուած 15 և վերջում զետեղուած չորս մանրանկար պատկերները համարում էր հայկական նրկարչութեան արուեստի արգասիք և նոցա հեղինակ Յովհաննէսին—մեծ նկարիչ. նա կարծում էր, որ այդ Յովհաննէսը իւր նկարչութեան հրաշալի արուեստը ուսած պէտք է լինի Հռաւեննայում: Այնուհետև Կոմսը անցաւ Արմաւրի պեղումներին և մանրամասն նկարագրելով իւր փորած տեղի՝ «Արմաւրայ գուզի» և բլրի գերբը, հողի խաւը, շերտը, գտնուած քարէ գէնքերը, մի ինչ որ նոր շինութեան հիմք և պատի մնացորդ, եզրակացրեց, որ հին քաղաքի տեղը իւր փորածը չէր, այլ, երևի, նոյն սահմաններում մի ուրիշ տեղ: Ուվարովից լստոյ սկսեց կարդալ Էմինը իւր վերոյիշեալ „Миндйцы въ древней Арменіи“ և Օպպերտի կարծիքի քննադատութիւնը: Նա թէև այնպէս բարձր չէր կարգում, ինչպէս Ուվարովը, բայց լաւ էր շեշտում բառերը, այնպէս որոշ-որոշ էր արտասանում իւրաքանչիւր նախադասութիւն, որ նորա ձայնը լսուում էր մինչև անգամ դահլճի և հեռաւոր անկիւններում: Երբ նա աւարտեց ընթերցումը, ուսուցչապետ Միւլլերը

Հարցրեց, թէ որտեղից կամ ընչից է եզրակացնում Նիկիտ Օսիպովիչը, որ Տիգրանը պատմական անձնաւորութիւն է: Եմինը միանգամից չպատասխանեց, նա բարձրացրեց գլուխը տետրակի վերայից, հանեց ակնոցը, սրբեց նորա վերայից քրտինքը և քմծիծաղ պատասխանեց՝ «Մովսէս Խորենացին է ալդպէս ներկայացնում նորան, Քսենոփոնտն էլ վկայում է... բայց դուք ինքներդ էլ շատ լաւ գիտէք, թէ ինչպէս դժուար է ալդպիսի հարցմունքներին ճշգիւ պատասխանելը» և այլն:

Եմինի միւս հնազիտական գրուածները՝ „Армян Анариа“ և „О падажъ“ որքան որ հնազիտական, այնքան էլ գրական-պատմական բնաւորութիւն ունին: «Արիա և Անարիա» խօսքերը, որոնք պատահում են զենդական գրքերում, Նախշի-Ռուստամի արձանագրութիւնների, Սասանեան դրամների վերնագրերի և հին հնդկականների գրուածների մէջ մինչև 64 թուականները դեռ քննութեան ու ուսումնասիրութեան առարկայ էին, դեռ լիովին չէին մեկնաբանուած, պարզուած: Արևմտեան գիտնականներից թէև շատերն էին ճշնել վերականգնել այդ խօսքերի իսկական նշանակութիւնը, բայց չէին յաջողել. նոքա, ճիշդ է, ընդհանուրում եկել էին համարեա թէ միևնոյն եզրակացութեան, այսինքն, որ «Արիա» պէտք է որ նշանակի ազնիւ մարդկանց երկիր, արիական ցեղի բնակութեան տեղ, բայց մասնաւորում նոցա կարծիքները շատ էին տարբերուում միմեանցից: Եմինը 64 թուականին մի առանձին լուծուածով, որ կցում է իւր Ասողիկի թարգմանութեան, Հայոց լեզուի հիման վերայ և նոյն Արիա և Անարիա խօսքերի «Արիք և Անարիք» հայկական ձևերով կարողանում է վերջնականապէս լուծել այդ խնդիրը: Նա Հայոց Արիք բառից յապաւելով յոքնականի նշան ք-ն, ստանում է արի ածականը, որ նա առաջ եկած է համարում:

«այլ» բառից, որ իւր հերթով համապատասխանում է գենդական և սանսկրիտ *virā*, լատ. *vir* և գոթական *vaiz* բառերին, որոնք նշանակում են հայերէնի պէս այլ, այսինքն «քաջ» «տղամարդ»։ Այնուհետև մեր գիտնականը հիմնուելով Հայոց լեզուի այն կանոնի վերայ, որ ածականները և գոյականները ընդունելով յոքնականի + նշանը, երբեմն ստանում են հայրենիք, երկիր և բնակութեան տեղի նշանակութիւն, գալիս է այն եզրակացութեան, որ Արիք էլ նշանակում է քաջեր և քաջ մարդկանց երկիր, Արեաց երկիր, ինչպէս ասորի-Ասորիք։ Եթէ Արիք նշանակում է քաջ մարդկանց երկիր, ուրեմն, պարզ է, որ Անարիք էլ պէտք է նշանակի ոչ Արեաց երկիր, անարի մարդկանց երկիր։ Հայոց պատմադրները, բացի Արիք և Անարիք խօսքերից նոյն մըտքով գործ են ածում և Երան և Տաներան խօսքերը, որոնք իւրեանց նշանակութեամբ համապատասխանում են Պարսից Իրան և Տուրան խօսքերին։ Երան կամ Իրան կամ, ինչպէս ասում է Խորենացին, «Երանաստան» նշանակում է իրանցիների կամ իրանցիների հայրենիք, բնակութեան տեղ, իսկ Տաներան, որ, Էմինի կարծիքով, կազմուել է հին Անարիա և նոր Տու-իրան խօսքերի ազդեցութեան ներքոյ, նշանակում է ոչ իրանական ցեղին պատկանող ազգեր։ Էմինը չի ընդունում հանգուցեալ Բռօսսէի այն կարծիքը, որ նա յայտնում է Տաներան բառի կազմակերպութեան մասին։ Նա ասում է, որ Տաներան բառը, նախ, չի կարող կազմուած լինել Երան և երկու բացասականից՝ « և » և «ն», ինչպէս կարծում է Բռօսսէն, որովհետև Հայոց լեզուում չի կարելի գտնել մի խօսք, որի մէջ կրկին ժխտականը կազմուած լինէր միաժամանակ « և » և «ն» բացասական մասնիկներից, երկրորդ, Հայոց լեզուի յայտնի կանոնի հիման վերայ, որ երկու բացասականը դրական նշանա-

կուլթիւն ունի, Տաներան բառը կստանար այն ժամանակ դրական նշանակութիւն և չէր համապատասխանիլ այն մտքին, որ արտայայտում է նա: Հայոց ողջ բառը, օրինակի համար, ընդունելով ք բացասական մասնիկը, նշանակում է «ոչ ողջ, կիսատ, թերի» ընդունելով երկրորդ բացասականը՝ «ն» — ամբողջ, ստանում է դարձեալ ողջի նշանակութիւն:

Ծաթ խօսքը, որ պատահում է մեր հեղինակներէց մի քանիսի գրուածքների մէջ ծ գարից սկսած և գրուում է երեք տեսակ՝ ծալդ, ծաթ և ծալթ, մինչև Էմինը լաւ յայտնի չէր, թէ իսկապէս ինչ է նշանակում: Մեզ միայն յայտնի էր, որ այդպէս էին կոչուում այն Հայերը, որոնք թողնելով իւրեանց ազգային եկեղեցին, ընդունում էին մի ուրիշ եկեղեցու դաւանութիւն: Հայ եկեղեցուց կտրուած — ընկածներին այդպէս կոչելու սովորութիւնը մտել էր Հայերի մէջ, ինչպէս երևում է Մխիթար Այրիվանեցու ժամանակագրութիւնից, 821 թուականից, երբ Դաւիթ Բ. կաթողիկոսի ժամանակ (806—833 թ.) Այրարատ նահանգի Կակադ գիւղացի Փարման տնունով մի քահանայ թողնելով Հայոց եկեղեցին, մտաւ վրաց եկեղեցու գիրկը և իւր հետ միասին դարձրեց քաղկեդոնական և Ուտիացիներից դէպի հիւսիս-արևելք Աղուանից սահմանների վերայ ապրող Ծողիկներին: Էմինը հիմնուելով Յայսմաւուրքի և Մխիթար Ապարանցու խօսքերի վերայ, եզրակացնում է, որ ծալթ խօսքը ածական է և նշանակում է թերի, կիսատ, որովհետև Յայսմաւուրքում Գրիգոր Նարեկացու վարքի մէջ ասուած է՝ «Հայոց եկեղեցուց հեռացողներին կոչում են ծալթք և թերահաւատք, որից երևում է, որ ծալթ նշանակում է թերի, իսկ Ապարանցու մէջ՝ ասուած է՝ «Յոյներից մի քանիսը կոչուում են կիսատ-Յոյնք, Հայերից էլ մի քան

նիսը— ծաղի-Հալք, որից նոյնպէս երևում է, որ ծաթ նշանակում է կիսատ:

ԳԼՈՂԻՄ ԺԵ.

Հայոց մատենագրութեան կամ գրականութեան պատմութեան էմինի գրուածներից պատկանում են՝

Ա. Հատուածք 'ի դասախօսութեանց պատմութեան գրականութեան Հայոց:

Բ. Վէպք հնոյն Հայաստանի.

Գ. «Գողթան երգն» 'ի «Բանասէր» օրագրին.

Դ. Объ армянскомъ алфавитѣ.

Ե. Мойсей Хоренскій и древній эпосъ армянскій.

Այս բոլոր գրուածների մէջ ասել չի ուզիլ, որ առաջին տեղը իւր նշանակութեամբ բռնում է վէպքը: Յայտնի է, որ մինչև ներկայ դարի առաջին կեսը գիտնական աշխարհում իշխում էր այն կարծիքը, թէ Հայերը չեն ունեցել իւրեանց ազգային-ժողովրդական վէպը կամ էպոսը: Միայն Մխիթարեանք էին, որ մատնացոյց էին անում Խորենացու պատմութեան մէջ գտնուած Վահագնի երգի վերայ, սակայն նոքա ևս լիովին համոզուած չէին, որ նա վիպական ծագումն ունի: Էմինը առաջինն է լինում, որ ուշագրութեամբ կարգաւոր խորենացին, քննելով նորա մէջ յաճախակի պատահող «վէպ» «վիպասան», «առասպել», «առասպելիք», «գրոյց», «ասեմ» և «երգ թուելեաց» բառերը, վերականգնելով նոցա իսկական նշանակութիւնը և ըմբռնելով նոցա ներքին իմաստը, գալիս է այն եզրակացութեան, որ սխալ է գիտնականների կարծիքը, որ Հայերը ևս ուրիշ ազգերի նման ունեցել են իւրեանց վէպը, որի մէջ նկարագրուած է եղել իւրեանց առաջին դիւցազունների

կեանքը, իւրեանց վիպասաններին, որոնք նուազել են իւրեանց բամբիւրը և նորա ձայնակցութեամբ երգել առասպելները, զրոյցները և ազգային երգերը: Ահա իւր այդ քննութեան արդիւնքն ու եզրակացութիւնն է, որ նա առաջին անգամ յայտնում է «Ընտիր հատուածքում» 1849 թուին և որ նա յաջորդ 1850 թուին ընդարձակելով, զարգացնելով և մշակելով հրատարակում է առանձին տետրակով «Վէպք հնոյն Հայաստանի» խորագրով: Դորա մէջ նա առաջին նուազ ամփոփում է Խորենացու մէջ պահպանուած միայն չափական հատուածները՝ «Երկնէր երկին և երկիր»-ը, «Հեծաւ արի արքայն Արտաշէս»-ը, «Տեղ ոսկի տեղայր»-ը, «Հատուած գընացեալ»-ը և մատնացոյց է անում Խորենացու պատմութեան այն տեղերի վերայ, որոնք վիպական գոյն ու նկարագիր ունին և կարծել են տալիս, թէ Հայոց ազգային վէպից են առնուած, փոխադրուած: Գիտնական աշխարհի համար այդ մի մեծ նորութիւն է լինում. բոլորեքեան ընդունում են հալ գիտնականի կարծիքը, բոլորեքեան աշխատում են նոյն հարթուած ճանապարհով առաջ գնալ, բոլորեքեան էլ ձգտում են նորա սկսածը զարգացնել, ընդարձակել: Բազմավէպի 1850 թուի դեկտեմբերի և 1851 թուի յունուարի տետրակներում դուրս է գալիս «Ժողովրդական վէպը» յօդուածը. 1851 թուին Յովսէփ Քաթընեանը հրատարակում է իւր փոքրիկ Հայոց գրականութեան պատմութիւնը, որի մէջ, ի միջի ալոյց, նա խօսում է և Հայոց վէպի մասին. 1852 թուին „Journal asiatique“ ամսագրի Յունուարի գրքում Փրանսիացի հայագէտ Դիւլորիէն մի ընդարձակ յօդուած է նուիրում «Վէպքին» „Etudes sur les Chants historiques et les traditions populaires de l'ancienne Arménie d'après une Dissertation de M. Emin“ վերնագրով. նոյն Փրանսիացի հայագէտը նոյն 1852 թուին դար-

ձեալ «Վէպքի» առթիւ մի յօդուած է գրում „Revue des deux mondes“ ամսագրում „Les chants populaires de l'Arménie“ խորագրով. 1861 թուին հայագէտ Վիկտոր Լանգլուան գրում է իւր „Etudes sur les sources de l'Histoire d'Arménie de Moïse de Khoren“ յօդուածը, որի մէջ խօսում է և Հայոց վէպի մասին. 1865 թուին Գարեգին Զարբանալեանը հրատարակում է իւր Հայոց դպրութեան պատմութիւնը, որի մէջ մի ամբողջ գլուխ «Գողթան երգիչք» վերնագրով նա նուիրում է Հայոց վէպին, ամփոփելով դորա մէջ մինչև իւր ժամանակը Հայոց վէպի մասին եղած բոլոր ուսումնասիրութիւնների արդիւնքը: Ինքը Էմինը իւր նշանաւոր «Քննութիւնը» հրատարակելուց յետոյ ևս հանգիստ չի մնում. նա հետևելով իւր ժամանակակիցների վերոյիշեալ գրութեաններին, թարգմանելով Խորենացին և անդադար ուսումնասիրելով նորան, ժամանակի ընթացքում նոյն նիւթի մասին գիտութեան մեծ պաշար է հաւաքում և մտածում է մէկ օր նոյն Քննութիւնը աւելի կատարեալ, աւելի մշակուած ձևով հրատարակել: «Դու, գրում է նա այդ մասին իւր ընկերին 74 թուի Օգոստոսի 26 ին, գրում ես, թէ քո «Վէպքդ» կորել է: Դու որովհետև հետաքրքրուում ես և կամենում ես նորանից մի հատ ունենալ,—ահա ես քեզ ուղարկում եմ մի ուրիշ օրինակ. Այդ «Ուսումնասիրութեան» լոյս տեսնելուց ի վեր իմ գլխումս ամբարուել են շատ նշանաւոր փաստեր, որոնք կարող են հաստատել իմ ունեցած հայեացքը Հայոց հին վէպի մասին: Երբ և իցէ ես այդ փաստերը տպագրութեան կ'յանձնեմ, եթէ միայն կենդանի մնամ: Ես պէտք է քեզ ասեմ, որ իմ այդ «Ուսումնասիրութեան» արգասիքը վաղուց է արդէն, որ ընդունել են արևմտեան արևելագէտները և մինչև անգամ Միլիթարեանք՝ թէ վենետկեցիք և թէ

վիեննացիք: «Երդք թուեցեաց», որի վերայ դու քո նամակումդ ուշադրութիւն ես դարձնում, մինչև ցայսօր դեռ բոլոր արեւելագէտների համար մի տեսակ դայթակղութեան քար էր մնացել. այդ մասին բազմաթիւ և զանազան կարծիքներ են եղել: Սակայն ես համոզուած եմ, որ իմ մեկնութիւնը աւելի ճիշդ է, քան թէ ուրիշներինը, ոչ թէ նորա համար, որ այդ մեկնութիւնը իմն է, այլ որովհետեւ իմ բերած ապացոյցները նորան հաստատելու համար մինչև ցայսօր դեռ չեն հերքել: Դու հարցնում ես, միթէ «թուեցեաց երդք» նշանակում է «ժամանակագրական երգեր»: Այո, որովհետեւ «թուեցիք» բառը ուրիշ նշանակութիւն չի կարող ունենալ: Դորա մասին տես Մովսէս Խորենացու պատմութեան վերաբերեալ իմ 112 ծանօթութիւնը, էջ 272: Իսկ ինչ որ վերաբերում է «առասպելք» կամ «առասպելիք» բառերին, ես քեզ պէտք է ասեմ, որ Ժողովրդի այդ խօսքին վերագրած մտապատկերը մի առանձին նշանակութիւն ունենալ չի կարող: Ինչ քաջ լայտնի է, որ արդի Հայերը Պարսկաստանում, Հնդկաստանում և բոլոր Հայաստանում «առասպել» խօսքը գործ են ածում «անվայել», «խայտառակ» խօսքերի նշանակութեամբ: Առասպելք, ինչպէս որ իմ վէպքում մեկնուած է, նշանակում է առասպելաբանութիւն, «միֆ» և ուրիշ ոչինչ: «Դու հարցնում ես, գրում է նա նոյն նիւթի մասին (79 թ. դեկ. 28), մի ուրիշ նամակում, միթէ մինչև քո այդ գիւտը անելը, արեւելագէտները, դոցա թուում և Միսթարեանք, չէին զգացել, չէին կարծել, որ «Ասդիկ» մակդիրը առաջ է եկել հարազատ «ասող» բառից: Եթէ միայն նոքա կարողանային «ասեմ» խօսքի իմաստի մէջ մի այդպիսի բան գուշակել, այն ժամանակ նոքա հեշտութեամբ էլ կորոշէին «վիպասան», «երգիչք ասեն», «երգն վիպասանաց ասէ» և այլն խօս-

քերի նշանակութիւնը: Մովսէս Խորենացու այդ և դորա մօտ գտնուած ուրիշ դոյնանման խօսքերը և ոճերը, որոնց նշանակութիւնը ինձ յաջողեց որոշել, ինձ միջոց տուին գտնել մեր հին վիպասանների, այսինքն ըստոյանների, վիպական քերթողների մի ամբողջ աշխարհ, և մեր հին վէպի մի ամբողջ հատուած Խորենացու մէջ»:

«Վէպքից» լետու թէ նորա մասին, թէ նորա առթիւ և թէ ընդհանրապէս Հայոց վէպին վերաբերեալ լոյս տեսած գրուածքներից Էմինի ուշագրութիւնը մանաւանդ գրաւում է մի ազգային բանաստեղծութիւն «Գողթան երգ» վերնագրով, որ 1851 թուին տպագրւում է Պօլսի «Բանասէր» հանդիսի հինգերորդ գրքում: Բանաստեղծութեան կցուած տեղեկութիւններից յայտնուում էր, որ «Երգը» գտել է Աւետիս Սարգսեան Կարնեցին մի հին անթուական բօլորագիր մագաղաթեայ աւետարանի մէջ և իբրեւ մի մեծ հնութիւն և բաղձալի հատուած Հայոց վիպական կամ Գողթան երգերից շտապել է տպագրութեան յանձնել: Էմինը, որ մի տարի առաջ այնպիսի մանրակրկիտ աշխատութեամբ քամել ու մաղել էր Խորենացին, վէպի հետքեր, հատուածներ ու նշաններ որոնելով նորա մէջ, որ իւր վէպքի հրատարակելովը այնքան մեծ անուն էր ստացել ու հռչակուել գիտնական աշխարհում, որ մինչև անգամ Պարիզի գիտութեանց ձեմարանի անդամ էր ընտրուել և այդ առթիւ հանդիսաւոր կերպով դրուատուել Դիւլորիէից, ի հարկէ, շատ ուրախանում է այդ նոր գիւտի վերայ, որովհետեւ, նախ, դորանով մի անգամ էլ հաստատուում էր, որ Հայերը ունեցել են իւրեանց ազգային վէպը, երկրորդ, որ դեռ իսպառ կորած ու մոռացուած չեն վիպասանաց երգերը: Սակայն անակնկալ և մեծ է լինում նորա հիասթափումը, երբ նա մէկ և

երկու անգամ կարգալով գտնուած հատուածը, որի բովանդակութիւնը կազմում էր Արտաւազդի պատմութիւնը, նորա որսի գնալը և վհի մէջ ընկնելն ու անհետանալը, համոզուում է, որ դա ամենևին Գողթան երգչէ, այլ համեմատաբար նոր գրուած մի բան, անհամապատասխան Հայոց Գողթան երգերի հոգուն և բովանդակութեան: Այդ իւր հիասթափումը, տարակուսանքը ու կասկածները նա յայտնում է մի նամակաձև քննադատական յօդուածի մէջ «Գողթան երգն» 'ի «Բանասէր օրագրին» վերնագրով, որ և ուղարկում է Բանասէրի խմբագրութեան տպագրելու համար: Դորա մէջ նա հիմնուելով, նախ, այն հանգամանքի վերայ, որ Խորենացին Արտաւազդի պատմութիւնը անելու ժամանակ ճշգրիտ պատմութիւնը չի խառնում այն բազմութիւ առասպելների և զրոյցների հետ, որ նորա մասին պատմուում էին, այլ առաջ պատմում է բուն պատմութիւնը արքունի դիւանից հանած ստույգ փաստերի հիման վերայ, յետոյ արդէն մէջ է բերում պառաւնեւորի առասպելայօդ զրոյցները Արտաւազդի շղթաներով այլի մէջ կապուելու մասին, Գողթան երգիչների պատմածները նորա մասին և նորա ծննդեան մասին պատմուած աւանդութիւնը, իսկ Գողթան երգի մէջ այդ բոլորը այն աստիճան խառնուած է, որ կարծել է տալիս, թէ Արտաւազդի բոլոր պատմութիւնը առնուած է միայն Գողթան երգերից և առասպելներից, երկրորդ, հիմնուելով այն հանգամանքի վերայ, որ երգի հեղինակը Արտաւազդին բռնողներին «գեւք» է կոչում և ոչ թէ «քաջք», ինչպէս կոչում է Խորենացին, և, վերջապէս, երրորդ, որ երգի մէջ Արտաւազդը բռնուում և արգելուում է վհի մէջ և ոչ թէ 'այլի Մասիս սարի վերայ, գալիս է այն եզրակացութեան, որ Գողթան

երգը կեղծիք է, կարկատուած անյայտ մէկի ձեռքով ⁸⁷⁾։

1881 թուին կայանում է Թիֆլիսում հինգերորդ հնագիտական ժողովը հռչակաւոր կոմս Ուվարովի նախագահութեամբ, որին մասնակցում է և մեր ծերունի զետնականը։ Ահա հէնց այդ առթիւ նա հրատարակում է իւր վերոյիշեալ հաւաքած նիւթերը Հայոց վէպի մասին «Мойсей Хоренский и древний Эпосъ армянскій» վերնագրով, որի մէջ, բացի նորանից, որ նա կրկնում է իւր մի անգամ արդէն յայտնածը, բացի նորանից, որ վէպից նոր, բազմաթիւ և ընդարձակ կըտորներ է մէջ բերում, այլ և յայտնում է իւր նշանուոր կարծիքը Մար Աբաս-Կատինայի մասին։ Յայտնի է, որ Էմինը դեռ 1858 թուին իւր Խորենացու թարգմանութեան յառաջաբանում ընդունում է Մար-Աբասին իբրեւ գլխաւոր աղբիւր Հայոց հնագոյն պատմութեան և ճիշդ է թափում հերքել ֆրանսիացի հայագէտների, մասնաւորապէս Կատրմերը այդ մասին յայտնած կասկածները։ Նա կարծում է, որ թէև Արշակի ժամանակ Նինուէում թագաւորական դիւաններ չկային, ինչպէս

⁸⁷⁾ Մեկ թուում է, որ «Գողթան երգի» կեղծ լինելու ապացոյցը այնքան այն չէ, որ նորա մէջ Արտաւազդի պատմութիւնը այնպէս է պատմուած, որ կարծես, թէ բոլորը առասպելներից առնուած լինի, կամ, որ «Բայքի» տեղ «Դեք» է գործածուած նորա մէջ, և կամ, որ վհի մէջ է նա բռնուած ու արգելուած և ոչ թէ Մասիսի վերայ, որքան նորա լեզուի, ոճի ու բերթուածքի արուեստականութիւնը, բուն ժողովրդական հոգու պակասութիւնը, բանաստեղծութեան բացակայութիւնը և այլն։

«Ջարի արքայն Արտաւազդ»
«Երիվարան ընդ վայրցած»
«Խորասուկեալ զէք դըժպիհ»
«Արգելին մի լոյս տեսներ»։

«Երկաթի կապեալ շղթայք»
«Սաստկապատիժ յայրի անդ»
«Շանց երկուց հանապազօր»
«Ջշղթայն կրծել ատամնակեր»
և այլն։

ասում էր Կատրմերը, բայց կարող էին եթէ ոչ բոլոր դիւանները, գոնէ, նոցա մի մասը պահպանուած լինել և անցած Սելէկիդներից Պարթևաց թագաւորների ձեռքը և մինչև իսկ տեղափոխուած Եկբատան. նա կարծում է, որ Աղեքսանդր Մակեդոնացու կարճատև գործունէութիւնը ամենևին ապացոյց չի կարող համարուել, որ նա ոչ ժամանակ և ոչ միջոց ու ցանկութիւն է ունեցել թարգմանել տալու քաղաքներէնից յունարէն մի որ և է պատմական լիշատակարան, ինչպէս պնդում էր Կատրմերը: Նա ընդհակառակը ենթադրում էր, որ ի նկատի առնելով Աղեքսանդր Մեծի ամեն բան կշռող, ըմբռնող միտքը, նա կարող էր քրմերի ցուցմունքով ուշադրութիւն դարձնել այդ քաղաքական նշանաւոր լիշատակարանի վերայ և հրամայել թարգմանել նորան յունարէն: Նա հաստատում է, որ «Մար» խօսքը, որից կազմուած է Ասորի գիտնականի անունը, գործ է ածուած Ասորոց գրականութեան մէջ ոչ թէ միայն քրիստոնէութեան ժամանակ, ինչպէս ասում է Կատրմերը, այլ և մինչև Աբգարի քրիստոնէութիւն ընդունելը ևս. վերջապէս, նա ապացոյց է տալիս, որ Աղեքսանդր Մակեդոնացու հրամանով քաղաքներէնից յունարէն թարգմանուած պատմական լիշատակարանը չի կարող լինել Բերոզի պատմութիւնը, ինչպէս ենթադրում էր Կատրմերը, և այլն: Այդ թուականից անցնում է ամբողջ 30 տարի և նորա նոյն նիւթի ու խնդրի մասին կատարած ուսումնասիրութիւնը նորան հասցնում է բոլորովին հակառակ եզրակացութեան: Նա, ճիշդ է, իւր „Мойсей Хоренскій и древній Эпосъ Армянскій“ տետրակում ևս չի ընդունում, որ Հայոց հնագոյն պատմութիւնը Հայոց պատմագրի երևակայութեան արգասիքն է, ինչպէս կարծում էին Կատրմերը և նորա համախոհները և ինչպէս ճգնում

են մեր օրերով կողմնակի կերպով ապացոյց տալ պ. պ. Կարիերը, Խալաթեանը և միւսները, բայց միանգամայն հերքում է Մար Աբասի գոյութիւնը և Հայոց հնագոյն պատմութեան միակ աղբիւր համարում է Հայոց ժողովրդական վէպը, վիպասանների երգերը, թուելեաց երգերը, թագաւորների մատեանները, մեհենական պատմութիւնը, զրոյցները, սւանդութիւնները, առասպելները և այլն: Ճես կարծում եմ, կարողում ենք նորա այդ մասին գրած նամակներից մէկում (82 թ. Յունուարի 8), որ եթէ մինչև ցայսօր Մովսէս Խորենացու Հայկազեան շրջանի պատմութեան միւս ուսումնասիրողները չեն եկել այդ եզրակացութեան, այդ նորանից է, որ նոքա բաւականաչափ միջամուխ չեն եղել նորա ուսումնասիրութեան գործի մէջ, մանաւանդ այն մեկնութիւններից յետոյ, որ ես շատ տարի առաջ տուել եմ մինչև ցայսօր դեռ ծերունի Խորենացու մէջ պահպանուած հնացած խօսքերին — արխայիզմներին: Ես ինչ եմ վերագրում այն միտքը, որ վերաբերում է Մար-Աբաս-Կատինայի գոյութիւն չունենալու, Նինուէի քաղաքական պատմութեան չլինելու և Հայոց ծերունի և արգոյ պատմագրի՝ այդ մասին ունեցած համոզմունքի հերքման խնդիրներին ⁵⁸⁾: Խոստովանում եմ, դորա համար պէտք էր մեծ քաջութիւն ունենալ, որով և ես զինուեցի, յենման կէտ ունեցուկ ունենալով ժողովրդական վէպը, ինչպէս Հայկազեան շրջանի գլխաւոր աղբիւրներից մէկը: Բայց այն

⁵⁸⁾ Հանգուցեալ գիտնականի այդ տողերի իմաստը այնպէս չ'պէտք է հասկանալ, որ իբրև թէ ինքն է եղել առաջինը, որ հերքել է Մար-Աբաս-Կատինայի և Նինուէի քաղաքական պատմութեան գոյութիւնը, այլ որ ինքն առաջինն է եղել, որ հերքել է և հաստատ կերպով ապացոյց է տուել իւր հերքումը:

էլ պէտք է ասել, որ դորա համար իմ վերայ շատ լար-
ձակուեցին ու լարձակուում են: Ե՛հ, թո՛ղ. կանցնի ժա-
մանակ, կգան ուրիշ օրեր, օրեկտիւ կերպով կսկսեն
վերաբերուել իմ լուծած խնդրին և ինձ կարգարացնեն:
Եթէ կենդանի մնամ, դեռ ևս շատ անգամ կվերա-
դառնամ Խորենացու Հայկազեան շրջանին. իմ գլխումս
դեռ շատ մտքեր են պտոյտ գալիս, դեռ շատ բան
կայ անելու զանազան ոչ պատմական, այլ գրական
խնդիրների վերաբերութեամբ»:

«Объ армянскомъ ашфавитѣ» գրուածքը, որ
թարգմանուել է և ֆրանսերէն Եվարիստ Պուլգոմի-
ձեռքով, բաղկացած է վեց գլխից և պարունակում է
իւր մէջ Եմինի կարծիքը հայ աթուրեանի մասին, որի
ծագումը և գտնուելու հանգամանքները մինչև ցայսօր
դեռ լաւ պարզուած ու որոշուած չեն, չնայելով, որ
58 թուականից, երբ Եմինը առաջին անգամ հրապա-
րակ է հանել այդ մեր գրականութեան համար շատ մեծ
կարեւորութիւն ունեցող խնդիրը, նա զբաղեցրել է շա-
տերին և մի քանի առանձին մենագրութիւնների նիւթ
է եղել: Մինչև ցայսօր դեռ վերջնականապէս պար-
զուած չէ, թէ մինչև 406 թուականը Հայերը, բացի
պարսկական, ասորական և յունական տառերից, այլ ևս
ուրիշ ի՞նչ տառեր են գործածել, թէ, բացի «Դանիէ-
լեան նշանագրեր» կոչուած տառերից, Հայերը ուրիշ
սեփական նշանագրեր ունեցել են, թէ ոչ, թէ Դանիէ-
լեան նշանագրերը երբ և իցէ գործածուել են, թէ ոչ,
և թէ, եթէ գործածուել են, երբ են գործածութիւ-
նից դուրս եկել և ի՞նչու համար, թէ Ս. Մեսրոպը
որտեղ գտաւ տառերը, թէ քանի՞ հատ էին Դանիէլեան
նշանագրերը և Մեսրոպը քանի՞ տառ հնարեց, թէ,
վերջապէս, ի՞նչ ծագումն ունին Հայոց տառերը ընդ-
հանրապէս և այլն: Այս խնդիրներից մի քանիսին Ե-

մինը, եթէ ոչ բոլորովին ճիշտ, գոնէ, հաւանական պատասխան է տալիս, ջրելով իւր նախորդների՝ Ինջի-ջեանի, Չամչեանի և Սէն-Մարտէնի հատուկոր կարծիքները և իւր ասածները հաստատելով Հայոց հեղինակներից բերած վկայութիւններով ու իւր սեփական սրամիտ դատողութիւններով: Հայերը ամենահին ժամանակները, նորա կարծիքով, գործ են ածել «նշանք կամ նշանագիրք», որոնց հետքերը գտնուում են ձեռագրերում և մինչև իսկ տպագրած գրքերում: Այդ «նշանքը» նմանութիւն են ունեցել եգիպտական երուզլիֆներին. նոցանով գրուել են Ս. Գրիգորի և Հռիփսիմէի խօսքերը նոցա չարչարելու ժամանակ, ինչպէս երկու տեղ վկայում է Ս. Պատմագիրը: Հայոց գիրը, նորա ասելով, բաժանուում է երկու տեսակի՝ Դանիէլեան և Մեսրոպեան: Դանիէլեանը, որ թիւրիմացութեամբ է այդպէս կոչուել, Հայոց հին գիրն է և, ինչպէս վկայում են Կորիւնը, Խորենացին և Փարպեցին, գոյութիւն է ունեցել հին ժամանակներից, իսկ Մեսրոպեանը նոյն հին գիրն է, որ կատարելագործուել է Ս. Մեսրոպի ձեռքով և գործածութեան մէջ մտել հինգերորդ դարում: Դանիէլեանի գործածութիւնից դուրս գալու և նորից Ս. Մեսրոպի ձեռքով գործածութեան մէջ մտնելու միջոցով գործ են ածուել պարսկական կամ զենդական, ասորական և յունական տառերը: Դանիէլեանի գործածութիւնից դուրս գալու պատճառը եղել են քաղաքական հանգամանքները և պարսիկների ու յոյների զօրաւոր ազդեցութեան ներգործութիւնը: Դանիէլեան տառերը բաղկացած են եղել 22 տառից, ինչպէս վկայում է Վարդան պատմագիրը, և չեն ունեցել եօթ ձայնաւորները և եօթ բարդ բաղաձայնները: Մեսրոպը հնարել է եօթ ձայնաւորները, ինչպէս վկայում է Խորենացին, հնարել է եօթ

Քարդ բաղաձայները և ձևակերպել է ամբողջ այլուրե-
 նը գեղագիր Ռուփանոսի ձեռքով ու լշխատակցու-
 թեամբ «Մեսրոպեան երկաթագիր» կոչուած տառերի
 ձևով: Եմինը չի ընդունում Ասողկի վկայութիւնը Դա-
 նիէլեան տառերի թուի մասին և կասկածով է վերա-
 բերում ընդհանրապէս նորա հետեւալ խօսքերին՝
 «Սուրբն Մեսրոպ կղև նախագտող և վարդապետ ըստ
 հայուսն նշանագրութեան և դպրութեան... Թէոդոս
 փոքր... 'ի սորա աւուրս էր սուրբ հայրապետն Հայոց
 Սահակ, յորոյ աւուրս դպրութիւն Հայոց լեզուիս Իթ-
 գիր ի Դանիէլէ փիլիսոփայէ ասորոց կարգեցաւ իսկ
 զեօթն գրոյն պակասութիւնն Մեսրոպ երանելի տա-
 րօնեցի խնդրուածովք յաստուծոյ առնու»: Նա չի ըն-
 դունում և Դաւիթ փիլիսոփային վերագրուած այլաբա-
 նօրէն ասացուածքը, թէ «չափ հասակի իմոյ երկիցս
 երկոտասան, այժմ եմ երկցս երկոտասան», որից երե-
 ւում է, որ Դանիէլեան տառերի թիւը եղել է՝ 24:
 Եմինը կարծում է, որ թէ Ասողկի և թէ այլաբանօ-
 րէն գրուածքի վկայութիւնները այնքան նշանակու-
 թիւն ունին, որ որոշում են, թէ Հայերը երկու տե-
 սակ գիր են ունեցել՝ հինը—պակասաւորը, և նորը-
 կատարելագործուածը, իսկ տառերի թիւը ճիշտ կեր-
 պով որոշում է Վարդան պատմագիրը, որ ասում է՝
 «'ի հինգերորդ ամի սորա (Վռամշապուհի) և յառաջին
 ամի Արտաշրի՝ որդւոյ Շապհոյ, սուրբ Մեսրոպայ յօրի-
 նէ դպրութիւն հայերէն քսան և երկու գիր առ Դա-
 նիէլի ասորոյ գտեալ 'ի հին ժամանակաց. որ ոչ պար-
 զելոյն զընդարձակութիւն լեզուիս՝ անհոգացեալ եղև
 յառաջնոցն, յոյն և ասորի և պարսիկ գրով շատացեալք:
 Եւ Մեսրոպայ ոչ կարէր նոքօք փոխել զաստուածաշունչ
 մատեանս 'ի հայ բարբառ, վասն որոյ աղօթից տուեալ
 զանձն՝ գործակցութեամբ սրբոյն Սահակայ, տալ նմա

աստուած չորեքտասան գիրս՝ աջովն իւրով զըրշմեալ առաջի նորա, որպէս մեծին Մովսիսի 'ի լեառն Սինայ և սմա 'ի լեառն Բալուա... Եւ զի լեալ էր հայերէն գիր 'ի հնոյն՝ վկայեցաւ 'ի ժամանակս Լեւոնի արքայի. զի գտաւ զըրամ հայերէն գրով զըրշմեալ զանուն կռապաշտ թագաւորացն հայկազանց, զորոյ զթերութիւն ելից նորս մեր Եզրաս աստուածախառն շնորհօք լցեալս։ Թէ ինչ ծագումն ունին Հայոց տառերը, որ տառերի նմանութեամբ են ձևակերպուած,—եմինը չի ասում. նա միայն բաւականանում է նորանով, որ հերքում է Հայոց տառերի և զենդականի ու յունականի մէջ նմանութիւն գտնողներին՝ Ս. Մարտէնի և նորա հետևողների կարծիքները։ Նա նոյնպէս չի ցոյց տալիս, թէ արդեօք պակաս տառերի գիւտը Ս. Մեսրոպը որտեղ է արել՝ Սամոսոմ, ինչպէս ասում է Խորենացին, թէ Սամոսատում, ինչպէս վկայում է Կորիւնը, ալլ միայն լուելեայն մատնացոյց է անում Վարդանի խօսքերի վերայ՝ «Տայ նմա աստուած չորեքտասան գիրս՝ աջովն իւրով զըրշմեալ առաջի նորա, որպէս մեծին Մովսիսի 'ի լեառն Սինայ և սմա 'ի լեառն Բալուայ»։ Եմինը 'ի նկատի չի առնում, որ Ագաթանգեղոսի գործածած «նշանագիրք» կարող են նշանակել և առհասարակ տառեր, ինչպէս յաճախակի գործ են անում մեր հեղինակները, խօսելով Հայոց Դանիէլեան և Մեսրոպեան այբուբենի մասին, իսկ ինչ վերաբերում է նորա ասածին, թէ այդ նշանագիրքը տառեր չէին, ալլ եգիպտական սրբագրերի նման նշաններ, որովհետև անկարելի էր հասարակ տառերով գրի անցնել Ս. Գրիգորի և Հռիփսիմէի ասածները,—այդ էլ կարող է ոչ բոլորովին ճիշդ լինել, որովհետև Ագաթանգեղոսի խօսքերից չ'պէտք է անպատճառ եզրակացնել, որ «նշանագիրք»-ը գրել են սրբերի բոլոր խօսակցութիւնը բառ առ բառ, տառ առ

տառ, այլ, գուցէ, բոլոր խօսակցութեան միայն ընդհանուր միտքը: Էմինը 'ի նկատի չի առնում նոյնպէս այն հանգամանքը, որ Խորենացու բնագրի Վենետիկ տպագրութեան մէջ գտնուած ձայնաւորները, որ դրուած են «գրելով 'ի վերայ վիմի» բառերից յետոյ, մեր ձեռքը հասած ընտիր ձեռագրերի միայն մի օրինակի մէջ են գտնուում, այն էլ լուսանցքի վերայ դրուած, և առ հասարակ Խորենացու ձեռագրերի մեծ մասի մէջ չկան. դոքա չկան և Ներսէս Լամբրոնացու ընտիր օրինակի մէջ և Յակովբ Կարինեանցի բաղդատութեան մէջ, այնպէս որ համարուելու են եկամուտ, ուրիշի ձեռքով մտցրած: Էմինը, վերջապէս, 'ի նկատի չի առնում, որ Գլակայ վանքում Մեսրոպեան տառերի գիւտից 200 տարի անցնելուց յետոյ ասորական տառերի գործածուելը դեռ ապացոյց չի կարող համարուել, որ Հայոց տառերը միանգամից ընդհանուր գործածութեան մէջ չեն մտել: Գլակայ վանքը այդ դէպքում բացառութիւն էր կազմում, որովհետեւ նա սկզբից Լուսաւորչի և իւր առաջին վանահայր նշանաւոր Զենոբ Գլակի օրերից մինչև Տարօնի տէր Մուշեղ Մամիկոնեանի ժամանակները ամբողջ 600 տարի կառավարուել է ասորի վանահայրերի ձեռքով: Չ'պէտք է զարմանալ, որ վանքի վանահայրերը ինքեանք ասորի լինելով, վանական կարգու կանոնը տառերի գործածութեան հետ միասին նոյնպէս հէնց սկզբից ասորական լինելով և Հայոց հոգեւոր իշխանութեան կողմից ստիպմունք ևս չ'լինելով, Հայոց տառերի գիւտից յետոյ էլ նոքա շարունակել են իւրեանց առաջուկայ կարգով ընթանալ: Եւ ապացոյց դորան կարող է լինել այն, որ բաւական է եղել, որ Մուշեղ Մամիկոնեանը ուղադրութիւն դարձնէր այդ հանգամանքի վերայ և հայ վանահայր նշանակէր, որ ամեն բան իսկոյն փոխուէր, ինչպէս վկայում է Յով-

Հաննէս Մամիկոնեանը իւր Տարօնի պատմութեան մէջ: Պլակալ պէս, գուցէ, եղած լինին այլ ևս մի երկու վանք յոյն և ասորի վանահայրերով, որոնք Հայոց տառերի գիւտից յետոյ էլ մի առ ժամանակ շարունակած լինին իւրեանց հին ասորական և յունական տառերով վարուելու սովորութիւնը: Բայց, կրկնում ենք, այդ հանգամանքը պէտք է վերագրել միայն վերոյիշեալ վանքերի օտարագգի վանահայրերին: Մեր պատմութեան մէջ մենք ոչ մի տեղ չենք պատահում, որ բուն Հայերը տառերի գիւտից յետոյ նոցա գործածութիւնը իսկոյն չընդունէին և շարունակէին յունականով ու ասորականով վարուելու:

Բացի վերոյիշեալներից, Հայոց գրականութեան պատմութեան Էմինի երկերից պատկանում են նորահրատարակութիւնների յառաջաբանները, որոնց մասին մենք արդէն խօսել ենք, և նորա թարգմանութիւնների նախաբանները: Հետաքրքրական են և մինչև ցայսօր դեռ չեն կորցրել իւրեանց թարմութիւնը մեր գրականութեան համար այն տեղեկութիւնները, որ Էմինը հաղորդում է մեր շարականների մասին իւր Շարականի թարգմանութեան յառաջաբանում: Նորա կարծիքով շարականների գիրքը սկսուել է կոչուել «Շարական» կամ «Շարականոց» միայն երկոտասաներորդ դարի երկրորդ կիսից, իսկ մինչև այդ ժամանակները յայտնի չէ, թէ ի՞նչպէս է կոչուել նա: «Շարական» բառի արմատը նա համարում է «շար» և կարծում է, որ նա սեմիտական ծագումն ունի: Հայոց լեզուում միայն մի տեղ-Յովհաննէս Մամիկոնեանի պատմութեան մէջ է պատահում այդ արմատը, բայց այն էլ ոչ «շար» ձևով, այլ «շեր», որ նշանակում է «երգ»: Որ «շար» հայկական ծագումն չունի, այդ երևում է նորանից, որ նա ուրիշ բառեր չի գոյանում իրանից, իսկ որ նա համապատասխանում է

«շերտ»-ին, — դորանում կասկած չինել չի կարող, որովհետեւ նոցա նշանակութիւնը միեւնոյնն է. Ա-ի փոխուելը Ե-ի շատ յաճախ է պատահում Հայոց լեզուում, մանաւանդ այն դէպքերում, երբ մի որ և իցէ բառ գրաբառից մտնում է աշխարհաբառի մէջ: Եթէ ճշմարիտ է, որ շարական լեռնի արմատը «շար» է և այդ շարն էլ համապատասխանում է Յովհաննէս Մամիկոնեանի գործածած «շերտ»-ին, — շատ հեշտ է մեկնել նորա նշանակութիւնը, որովհետեւ նորա «աղան» վերջաւորութեան մէջ Ա-ն միաւորիչ ձայնաւոր է, իսկ «կանը» հին յոգնականի վերջաւորութիւն, ուրեմն շարական նշանակում է «երգեր»: Շարականոցը կամ Շարականոցը պարունակում է իւր մէջ 130 շարական, որոնք բոլորը ևս Հայոց եկեղեցու հայրերի գրչի արգիւնք են. նոքա սկսուում են Ս. Մեսրոբի և Խորենացու շարականներով և վերջանում են Վարդան Բարձրբերդեցու և Յովհան Երզնկացու շարականներով — հինգերորդ դարից մինչև ԺԴ դարը: Շարականները գրուած են ընտիր գրաբառով. նոցանից մի մասը շարադրուած է արձակ բանով, մի մասը անյանգ և յանգաւոր ոտանաւորով, մի մասն էլ արձակ բանով, բայց տողերի մի տեսակ համաչափութեամբ: Շարականները երգուում են Հայոց եկեղեցում նշանակուած օրերին, ժամերին և տօներին, և երգուում են ընդունուած ութ ձայնով, որոնցից ամեն մէկը սկսուում է հին և նոր կտակարանից փոխ առած մի յայտնի ոտանաւորի բառերով՝ Օրհնեսցուք, Հարցն, Մեծացուսցէ, Ողորմեա, Տէր յերկնից, Մանկունք, Ծաշու և Համաբարձի: Առաջին ձայն շարականը կոչուում է «Օրհնեսցուք», որովհետեւ նա սկսուում է Մովսիսի երգով՝ «Օրհնեսցուք զՏէր, զի փառք է փառաւորեալ» և երգուում է գիշերային ժամին: Երկրորդը կոչուում է «Հարցն», որովհետեւ նա սկսուում է Դանիէլի երկից մանկանց գովութեամբ՝ «Օր-

հնեալ ես Տէր Աստուած Հարցն մերոց» և երգուում է առաւօտեան ժամին: Երրորդը կոչուում է «Մեծացուցէ», որովհետեւ նա սկսուում է Ղուկասի Ս. Աստուածածնի երգի բառերով՝ «Մեծացուցէ անձն իմ զՏէր» և երգուում է այժմ առաւօտեան ժամին, իսկ հին ժամանակները երգուում էր կիւրակի օրերին և տէրունական տօներին միայն: Զորրորդը կոչուում է «Ողորմեան», որովհետեւ նա սկսուում է Ծ. Սաղմոսի «Ողորմեան ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում» բառերով և երգուում է առաւօտեան ժամին: Հինգերորդը կոչուում է «Տէր յերկնից», որովհետեւ սկսուում ձԽԸ սաղմոսի «Օրհնեցէք զՏէր յերկնից, Օրհնեցէք զնա 'ի բարձանց» բառերով և երգուում է առաւօտեան ժամին: Վեցերորդը կոչուում է «Մանկունք», որովհետեւ նա սկսուում է ձԺԲ սաղմոսի «Օրհնեցէք, մանկունք, զՏէր և Օրհնեցէք զանուն Տեառն» բառերով և երգուում է առաւօտեան ժամին: Եօթներորդը կոչուում է լծաշու», որովհետեւ նա երգուում է պատարագի ժամանակ երրորդ և չորրորդ ժամերից յետոյ. նորա սկզբնական խօսքերը փոխ են առնուում զանազան սաղմոսներից ըստ աւուր պատշաճի: Եւ, վերջապէս, ութերորդը կոչուում է «Համբարձի», որովհետեւ նա սկսուում է ձԻ սաղմոսի «Համբարձի զաչս իմ ի լերինս, ուստի եկեցէ ինձ օգնութիւն» բառերով և երգուում է դարձեալ առաւօտեան ժամին: Շարականների բովանդակութիւնը կազմում են նոր կտակարանի գլխաւոր անցքերը՝ Սուրբ Աստուածածնի ծնունդը, Փրկչի ծնունդը, Աստուածայայտնութիւնը, Տեառնընդառաջը, Փրկչի չարչարանքը, յարութիւնը և համբարձումը, Հոգեգալուստը, Այլակերպութիւնը, Ս. Աստուածածնի վերափոխումը, խաչվերացը և այլն, Հայոց եկեղեցու Ս. նահատակների, խոստովանողների և հայրերի գովաբանութիւնը, և, վերջապէս, Յունաց ե-

կեղեցու հայրերի դրուատական փառաբանութիւնը: Շարականները իբրև ամենավճիտ աղբիւր հայ եկեղեցու դաւանութեան, բացի Մանուէլ Կոմնենից, որ իւր եկեղեցիների միութեան մասին Գրիգոր Դ. կաթողիկոսին գրած թղթի մէջ, 'ի միջի ալլոց, ասում է՝ «Ծանիր զայս, զի զգալթակողութիւնն, որ կայր 'ի սիրտս մեր՝ յերգս ձեր և 'ի պաշտամունս որ առ Աստուած, բժըշկեցաք քննութեամբ. վասն զի 'ի մէջ ածաք և ծանեաք երևելապէս 'ի նոցանէ, զի 'ի բազում տեղիս երկու բընութեամբ զմի Քրիստոսն նոքօք փառաբանէք. և պարտ է զայս ուղղութիւնս, որ իբրև զթաքուն է՝ ամենեցուն ասել և ցուցանել», գրաւել են և մի քանի գիտնականների ուշադրութիւն: Փրանսիացի միսիոնար Եւսէն Բոռէն 1840 թուին թարգմանել ու զետեղել է իւր „L'Arménie“ գրութեան մէջ Ս. Լուսաւորչի շարականը. Լուսկենի ուսուցչապետ Ֆելիքս Նեւը 1855—1862 թուականներին թարգմանել է բոլոր ննջեցելոց և Ս. Հոգուն վերաբերեալ շարականները. Իտալացի Luigi Carrer-ը թարգմանել է Ս. Հռիփսիմէի շարականը ոտանաւորով. Վենետիկի Մխիթարեանք 1877 թուին Պիոս Թ պապի լիւնամեակի տօնախմբութեան առթիւ թարգմանել են լատիներէն և մատուցել են պապին Ս. Աստուածածնի բոլոր շարականները. վերջապէս, Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը թարգմանել է ռուսերէն երկու շարական՝ „Пѣснь на облаченіе въ священныя одежды“ և „Пѣснь на каждеііе при святомъ жертвоприношеніи“: որոնք մտել են Հալոց պատարագի մէջ ԺԳ դարում ⁵⁹⁾: Շարականների նախկին հրատարակութիւ-

⁵⁹⁾ *Տե՛ս՝* „Собрание древнихъ литургій восточныхъ и западныхъ въ переводѣ на русскій языкъ“—Выпускъ второй: С.П.В. 1875 г. Литургія святаго Григорія Просвѣтителя Арменіи, стр. 168.

նը եղել է 1706 թուին Ամստերդամում, իսկ լետագայ հրատարակութիւններից նշանաւոր են Կոստանդնուպօլսինը, որ եղել է 1853 թուին, և Ս. Էջմիածնինը, որ եղել է 1875 թուին։ Արժանի է առանձին ուշադրութեան Գաբրիէլ Աւետիքեանի բոլոր տպագրութիւնների և Վենետիկի մատենադարանին պատկանած 33 ձեռագիր օրինակների համեմատութեամբ 1814 թուին արած հրատարակութիւնը և գիտական բացատրութիւնը, որ կըրում է՝ «բացատրութիւն Շարականաց, որք պաշտին 'ի հասարակաց ժամկարգութեան Հայաստանեայց եկեղեցւոյ» և տպագրուած է Վենետիկում։ Այս տեղեկութիւնների վերայ պէտք է աւելացնել և մի երկու ուրիշ տեղեկութիւն, որ, ինչպէս երևում է, հանգուցեալ գիտնականը մոռացել է լինել իւր թարգմանութեան յառաջաբանում և որ սակայն կարևոր են շարականների մասին լիակատար գաղափար կազմելու համար։ Այդ տեղեկութիւններից առաջինն այն է, որ մեր գրականութեան մէջ այլ ևս կան բազմաթիւ շարականներ, զանազան վարդապետների գրչի արդիւնք, բայց նոքա պարականոն են համարուում և չեն երգուում եկեղեցւում, որովհետև չեն մտած Շարականի մէջ, որի վերջնական խմբագրութիւնը եղել է ԺԳ դարում։ Երկրորդն այն է, որ շարականների առաջին ընտրութիւնը եղել է 645 թուին՝ Ներսէս Շինող կաթողիկոսի ժամանակ և կատարուել է յայտնի Շիրակայ Դպրեվանքի առաջնորդ Բարսեղ ձոնի ձեռքով, որովհետև շարականների թիւը այդ ժամանակները այնքան բազմացած է եղել, որ դժուար է եղել որոշել, թէ ո՞րը նոցանից պէտք է երգել եկեղեցւում և ո՞րը — ոչ։ Մեր եկեղեցական պատմութիւնից յայտնի է մի դէպք, երբ շարականների խառնակ գրութիւնը մեծ խռովութիւն է յարուցել և հէնց պատճառ է եղել վերոյիշեալ ընտրութիւնը անել տալու գործողութեան։

Մի անգամ վարդավառի տօնին Բագաւանի եկեղեցում հարկաւոր է եղել ութ զանազան «Հարցի» շարական փոխել: Ծոնի ընտրած շարականները կոչուել են «Ծոնընտիր»⁶⁰⁾:

Հետաքրքրական են և Ասողիկի ու Լամբրոնացու

⁶⁰⁾ Ս. Էջմիածնի միարան Սահակ վարդ. Ամատունին, որ ուսումնասիրել է Մայր-Աթոռի մատենադարանում գտնուած շարականների ձեռագրերը (73 հատ) և իւր այդ ուսումնասիրութեան արդիւնքը «Հարականների ուսումնասիրութիւն» խորագրով տպագրել է Արարատում, համաձայն չէ Էմինի հետ «շարական» խօսքի ծագման և նշանակութեան մասին: Նորա կարծիքով շարական բառը առաջ է եկել Հայոց «շար» բառից և ոչ թէ սեմիտական. շէր կամ շիր բառերից, որովհետեւ այդ դէպքում նա չէր լինիլ «շարական», այլ «շէրական» կամ «շիրական», որ մենք ոչ մի տեղ չենք պատահում: Յովհաննէս Մամիկոնեանի մէջ բերած շէրը—«կերան դադանք զմարմինս դիականցն վարապայ և գերացան».

Առկ կերեալ ուռաւ որպէս զարջ:

Եւ ազուէս հպարտ եղև քան զառիւծ.

Գայլ՝ քանզի շատակեր էր, պայթեաց.

Եւ արջ, քանզի զոր ուտէն՝ զմնայ առ ինքն, ի սովոյ մեռաւ.

Անդեղը քանզի ազահք էին, նստան և այլ ոչ կարացին վերանալ:

Մկունք, քանզի շատ կրեցին ի ծակն, ոտքն մաշեցան,— որ ծառայել է հիմք Էմինին եզրակացնելու, թէ շարական բառը ծագում է հէնց նորանից, այսինքն մեր գրականութեան մէջ ևս գործածուած «շէր» բառից, հաւանական չէ, որովհետեւ թէև «շէր» նշանակում է երգ, բայց, ինչպէս երևում է թէ մէջ բերած և թէ ընդհանրապէս «շէր» վերնագիր կրող երգերի ձևից ու ընդհանրակութիւնից, նոքա զանազան ձևի ու բովանդակութեան աշխարհական երգեր են և բոլորովին չեն համապատասխանում մեր շարականներին: Արժ. վարդապետի ասելով, շարական բառը երգի անուն էլ չէ, այլ երգերի դասաւորութեան, շարքի, և նշանակում է հոգևոր երգերի մի խումբ, շարականաչափ տօների մի շարք կամ կարգ: Հարականները հին ժամանակները կոչուել են «հոգևոր երգեր», իսկ նոցա հաւաքածուն, գիրքը կոչուել է «Երգարան, հոգեյից Մատեան

Ատենաբանութեան թարգմանութիւնների յառաջաբանները: Առաջնում Էմինը իրան նպատակ է դրել ուրոշել չորս կէտ՝ ինչու է Ստեփաննոս Տարօնեցին կոչուում Ասողիկ կամ Ասողնիկ և ինչ է նշանակում այդ մակդիրը, երբ է ծնուել և վախճանել Հեղինակը, երբ է դրել նա իւր պատմութիւնը և ինչպէս է հասել այդ պատմութիւնը մեր ձեռքը: Հիմնուելով այն հանգամանքի վերայ, որ թէ հին ժամանակները և թէ ներկայումս Հայոց «ասել» բալը դործ է ածուել ու «երգել» բառի նշանակութեամբ, նա Ասողիկ կամ Ասողնիկ մակդիրը առաջ եկած է համարում ասող և ասողն գերբայից և հաստատապէս եզրակացնում է, որ այդ մակդիրը նշանակում է երգիչ, երաժիշտ և որ Տարօնեցին այդպէս է կոչուել, որովհետեւ հմուտ է եղել եկեղեցական երաժշտութեան, երգեցողութեան: Նա կարծում է, որ Տարօնեցին ծնուած պէտք է լինի մօտաւորապէս 928 թուին և վախճանած 1041—1045 թուականներին: Այդ եզրակացութեան նա գալիս է, մի կողմից աչքի առաջ ունենալով Գրիգոր Մագիստրոսի Գէորգ վարդապետին գրած ԿԲ թուղթը, որի մէջ նա խնդրում է ուղարկել իրան «Երեմիա մարգարէի մեկնութիւնը», «զոր գրեալ է Ասողնկայ երջանիկ ծալրագոյն ծերոյն», միւս կողմից էլ աչքի առաջ ունենալով նորա պատմութեան երրորդ գլուխը Է գլուխը, որի մէջ նա խօսում է Անանիա կաթողիկոսի իբրեւ իւր ժամանակակցի մասին, որի օրով հիմնարկուել էին շատ վանքեր, որոնց գիտնական վարդապետներից մի քանիսին նոցա ծերութեան ժամանակ նա առիթ է ունեցել տեսնել ու լսել իւր մանկութեան օրերում: Եթէ 'ի նկատի առնենք, որ Գրիգոր Մագիս-

տրոսը սկսել է գործել 1041 թուին, Անանիա կաթողիկոսը գահ է բարձրացել 943 թուին, և ենթագրենք, որ 943 թուին մեր Հեղինակը, գոնէ, 15 տարեկան է եղել, կ'ստանանք ճիշդ այն թուականները, որ մէջ է բերում Էմինը: Թէ երբ է գրել Տարօնեցին իւր պատմութիւնը—, դժուար է ճշգիւ որոշել, որովհետեւ այդ մասին մենք ոչ մի տեղեկութիւն չենք գտնում մեր դրականութեան մէջ, բայց 'ի ն'ատի առնելով այն հանգամանքը, որ նա իւր պատմութիւնը հեղինակել է Սարգիս կաթողիկոսի յանձնարարութեամբ, կարելի է հետեցնել, որ նա իւր «Աշխարհապատում գիրքը» սկսել ու վերջացրել է 992—1019 թուականների միջոցում, որովհետեւ Սարգիս կաթողիկոսը գահակալել է 27 տարի—992—1019-ը: Հանգուցեալ գիտնականի կարծիքով Տարօնեցու պատմութիւնը մեր ձեռքը ամբողջութեամբ չի հասել, որովհետեւ Արիստակէս Լաստիվերտեցին, որ շարունակել է նորա պատմութիւնը, ասում է՝ «Ստեփաննոս Տարօնեցի, որ զԱշխարհապատում գիրսն շարագրեաց սքանչելի յօրինուածովք՝ սկսեալ 'ի մարդն առաջին և գալ բովանդակէ զպատմութիւն իւր 'ի վախճսն Գազկայ», այն ինչ մեր ձեռքը հասած խմբագրութեան մէջ պատմութիւնը սկսուում է ոչ թէ առաջին մարդուց այլ Աբրահամի 75 թուականից, և վերջանում է ոչ թէ 1020 թուականով, որ Գազկի մահուան թուականն է, այլ 1000 թուականով, որ Գազկի թագաւորութեան 11 տարին է: Որ Արիստակէսի ասածը Ասողկի պատմութեան սկզբի մասին ճիշդ է—, այդ մասին կասկած չի կարող լինել, որովհետեւ ինքը Ասողկը իւր պատմութեան երկրորդ գիրքը սկսում է հետեւեալ խօսքերով՝ «Մենք մեր պատմութիւնը սկսելով առաջին մարդուց—մեր նախահայր Ագամից» և այլն, իսկ որ նա նորան հասցրած է եղել մինչև Գազկի մահը—, այդ

դժուար է որոշել, որովհետև պատմութեան լիշատակարանի մէջ ինքը հեղինակը ակնարկում է այնպիսի դէպքերի կամ անցքերի վերայ, որոնք պատահել են 1004 թուին: Բացի սորանից, Էմինը կարծում է, որ պատմութեան երկրորդ գիրքը մեր ձեռքն է հասել աղաւաղուած կերպով, որովհետև նորա ցանկի մէջ նշանակուած է վեց գլուխ, իսկ բնագրի մէջ կայ միայն չորս գլուխ: Նորա ասելով, պատմութեան սկզբնական խմբագրութեան մէջ եղել է ոչ վեց և ոչ չորս, այլ հինգ գլուխ, որովհետև թէև պատմութեան մէջ կայ միայն չորս գլուխ, բայց նոցա մէջ, ինչպէս ցոյց են տալիս ցանկում դրուած գլուխների խորագրերը, պատմուած է հինգ գլխի պատմութիւն, իսկ վեցերորդ գլուխը կրկնութիւն է չորրորդ գլխի պատմութեան, միայն ուրիշ խմբագրութիւնից կամ վարիանտից առնուած:

Երկրորդում, այսինքն Ատենաբանութեան յառաջաբանում Էմինը մէջ բերելով Լամբրոնացու կենսագրութիւնը 'ի միջի այլոց, երկար կանգ է առնում այն յարաբերութեան վերայ, որ ունեցել է Հայոց ալֆ նշանաւոր եպիսկոպոսը դէպի իւր ժամանակակից Լեոն Բ. թագաւորը և դէպի արևելեան վարդապետները: Մեզ համար մասնաւորապէս հետաքրքրական է այն դիրքը, որ բռնում է հանգուցեալ գիտնականը Լամբրոնացու և Հաղպատացուց վիճաբանութեան հանգամանքները պատմելու ժամանակ: Մեր գիտնականը հոգևով և սրտով միանում է Լամբրոնացու հետ, ամեն բանում մեղադրելով Տուտէի որդուն Գրիգորին և Քօբայրեցի Դաւթին և ամեն բանում արդար ու իրաւացի համարելով Ներսիսին: Որ Լամբրոնացին մաքուր, քրիստոնէական հոգւոր առլցուած, քրիստոնէական սիրով ոգևորուած մի մարդ է եղել—, դորանում ոչ մի կասկած չի կարող լինել, որ նա ինչ որ արել է, անկեղծութեամբ է արել—,

դորանում էլ չի կարելի կասկածել, բայց որ նա չի ճանաչել լատիններին ու Բիւզանդացւոց, այդ էլ ճշմարիտ է: Եւ այդ էլ շատ զարմանալի է, որովհետեւ այդ ժամանակները արդէն սկսուել էին պարզ կերպով որոշուել արեւմտեան եկեղեցու ձգտումները Հայոց եկեղեցու վերաբերութեամբ, իսկ Բիւզանդիոնի չար դիտաւորութիւնները պէտք է որ նորան յայտնի լինէին թէ հեռաւոր և թէ մօտաւոր անցեալից: Ի՞նչ էր անում Լամբրոնացին: Նա Տարսոնի եկեղեցու մէջ ներմուծում էր այնպիսի կարգ ու կանոններ, որոնք բոլորովին հակառակ էին Հայոց եկեղեցում արդէն ժողովներով ու կաթողիկոսների կարգադրութեամբ ընդունուած կարգերին: Նա զգեստաւորուում էր լատինների ու Յոյների պէս, օրը եօթ անգամ ժամասացութիւն էր կատարում, իւր վիճակի վանքերում հրամայում էր գիշերալին, քնելուց առաջ կատարելիք աղօթքը եկեղեցում անել, հրամայում էր արեղաներին օրը մէկ անգամ հաց ուտել, միանձանց ձեռնադրութեան գործում հետևում էր օտարների օրինակին և առաջարկում էր Լեոնին մեծ տօներին ու հանդիսաւոր օրերին աւետարանը լունարէն կարդալ և ալլն և ալլն: Եւ այս բոլորը անելով, նա իրան արդարացնում էր նորանով, որ Յոյները և լատինները այդպէս էին անում, որ տիեզերական ժողովներում այդպէս է կարգադրուած կատարել: Երբ որ էլ Հայոց արեւելեան վարդապետները գրում, ցոյց էին տալիս նորա այդ ներմուծած նորութիւնները և խնդրում ու պահանջում էին վերացնել նոցա իբրև Հայոց եկեղեցում չընդունուած բաներ, նա բարկանում էր և կոչում էր նոցա տգէտ, եկեղեցու դռները դր կողմից փակուելն ու բացուելը չիմացող, աշխարհականների հետ նստող-վերկացող, ուտող, խմող, արբեցող և ալլն: Լեոնին էլ, որ լսելով Հաղպատացւոց բողոքներին, հրամայում

էր նորան ձեռք վերառնել նորութիւններից և ինքն իրան չմոռանալ, նա անձնավստահ կերպով պատասխանում էր, որ նա իրաւունք չունի խառնուելու եկեղեցական գործերին, որ նա չպէտք է ունկնդիր լինի տգէտների խօսքերին, որ ինքը իւր գործողութիւնների մէջ առաջնորդուում է միայն քրիստոնէական սիրով և որ, եթէ թագաւորը ցանկանում է, որ ինքը թողնէ իւր նորութիւնները, թող ինքն էլ թողնէ իւր պալատում և տէրութեան մէջ ընդունած նոր կարգերը: Մենք, ճշմարիտ, չգիտենք, թէ էմինը, եթէ նա քրն-նադատական աչքով նայէր Լամբրօնացու արածների ու գրածների վերայ, բոլորովին կմիանար նորա հետ, նորա բերանով կհայհոյէր, կվատաբանէր հակառակ կուսակցութիւնը: Միթէ Լամբրօնացու ժամանակ (1153—1198) լատին և յուն եկեղեցիներում ընդունուած կարգերն ու կանոնները կարող էին ապացոյց համարուել, որ Հայոց եկեղեցում էլ պէտք է այդ կարգերը լինէին, միթէ Նիկիոյ ժողովում սահմանուած կարգերը իւրեանց ոչ էական մասերում չէին կարող ժամանակի ընթացքում հնանալ և չհամապատասխանել Հայոց երկրի թէ քաղաքական և թէ հասարակական դրութեան և փոփոխութեան ենթարկուել համեմատ ժողովրդի կարիքներին ու պահանջներին, և, վերջապէս, միթէ կարելի էր համեմատել եկեղեցական կարգերի փոփոխութիւնը Լեոնի դրած նոր կարգ ու կանոնի հետ: Ընչից էր եզրակացնում Լամբրօնացին, որ Տուտէորդին և Քօբայրեցին տգէտ էին. միթէ նորանից, որ նոքա պահանջում էին, որ նա չխանգարէ Հայոց եկեղեցու կարգերը: Քրիստոնէական սէրը անկասկած լաւ բան է, բայց այդ այն ժամանակ և այն դէպքում, երբ նոքա, որոնց ցոյց է տրուում այդ սէրը, ինքեանք ևս միատաբար և անկեղծութեամբ ընդունեն այդ, և ոչ թէ

ինչպէս Լատինները ու Բիւզանդացիք, որոնց բերանում
այդ վեհ զգացմունքը միայն կեղծիք ու դիմակ էր
կլանելու Հայոց ազգային եկեղեցին և զրկելու Հայոց
ազգը իւր ամբողջութիւնը պահպանելու գլխաւոր նե-
ցուկից: Այդ սէրը շատ լաւ էին հասկանում Բաբգէն-
կաթուղիկոսը և Հայոց եկեղեցու միւս ներկայացուցիչ-
ները, երբ նոքա մերժում էին Քաղկեդոնի ժողովը և
բաժանուում էին Յոյներից, այդ սէրը լաւ էին հա-
կանում և այն հոգեւորականներն ու աշխարհականները,
որոնք բարձրաբարառ աղաղակում էին, թէ մենք
Յոյների հետ չենք ուզում մինչև անգամ արքայութիւն
երթալ, վերջապէս, այդ սէրը լաւ էին հասկանում և
Հաղպատեցիք, երբ Տուտէորդու բերանով պահանջում
էին, որ Լամբրոնացին հեռու կենայ Լատիններից և
Յոյներից: Դիցուք թէ Հայոց եկեղեցին իւր մի քանի
ծիսական կարգերով շեղուել էր Նիկիոյ Սահմանադրու-
թիւնից, միթէ ամեն մի հայ եպիսկոպոս իրաւունք
ունէր ինքը իւր նախաձեռնութեամբ ձեռնարկել վե-
րականգնելու խանգարուած կարգերը. ապա ինչո՞ւ հա-
մար էր Հայոց հայրապետը, չէ՞ որ կաթուղիկոսի իրա-
ւունքն էր կարեւոր դէպքերում ազգային-եկեղեցական
ժողովներ գումարելը և նորա միջոցով ամեն մի կա-
րեւոր եկեղեցական խնդիր կարգաւորելը ⁶¹⁾: Լեւոն թա-
գաւորը, որի արած «ռեֆորմների» հետ Լամբրոնացին
համեմատում է իւր փոփոխած կարգերը, կարող էր և՛
դատարանական նոր կարգ ու կանոն հաստատել և՛
հարկերի ու տուրքերի նոր սխտեմ մտցնել և՛ աւատա-

⁶¹⁾ Հռոմկլայի եկեղեցական ժողովի սահմանադրութիւնը
այդ դէպքում չէր կարող ծառայել հիմք Լամբրոնացուն, որով
հետև միութեան խնդիրը, որի հետևանքը կարող էր համա-
րուել Յարութի եկեղեցում եղած կարգերի փոփոխումը, չէր
կայացաւ:

կանութեան կարգը ընդունել և, վերջապէս, իւր պաշտի սարքը ու կարգը փոխել, որովհետեւ նա անձնիշխան տէրն էր իւր երկրի, իսկ Լամբրոնացին միայն Տարսօնի վիճակաւոր եպիսկոպոսն էր:

Մեզ թուում է, որ Լամբրոնացին իւր նամակում, որ նա 1198 թուին ուղղել է Լեոնին իբրեւ պատասխան Հաղպատացւոց դրածներին, աղաւաղում է Տուտէ-որդու թղթի իմաստը: Հաղպատացիք պահանջելով, որ Տարսօնի եպիսկոպոսը հեռու կենայ Լատիններից ու Յոյներից, դուրանով, ի հարկէ: չեն կամեցել ասել, որ նա թշնամութեամբ ու ատելութեամբ վերաբերուէ դէպի միւս եկեղեցիները, խտրութիւն անէ Հայի, Յոյնի, Եգիպտացու կամ Ասորու մէջ և կամ ինքը չմտնի ուրիշ եկեղեցի, ուրիշներին էլ իւր եկեղեցին չընդունէ, այլ որ նա իւր այդ մօտ յարաբերութեան զոհ չբերէ Հայոց եկեղեցին, օտարների ազդեցութեան ներքոյ չը փոփոխէ Հայոց եկեղեցու կարգերը: Լամբրոնացին զարմանում է, թէ քնչպէս կարող է ինքը չընդունել Յոյներին, որոնք մտնում են Հայոց եկեղեցին մեծ երկիւղածութեամբ և առատ ընծաներով, որոնց արդիւնքով կերակրուում են Տարսօնի աղքատները և պահուում է Սկեւռայ վանքը: Որ Հայոց եկեղեցին և հայ հոգեւորականութիւնը, բացի մի քանի մասնաւոր դէպքերից, որոնք հետեանք են եղել օտարների Հայերի դէմ յարուցած կրօնական հալածանքների, միշտ սիրով ու համբերատար հոգւով են վերաբերուել դէպի միւս եկեղեցիները ու նոցա հոգեւորականութիւնը, — այդ պատմական փաստ է, բայց որ Լամբրոնացին օտարներին նմանելու համար Հայոց եկեղեցում ամեն բան կատարում էր լատին և յոյն եկեղեցիների նման, այդ, ի հարկէ, չէին կարող համբերել և թոյլ տալ հայ եկեղեցու անկախութեան նախանշանդիր վարդապետները: «Յոյնե-

ըը գալիս են մեր եկեղեցին լիաբուռն ընծաներով», ասում է նա: Այո՛, պապերն էլ երբեմն քօղ ու գաւազան, երբեմն էլ թագ ու պալիում էին ուղարկում մեր կաթողիկոսներին, բայց դորա հետ միասին ուղարկում էին և լատին եկեղեցու ծխարանը: Հաղպատացիք կարծում էին, թէ պէտք է վախենալ Լատիններից և Յոյներից մինչև անգամ և այն ժամանակ, երբ նոքա գալիս էին Հայոց մօտ ընծաներով, որովհետև նոքա նմանում էին այն ընծայաբեր Դանալիդներին, որոնց մասին անմահ Վիրգիլիոսն ասում է՝ „Timeo Danaos et dona ferentes“: Եմինը, ի միջի ալլոց, սիրով կանգ է առնում Լամբրոնացու այն պարբերութեան վերայ, որով նա վերջացնում է իւր Լևոնին ուղղած նամակը— «Որովհետև ես տեսնում եմ Քրիստոսին, որ ասում է իւր սպասաւորներին՝ «Որ ոք լուծցէ մի ինչ 'ի պատուիրանացս յայցսանէ ի փոքունց, և ուսուցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութեան երկնից», իսկ այնտեղ ես մեծ եմ կամենում լինել, և ոչ թէ փոքր»: Դուրս է գալիս, ուրեմն, որ Լամբրոնացին իբրև Քրիստոսի սպասաւորներից մէկը վախեցել է, որ պատուիրանազանց գտնուի և փոքր կոչուի երկնքի արքայութեան մէջ, եթէ միայն չփոփոխէ Հայոց եկեղեցու կարգերը: Արդեօք Հայոց եկեղեցու նորա փոխած կարգերից ո՞ր մէկն էր, որ չէր համապատասխանում Քրիստոսի պատուիրանքին: Խնչու համար, եթէ Հայոց եկեղեցին երրորդ, վեցերորդ և իններորդ ժամերը միասին էր կատարում, դուրանով լուծում էր Քրիստոսի պատուիրանքը: Ո՞րտեղ, Քրիստոսի ո՞ր պատուիրանքի մէջ է ասուած, թէ օրը եօթն անգամ պէտք է ժամասացութիւն կատարել. երբ և ո՞րտեղ է Քրիստոս պատուիրել, որ մեծ տօներին բոլոր եկեղեցիներում աւետարանը յունարէն կարդան: Չէ, մեղ թուում է, որ Տարսօնի քսնքարաւոր եպիսկոպոսի

վերոյիշեալ պարբերութիւնը մի գեղեցիկ ճարտասանական ձև ու ոճ է, ուրիշ ոչինչ: Մենք կարծում ենք, որ Լամբրոնացին Հայոց եկեղեցու կարգերն անփոփոխ պահելով էլ կարող էր մեծ կոչուել երկնքի արքայութեան մէջ ⁶¹)...

ԳԼՈՒԽ Ժ.Ձ.

Էմինի պատմական գրուածներն են՝

Объ Аршакидахъ.

О Началѣ династіи Аршакидовъ.

Армянскіе, Кушанскіе и Маскутскіе Аршакиды.

О началѣ и прекращеніи династіи армянскихъ Аршакидовъ.

Время установленія армянскаго лѣтосчисленія.

Объ отпаденіи грузинской церкви отъ армянской.

Дѣйствительно-ли Цимисхи — прозвание императора Іоанна, значитъ „Adolescentulus“.

Династическій списокъ Хайкидовъ въ исторіи Арменій Мойсея Хоренскаго.

О памятникахъ древностей въ Русской Арменіи и о походахъ Руссовъ на Партавъ.

Объ армянской церкви въ г. Карсѣ.

Թէ և Էմինը իւր նամակում, որ մէջ բերինք ան-

⁶¹) Մենք կարծում ենք, որ մեր ճարտասան եպիսկոպոսը վերջերումն, երբ նա 1197 թուին մի առանձին դեսպանութեան ղուլի անցած Գրիգոր Չ Ապիրատի և Լևոնի յանձնարարութեամբ գնաց Բիւլանդին Ալեքսիոս Գ Անգեղոսի մօտ կրօնական նպատակներով և ձեռնունայն վերադարձաւ, արդէն պէտք է հասկացած լինէր, որ ինքը սխալուում է:

ցեալ գլխում, ասում է, թէ իւր գլխում դեռ շատ մըտքեր են պտոյտ գալիս, դեռ շատ բան կայ անելու զանազան ոչ պատմական, այլ գրական խնդիրների վերաբերութեամբ, բայց պէտք է նկատել, որ նորա գլուխը՝ 81 թուականից հէնց զբաղուած էր գլխաւորապէս պատմական խնդիրներով։ Եւ այդ շատ բնական էր, որովհետեւ ամեն մի հայագէտ իւր ուսումնասիրութեան գործի ասպարիզում առաջ թէ յետոյ անպատճառ ընդհարում է Հայոց պատմութեան զանազան երկրային շրջաններին, որոնց ալսպէս, թէ այնպէս լուծուելուց, պարզուելուց յաճախակի կախումն է ունենում և նոցա ուսումնասիրութիւնների ու հետազոտութիւնների վիճակը։ Դորան պէտք է վերագրել և այն հանգամանքը, որ Հայոց գրականութեամբ պարապելու ձգտման հետ միասին գիտնական աշխարհում առաջ է գալիս ձգտումն և մի տեսակ սէր Հայոց պատմութեան ուսումնասիրութեամբ ևս պարապելու։ Հայագիտութեան այդ երկու ճիւղի ուսումնասիրութեան գործը ևս զուգընթաց և միասին են առաջ գնում, միմեանց օգնելով, միմեանց լրացնելով, միմեանց պարզաբանելով։ Ժամանակի ընթացքում ինչպէս որ Հայոց գրականութիւնը սիրողների մէջ առաջ է գալիս ցանկութիւն ունենալու հայ գրականութեան մի ամփոփ պատմութիւն, որ 65 թուին իւր «Պատմութիւն Հայոց դպրութեան» գրքով մասամբ լրացնում է հայր Գարեգին Զարբանալեանը, նոյնպէս և զուգընթացաբար առաջ է գալիս նոյն սիրողների մէջ ցանկութիւն ունենալու մի քննական-գիտական Հայոց պատմութիւն, որ դարձեալ միայն մասամբ լրացնում է 1880 թուին Գարեգաշեանը իւր «Քննական պատմութիւն Հայոց» գրքով։ Էմինը, որ իւր գրական գործունէութեան մեծ մասը նուիրել էր Խորենացու ուսումնասիրութեան, ի հարկէ, ամենից ա-

առջ պէտք է ընդհարուէր Հայոց պատմութեան զանազան կնճռոտ խնդիրներին և օր առաջ ցանկանար և ինքն ևս նպաստէր մի քննական-գիտական լիակատար Հայոց պատմութեան առաջ գալուն: Սակայն նա այդ մի շատ կարևոր ու դժուար գործ էր համարում, և կարծում էր, որ այդ մի մարդու ոյժից վեր է, ուստի և առաջարկում էր առաջ առանձին, առանձին մենագրութիւններով Հայոց պատմութեան զանազան շրջանների մասին նիւթ պատրաստել, որպէս զի ապագայում քննիչ պատմագիրը հոյ ունենայ իւր ոտքի տակ, մշակուած նիւթ ունենայ իւր ձեռքին, որ կարողանայ հաստատուն կերպով կառուցանել իւր քննական-գիտական պատմութեան ամբողջ շէնքը: Նա ինքը իւր համար իբրև պատմութեան ուսումնասիրութեան նիւթ ընտրում է Հայկազանց շրջանը և իբրև առաջին մենագրութիւն հրատարակում է իւր վերոյիշեալ „Моисей Хоренский и древний Эпосъ армянскій“ գործը, որ արքան գրական, այնքան էլ պատմական նշանակութիւն ունի: Այդ մասին նա 1881 թուի նոյեմբերի 24-ին գրում է իւր ընկերին՝ «Այս մի քանի տողերիս հետ միասին դու կստանաս և իմ մի փոքրիկ բրոշիւրը, որ, կարծես, քեզ համար շատ էլ անհետաքրքրական չպէտք է լինի: Դու այդ գրքոյկը կկարդաս ինչպէս մի քան, որ դուրս է եկել մի այնպիսի անուղղայ գրչակի ձեռքից, որ հին Հայաստանին վերաբերեալ իրերի ուսումնասիրութեան գործում ոչ հանգիստ և ոչ դադար ունի: Այդ բրոշիւրը Մովսէս Խորենացու պատմութեան քննական ուսումնասիրութեան սկիզբն է: Դորան պէտք է հետևեն և ալլ այդ տեսակ մենագրութիւններ: Ես այնպէս եմ կարծում, որ միայն առանձին մենագրութիւններով կարելի է և պէտք է մշակել մեր պատմութիւնը, որ ապակաւին չի ենթարկուել քննադատութեան: Միայն այս-

պիսի ճանապարհով կպատրաստուի այն նիւթը, որ ապագայ քննիչ-պատմագրի համար պէտքական կլինի»։ «Եպոսին» պէտք է հետևէին հետևեալ մենագրութիւնները՝ «Շամիրամի զրոյցը հայկական աղբիւրներին համեմատ», «Հայոց հեթանոսութիւնը» և «Հայկազանց հարստութեան ցուցակը», բայց միայն դուրս եկաւ վերջինը, որովհետև մի կողմից ծերութիւնը, միւս կողմից էլ հիւանդութիւնը արգելք եղան նորան այնուհետև աշխինքն 1884 թուից, այլ ևս լուրջ կերպով պարապելու։ „Династическiй списокъ Хайкидовъ“, ինչպէս կոչուում է այդ վերջին մենագրութիւնը ռուսերէն, Հայոց պատմութեան ուսումնասիրութեան համար ոչ պակաս նշանակութիւն ունի, քան թէ «Եպոսը»։ Մինչև 1884 թուականը, երբ հրատարակուել է այդ մենագրութիւնը, յայտնի էր, որ Հայոց հնագոյն պատմութեան Հայկազանց կոչուած շրջանում Հայաստանը կառավարուել է միայն Հայկի ցեղից սերուած նահապետների, իշխանների և պատկառուների ձեռքով։ Եմինը իւր այդ մենագրութեան մէջ քննելով Խորենացու առաջին գրքի 20 և 21 գլուխները, Յովհաննէս Դրասխանակերտեցու պատմութեան և Սամուէլ Անեցու ժամանակագրութեան Հայկազեան հարստութեան մասին պատմածները և մանրակրկիտ լեզուագիտական հետազոտութեան ենթարկելով Հայկազեան իշխանների անուանական ցուցակը, գալիս է այն եզրակացութեան, որ Հայկազանց կոչուած հարստութիւնը բաղկացած է երեք առանձին հարստութիւնից, որոնցից առաջինը սկսում է Հայկով և վերջանում է Անուշաւանով, երկրորդը սկսում է Պարուրով և վերջանում է Հայկակ Բ-ով և երրորդը սկսում է Տիգրանով և վերջանում է Վահէով, իսկ առաջին և երկրորդ հարստութեան միջոցը բռնում են «անազգի» իշխանները, որոնք չեն

կազմում առանձին հարստութիւն, այլ առանձին-առանձին միմեանց հետ արեւակցութեամբ և յաջորդութեան իրաւունքով չ'կապուած բռնականներ են: Առաջին հարստութեան իշխողները սեմիտական ծագումն ունին և նուաճողներ են, երկրորդինը Հայ են, երրորդինը պարսկական ծագումն ունին և նոյնպէս նուաճողներ են, իսկ բռնականները հայ են: «Династическій списокъ Хайкидовъ» մենագրութիւնը կարեւոր է և նորանով, որ նորա մէջ առաջին անգամ քննադատութեան է ենթարկուած հանգուցեալ Միքայէլ Չամչեանի ժամանակագրութիւնը և ըստ արժանւոյն դնահատուած: Դուրս է գալիս, որ 1786 թուականից, երբ Հոտտարակուել է Չամչեանի եռահատոր ստուար պատմութիւնը, մինչև 1881 թիւը իբրև ճշմարտութիւն ընդունուած Հայոց նոր պատմահօր Հայկազանց հարստութեան ժամանակագրութիւնը ոչ մի հիմք չունի, և կարելի է համարել Չամչեանի միայն երևակայութեան պտուղը: Եւ ուրիշ կերպ լինել էլ չէր կարող, քանի որ Հայկազանց հարստութեան պատմութիւնը բռնում է Հայոց պատմութեան հնագոյն շրջանը և բաղկացած է համարեա՞ թէ ամբողջապէս դիւցազնական առասպելաբանութիւնից: Հնագոյն դիւցազնական շրջանը ոչ թէ միայն Հայոց պատմութեան մէջ, այլ և ընդհանրապէս բոլոր ազգերի պատմութեան մէջ գործողութեան որոշեալ տեղ և որոշեալ ժամանակ չունի և չի էլ կարող ունենալ: Մեր ձեռքին գտնուում է հանգուցեալ գիտնականի նամակներից մէկը, որի մէջ խօսք է լինում «Հայկազանց հարստութեան ցուցակի» մասին և պարզաբանուում է նորա Խորենացու առաջին գիրքը պատմականօրէն ուսումնասիրելու դիտաւորութիւնը: «Այն ժամանակ, երբ դու ամենեւին չես սպասում, գրում է նա այդ նամակում (18 Մարտի 1884 թ.), իմ նամակս գալիս է քեզ անկոչ հիւր,

ինչպէս թաթարը, ոչ Ղըրիմինը, այլ Ոսկէսարայինը. և գալիս է ոչ մենակ, այլ բասկալ-բրոշիւրի ընկերակցութեամբ, որ իմ նախկին մրոտումներէս նման պիտի վրդովէ քո հոգու անդորրութիւնը: Խնչ կ'հրամայես անել, թանկագին ընկեր, ես, ինչպէս մի արբեցող մարդ, մոլութեան մէջ եմ ընկել և չեմ կարողանում ձեռք վեր առնել մեր ալեւոր Հայաստանի անցեալը քրքրելուց: Սորմ հետ միասին ուղարկում եմ քեզ իմ մի նոր բրոշիւրս, որ իւր մէջ բովանդակում է Մովսէս Խորենացու պատմութեան իմ սկսած ուսումնասիրութեան շարունակութիւնը: Առաջին հրատարակութիւնը դու արդէն ունիս, ես խօսում եմ «Խորենացու և մեր վէպի» մասին. երկրորդը ահա հասնում է քո ձեռքը: Դորանից յետոյ ես կ'հրատարակեմ երրորդը և այդպէս շարունակաբար, մինչև որ իսպառ վերջացնեմ, իմ հասկացողութեանս համամատ, Խորենացու ամբողջ առաջին գիրքը: Մնացեալ երկու գիրքը ես թողնում եմ միւս գիտնականներին ուսումնասիրելու: Պատրաստ եմ ընդունելու գըլխիս հայհոյանքների և յիշոցների մի ամբողջ տարափ հերձուածողութեանս համար, հայհոյանք ուղղափառ ազգասէրներից, յիշոցներ նախանձոտ և բթամիտ ուսումնակիցներից: Եւ այդ մանաւանդ նորա համար, որ քեզ ուղարկած բրոշիւրիս մէջ պատասխանատուութեան է ենթարկուած և քո ծանօթ Միքայէլ Չամչեանը: Սակայն ինչ և իցէ, վիճակը ձգուած է. Մովսէս Խորենացու առաջին գիրքը պէտք է քամել, ինչպէս որ հարկն է: Հանգուցեալը շատ ճիշտ է նկատում, երբ որ ասում է, թէ ինքը սպասում է իւր հերձուածողութեան համար լսել իւր հասցէին ուղղած հայհոյանքներ և յիշոցներ ուղղափառ ազգասէրներից և նախանձոտ ուսումնակիցներից: Զիշտ է, ասում ենք, նկատում, որովհետեւ ճշմարիտ որ նորա ուսումնասիրութիւնների անա-

կրնակալ եզրակացութիւնները յաճախակի յարուցանում էին անբաւականութիւն հին ինտելլիգենտ սերնդի մէջ, հին սերնդի, որ սովոր էր Խորենացու ամեն մի խօսքի վերայ նայել, ինչպէս սրբութեան վերայ, սովոր էր Ջամ-ջեանի ամեն մի խօսքին կուրօրէն հաւատ ընծայել, չենք ասում արդէն այն, որ նորա ալդ նոր գիւտերի և նորանոր հետազօտութիւնների շնորհիւ հետզհետէ աւելի ու աւելի տալածուող հռչակը շարժում էր նորա ուսումնակիցների նախանձը և դորա հետ միասին նոցա ատելութիւնն ու թշնամութիւնը: Թէ ո՞ւմ վերայ է նա մասնաւորապէս ակնարկում, կոչելով «բթամիտ ու նախանձոտ ուսումնակիցներ» —, մենք չենք կարող ճիշտ որոշել, բայց հաւանական ենք համարում ենթադրել, որ նա այդ խօսքերով յատկապէս ակնարկում է Քերովբէ Պատկանեանի վերայ, որի հետ նորա յարաբերութիւնը 74 թուից լարուած էր: Մինչև իսկ նորա վաղեմի և անենամտերիմ ընկեր Սարգիս Խորասանեանը ևս չէր կարողանում հաշտուել իւր սիրելի ընկերի վերոյիշեալ ուսումնասիրութիւնների ուղղութեան հետ, և նամակներով անդադար իւր անբաւականութիւնն էր յայտնում նորան: «Իմ Հայկազանց հարստութեան ցուցակի ուսումնասիրութիւնը, պատասխանում է նա նորա յայտնած դժգոհութիւններին (84 թ. Յուլիսի 9.), քեզ դուր չի եկել, ինչպէս և շատերին, եթէ միայն ոչ բոլորին, մեր ինտելլիգենտ պահպանողականներին: Ի՞նչ անենք, թող հայհոյեն, թող հերքեն: Այդ բոլոր անհիմն իմաստակութիւններն ինձ չեն կարող կասեցնել: Եթէ իմ կեանքս շարունակուի այլ ևս մի քանի տարի և առողջութիւնս ինձ չդաւաճանի, ես ինձանից յետոյ կ'թողնեմ Խորենացուն քննութեան բովից անցկացրած, մաքրած, որի համար և յետագայ սերունդը ինձ շնորհա-

կալ կ'լինի: Մենք քո հետ այդ չենք տեսնիլ, որովհետեւ մեր օրերը արդէն հաշուած են»:

Իւր „Замѣтки объ древней армянской церкви въ Карсѣ“ փոքրիկ յօդուածը հմինը գրել է „Русск. Вѣдом.“ լրագրում 1879 թուին իբրեւ պատասխան „Московскія Вѣдомости“ լրագրին, որ նոյն թուին Կարսի եկեղեցին Օրթոդոքս եկեղեցի դարձնելու և օրհնելու պատճառով իւր էջերում զետեղել էր А. Д. ստորագրութեամբ և „Турецкая мечеть Гумбетъ-Джами“ վերնագրով մի յօդուած, որով ճշգրտել էր ապացոյց տալ, որ Կարսի հին եկեղեցին Հայոց չի պատկանել, այլ Յունաց: Վէճի առարկան եղել է Հայոց յայտնի «Երկոտասան Առաքելոց» եկեղեցին, որ այնքան «գեղեցիկ յօրինուած» է եղել, որ մինչև անգամ իւր ժամանակին Հայերի և Աբխազների մէջ պատերազմի պատճառ է դարձել: Յայտնի է, որ Բագրատունի Աբաս թագաւորը (928—952) հիմնարկելով այդ եկեղեցին 930 թուին և աւարտելով նորան 942-ին, դորանով դրդում է Աբխազաց Բեր կամ Թեդաս թագաւորի նախանձը, որովհետեւ նորա շինութիւնը «Վիմարդեան արձանօք որձաքար պողովատաշ վիմօք բոլորապէս գմբէթաւորեալ պայծառ զարդուք» նմանում էր Երկնանման խորանի»: Բերը այնքան ամբարտաւանանում է, որ դեսպան է ուղարկում և յայտնում մեր Աբասին, որ նա չ'շտապի օծել եկեղեցին, որովհետեւ ինքը դիտաւորութիւն ունի գալ և քաղկեդոնական ծէսով օծել նորան: Պատերազմ է ծագում և վճռողական ճակատամարտ է տեղի ունենում Կուր գետի ափին: Աբխազների զօրութիւնը խորտակուում է և Բերը բռնուում ու բերում Կարս: Ասողիկ պատմագիրը պատմում է, որ Աբաս գերեալ թագաւորին նախապէս տանում է նորա շէն եկեղեցին, ցոյց է տալիս նորան տաճարի հրաշալի-

քը և ասելով՝ «Տեսցես զգեղեցկաշէն եկեղեցիդ, զի այլ ոչ ես տեսանելոց», հրամայում է փորել նորա աչքերը, որից յետոյ և փրկանք ստանալով, արձակում է նորան։ Այնուհետև այդ եկեղեցին դառնում է առաջ մայր-եկեղեցի Բագրատունեաց մինչև 961 թուականը, երբ Բագրատունեաց մայրաքաղաքը Կարուց քաղաքից փոխադրուում է Շիրակի Անին, յետոյ Կարուց կամ Վանանդայ թագաւորութեան մայր-եկեղեցի մինչև 1068 թուականը, երբ վերջանում է այդ թագաւորութիւնը, և վերջապէս, Կարսի մայր-եկեղեցի մինչև Տաճկաց իշխանութեան ժամանակները, երբ դա 1746 թուին խլուում Հայերի ու վերափոխուում է մզկիթի «Գումբէթլամի» անունով։ 1828 թուին, երբ Ռուսները Կոմս Պասկևիչի հրամանատարութեամբ առնում են Կարսը, Հայերը նորից տիրանում են եկեղեցուն և մի անգամ էլ ջրօրհնեաց հանդէս և զատկական տօն են կատարում նորա մէջ, բայց երբ խաղաղութեան դաշը կռելուց յետոյ, քաղաքը ռուսները նորից վերագարձնում են օսմանցիներին, Հայերը դարձեալ ստիպուած են լինում թողնել եկեղեցին և լաւականանալ «Չուխուր» ու «Փամտան» թաղերի եկեղեցիներով։ Այդ օրից «Առաքելոց եկեղեցին» մնում է Տաճիկների ձեռքին և գործ է ածուում իբրև մթերանոց մինչև վերջին Ռուս-Տաճկական պատերազմը, երբ Կարսը և Անին իւրեանց շրջականերով անցնում են Ռուսաց ձեռքը և եկեղեցին վերափոխուում է «Ուղղափառ սոբոր»-ի Դա դրսից բոլորշի, ութանկիւնի, իսկ ներսից խաչի ձևով շինուած մի տաճար է, կառուցուած կոփածոյ թխագոյն քարից։ Գմբէթը, որ բարձրանում է ներսից առանց սիւնի, դրսից 12 անկիւն ունի 12 առաքեալների արձաններով, որոնք, ՚ի դէպ է ասել, ճարտարապետութեան և քանդակագործութեան արուեստի տեսակէտից մի առանձին արժէք չունին, որովհետև

անարուեստ ձեռքի գործ են: Տաճարը ներկայումս զուրկ է հայկական լիշատակարաններից և արձանագրութիւններից, որովհետեւ թէ դրսից և թէ ներսից նորոգուած է: Ներկայումս չ'կայ և եկեղեցու հարաւ-արեւելեան կողմում գտնուած գմբէթաձև շինութիւնը կամ մատուռը կամարակապ յատակով, որ հին ժամանակներից աւանդութեամբ համարուում էր Աբաս թագաւորի գերեզմանը ⁶³⁾ „Московскія Вѣдомости“ լրագիրը, որ Ռուսաց մամուլի մէջ առաջինն է եղել, որ սկսել է «տենդեցիայով» լի յօդուածներ նուիրել Հայերին և հիմք է դրել ալն հայատելութեան, որ ներկայումս մեծ յաջողութեամբ շարունակում են „Новое Время“-ն և ընկերութիւնը, 1879 թուին, երբ բարեխնամ կառավարութիւնը վեհաձեռնութեամբ յանձնում էր Հայերին իւրեանց նախկին սրբութիւնները՝ Խցկօնքը, Անին, Տիկօւը, Մրէնը, Բագնայրը և նոր նուաճուած երկրում եղած միւս հայկական եկեղեցիներն ու վանքերը, առիթ գտաւ իւր մաղձը թափելու Հայերի գլխին, մեղադրելով նոցա, թէ նոքա իբր թէ ձգտում են տիրապետելու իւրեանց երբէք չ'սպտկանած պատմական շինութիւններին ու տեղերին, ինչպէս, օրինակի համար, Կարսի հին եկեղեցին է ⁶⁴⁾ Պատմում

⁶³⁾ Տես Ս. Առաքելոց եկեղեցու շինութեան մասին Ասողիկ պատմագրի 172—173 երեսները, իսկ նորա նկարագրութեան ու ներկայ դրութեան մասին տես Կրպէի «Կարս քաղաք» գիրքը, էջ՝ 30—33.

⁶⁴⁾ Ռուս գիտնական Բ. Ն. Չեչերինը (В. Н. Чечеринъ) իւր նոր 1898 թուին հեղինակած „Политика“ խորագրով գրութեան մէջ, որ կազմում է նորա „Курсъ Государственной науки“ ընդարձակ աշխատասիրութեան երրորդ հատորը, խօսելով „Московскія Вѣдомости“ լրագրի խմբագիր հանգուցեալ Կատկովի բռնած ուղղութեան մասին, ի միջի պլոց ասում է՝

են, որ այդ ժամանակները մինչև իսկ պնդողներ են եղել, որ Անույ Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցին Հայոցը չի հղել, այլ համ Յունաց կամ Վրացւոց, որովհետեւ նորա պատերը ներսից ծեփած են եղել և ծեփերի վերայ երևելիս են եղել լուսական և վիրական արձանագրութիւնների նշաններ: Բայց եկեղեցու հարաւային պատի վերայ փորագրուած ընդարձակ հայկական արձանագրութիւնը հաստատել է ոչ թէ միայն նորա Հայերին պատ-

«Ունակսիօն կուսակցութեան գլուխ անցաւ մի հրապարակախօս նշանաւոր խելքով և քանքարով բայց դժբաղդաբար զուրկ բարոյական իմաստից և քաղաքական դրութիւնը լրջօրէն հասկանալու ընդունակութիւնից, նա անխնայ հարուածում էր այն, ինչ որ առաջ պաշտում էր, կասկածի տակ ձգելով ազատամտութեան ամեն մի երևոյթ, ցեխ շարտելով բոլոր այն ոյժերի վերայ, որոնք յառաջացել էին ռեֆորմներից: Սակայն նա հասկանում էր, որ միայն ռեակսիօն քարոզելով բան չի դուրս գալ. պէտք է, հասարակութեան վերայ յաջողութեամբ ազդելու համար, դոքա վերայ աւելացնել և հայրենասիրական քարոզութիւն: Բայց հայրենասիրութիւնը աչնիւ մտքով ոչ թէ միայն հաշտուում է ազատամտութեան հետ, այլ և բնականաբար մօտենում է նորան վերջնիս դէմ մաքառել կարելի էր միայն խրախուսելով ամբոխի ամենաստոր ընազդունները, խրախուսելով նորա անիոփոխ զգացմունքները: Սկսուեց հալածանք բոլոր ոռւսահպատակ ազգերի դէմ, որոնք ամբաստանուում էին իբրև սեպագատիստներ և դաւաճաններ: Լեհական ազատամրութիւնը յարմար առիթ եղաւ դորա համար, իսկ երբ նա ընկճուեց, քսութիւններ էին, որ թափուեցին միւսնների վերայ: Եւ ամբողջ փակ աջքերով հետեւում էր իւր առաջնորդին . . . Բայց հասարակութեան կրթուած խաւերում նա շուտով կորցրեց իւր բոլոր կշիռը, իսկ նորա առաջնորդի մահից յետոյ նա ընկաւ ամենամիջին մակերեւոյթից էլ ցած: Գրականութեան մէջ այդ ուղղութիւնը կազմում է մի ցաւալի խառնուրդ շոգմոգութեան և խենէշութեան, իսկ հասարակութեան մէջ նա դեռ բռնուում է աչնուականների տէրութիւնից օժանդակութիւն ստանալու ձգտումով:»

կանելն, ալլ և նորա հիմնարկութեան թուականը (1215), շինութեան հանգամանքները և եկեղեցու օգտին եղած ընծայաբերութիւնները ⁶⁵⁾։ Էմինը իւր յօդուածում, 'ի հարկէ, թուաբանական ճշտութեամբ հերքել է Մոսկուայի լրագրի տասածները, որ և դժուար բան չէր, որովհետեւ նա իւր ձեռքին ունէր պատմական վաւերական յիշատակարաններ, չենք խօսում արդէն մօտ անցեալի, ժողովրդի աւանդութեան, տաճարի ճարտարապետութեան ձևի և միւս կողմնակի հանգամանքների մասին։

„Дѣйствительно-ли „Цимисхій“ — прозвание императора Иоанна, значить „Adolescentulus“ յօդուածում, որ Էմինը կարգացել է Մոսկուայի Հնագիտական ընկերութեան նիստերից մէկում 1880 թուին, նա նպատակ է ունեցել, նախ, հաղորդել Յովհաննէս կայսեր մասին Մատթէոս Եղեսացու թողած տեղեկութիւնները, որոնք բոլորովին տարբերուում են Բիւզանդական պատմագրների մասնաւորապէս Լևոն Դիակոնի նոյն կայսեր մասին պատմածներից, և, երկրորդ, հերքել գիտնականների թիւր կարծիքը կայսեր «Զմշկիկ» մականունն նշանակութեան մասին։ Յայտնի է, որ Միքայէլ Գ կայսեր (856 – 867) մահից լետոյ բիւզանդիոնի գահը ժառանգում է հայկազն Բարսեղ կամ Վասիլ Արշակունին և հաստատում է հայկական հարստու-

⁶⁵⁾ Դուրս է գալիս, որ Յոյներն ու վրացիք են եղել, որ օգտուելով իւրեանց Հայերի վերայ ունեցած իշխանութիւնից, խլել են նոցանից եկեղեցիներ ու վանքեր, հաստ ծեփով ծեփել են նոցա պատերը, որպէս զի չերևեն հայկական յիշատակարանները ու արձանագրութիւնները, և գրել են իւրեանց արձանագրութիւնները։ Տես ուսուցչապետ Մանի „Ани, столица древней Арменіи“ („Братская помощь Армянамъ“, էջ՝ 216)։

Թիւնը Բիւզանդիոնում, որ տեւում է համարեա թէ երկու հարիւր տարի—886—1056 թուականը: Յայտնի է նոյնպէս, որ այդ հարստութեան կայսրների շարքից մի առանձին անուն ու հռչակ են, թողել Լեոն 2 իմաստասէրը, Կոստանդին Ծիրանածինը, Նիկեփորոս Բ Փոկասը և միւսները. մեծ անուն և հռչակ են թողել և շատ հալ զօրավորներ՝ Վարդ-Փոկասը, Վարդ-Սկլերոսը, Մլեհ դոմեստիկոսը, Գուրգէնը, Մանուէլը, Թէոդորոս Բագրատունին, Գրիգոր Տարօնեցին, Վարդանը և միւսները: Բայց ամենանշանաւորը թէ իբրև զօրավար և թէ իբրև կայսր եղել է Յովհաննէս Զրմշկիկը, որ ծնուած է եղել Հայոց Ծովաց աշխարհի Ծովք գաւառի Յերապոլիս քաղաքում, «երուած է եղել Գուրգէնեան ցեղից և բարձրացել է Բիւզանդիոնի գահը Նիկեփորոս կայսեր մահից յետոյ (969—976) ⁶⁶⁾:

Թէ ինչ է նշանակում «Զմշկիկ» մակդիրը և ինչու համար Յովհաննէս կայսրը այդպէս է կոչուել—, Էմինը ինքն էլ չի կարողանում մեկնել, բայց նա հաստատ կերպով հերքում է այն բոլոր մեկնութիւնները, որոնք ընդունուած են ելել գիտնական աշխարհում մինչև 1880 թուականը: Գիտնականներից ոմանք հիմնուելով այն հանգամանքի վերայ, որ Յովհաննէս կայսրը հասակով կործ է եղել, կարծել են, թէ «Զմշկիկ» բառը նշանակում է «կարճահասակ», ոմանք էլ հիմնուելով Լեոն Դիակոնի «մուգակիցես» բառի վերայ, որով այդ

⁶⁶⁾ Յովհաննէս Զմշկիկի տոհմի, գործերի, Թէոփանէ թագուհու հետ ամուսնանալու և կայսր դառնալու հանգամանքների մասին տես «Картинны жизни Византии въ девятомъ вѣкѣ» մեծ յօդուածը, որ մաս-մաս տպագրուեց «Русская Мысль» ամսագրի անցեալ 1898 թուականի մի քանի համարներում: Ելդ պատկերների նիւթը բաղուած է Շլիսբերգէի նոյն նիւթի մասին դրած ընդարձակ աշխատասիրութիւնից:

սլատմագիրը մեկնում է չմշկիկ բառը, կարծել են, թէ այդ բառը, որ աղաւաղուած է և պէտք է լինի «մոյրակիցես», նշանակում է լատիներէն „Adoles centulus“: Հայոց Չմշկիկ բառը, Էմինի կարծիքով, բաղկացած է երկու մասից՝ չմշկ կամ չմուշկ և իկ ածանցից, և այդպիսի սլարզ ձևով գործ է ածուում Միքայէլ Ասորու ժամանակագրութեան մէջ, իսկ Հայոց հեղինակները այդ բառը գործ են ածում ժ դարից սկսած, այն էլ ոչ սլարզ չմուշկ ձևով, այլ «Չմշկածագ» ձևով, որովհետեւ Յերայւսայիս քաղաքը 'ի պատիւ Յովհաննէս կայսեր կոչուել է Չմշկածագ, այսինքն Չմշկիկի ծննդեան անդ, ծննդավայր: Չմշկիկ, Էմինի ասելով, ոչ մի կերպով չի կարող նշանակել կարճահասակ կամ Adoles centulus, այլ մի ուրիշ անյայտ բան: Էմինը հետեւելով Միքայէլ Ասորու պատմածներին, ենթադրում է, որ չմուշկ կարող է նշանակել կամ թագ, կամ լոգիկ և կամ մի որ և է թագաւորական զգեստի մասն, որ կարելի էր հագնել կամ գլխին դնել: Ենթադրելով, որ Հայոց չմուշկ բառը կարող է նշանակել թագաւորական զգեստի մի մասն, մեզ թուում է, որ Էմինը շատ էլ հեռու չէ այդ բառի նշանակութիւնը հասկանալուց. մեզ միայն զարմացնում է այն հանգամանքը, որ Էմինը չի իմացել մի այնպիսի հասարակ բառի նշանակութիւն, որ մինչև ցայսօր ևս հայ ժողովուրդը գործ է ածում Հայաստանի զանազան գաւառներում: Մինչև ցայսօր դեռ գանձակեցիք ու զարբաղցիք չմօշկ կամ չմօշկ ասելով հասկանում են ոտնամանի մի տեսակը, որ հագնում են կանայք և տղամարդիկ. հաւանական է կարծել որ չմուշկ բառից է առաջ եկել և չմշկել բայը, որ շատ հայաբնակ տեղերում է գործածուում և նշանակում է թառամել, թարմութիւնը կորցնել և, գուցէ, չմշկի պէս լինել, չմշկի կերպարանք ստանալ: Մօտաւորապէս ճիշտ է հասկացել

չմուշկ բառի նշանակութիւնը և հանգուցեալ Վիկտոր Լանգլուան, որ արտայայտել է նորաւն „les pantouffles“ բառով և Աստրի ժամանակագրի մեզ հետաքրքրող ամբողջ կտորը թարգմանել է՝ «L'impératrice Théophané fit assassiner Nicéphore parce que celui-ci n'était pas marié avec elle et prit pour époux un certain Jean, sur la tête duquel elle plaça la couronne. Jean portait auparavant les pantouffles de l'empereur et avait des relations adultères avec l'impératrice Jean, surnommé Djemeschigig étant monté sur le trône» ⁶⁷⁾։

⁶⁷⁾ Մենք զարմանում ենք, որ հանգուցեալ զիտնականը չի հաւանում Փրանսիացի հայագէտի այս թարգմանութեան։ Ճիշտ է, դրա մէջ „un certain“ չի համապատասխանում Հայոց «Ոմն» բառին, բայց մնացեալը ուղիղ է և բաւականին ճիշտ կերպով արտայայտում է ընաւորի միտքը— «Իսկ թագուհին Թէոփանէս սպան զՆիկիփոս՝ զի չէր ամուսնացեալ ընդ նմա. և առ զԹովհանէս ոմն այր ինքեան և եղիր նմա թագ, որ և յառաջագոյն կրէր չմուշկ թագաւորին և շնայր ընդ թագուհին. եւ թագաւորեաց Թովհանէս, որ և Չմշկիկն կոչի» (Տես Տեառն Միկայէլի պատրիարքի Ասորոց ժամանակագրութիւն. էջ՝ 389)։ Մեզ թուում է, որ Էմինը իւր ձեռքի տակ ունեցել է Միքայէլ Ասորու ժամանակագրութեան ոչ տպագիր օրինակը, այլ մի բոլորովին ուրիշ օրինակ, որովհետեւ նորա մէջ բերած նշյն կտորի ուղեւերէն թարգմանութիւնը ամենեւին չի համապատասխանում տպագրածին— „Говорятъ, что Теофаню, жена Никифора, убила своего мужа потому, что не была съ нимъ обвѣнчана, взяла себѣ мужемъ Іоанна и возложила на него корону. Онъ предъ тѣмъ какъ творить блудъ съ царицей, подымалъ и клалъ (на себя)—(բառնայր և շնէր) —царскій чмушк... почему и былъ названъ Чмешкикомъ“։ Եթէ որ չմուշկ բառը հին ժամանակներն էլ այժմուայ նշանակութեամբ է գործածուել, ուրեմն հաւանական է ենթադրել, որ Թովհանէս կայսրը կոչուել է Չմշկիկ, որովհետեւ սովորութիւն կամ իրաւունք է ունեցել դեռ կայսր չեղած թագաւորական չմուշկ հագնելու։

„Объ отпаденіи грузинской церкви отъ армянской“ յօդուածը, որ Էմինը գրել է իւր արած Վարդան մեծի թարգմանութեան առթիւ և տպագրել է նոյն թարգմանութեան ծանօթութիւններէ բաժնում, շօշափում է մեր եկեղեցական պատմութեան կարևոր էջերից մէկը: Յայտնի է, որ վրացաց եկեղեցու Հայոցից բաժանուելու դէպքը պատահել է Հայոց Մովսէս Բ և Արքահամ Ա. կաթողիկոսների և վրացաց Կիւրիոն կաթողիկոսի ժամանակները և շարունակուել է համարեա թէ յիսուն տարի, սկսուելով Մովսիսի կաթողիկոսութեան առաջին տարուց և վերջանալով Արքահամի երկրորդ տարում, այսինքն 551—596 թուականը: Յայտնի է նոյնպէս, որ բաժանման պատճառը եղել է մի կողմից վրաց Կիւրիոն կաթողիկոսը, որ մի փառամոլ ու ամբարհաւաճ մարդ լինելով, կամեցել է ինքնագլուխ ու անկախ լինել, միւս կողմից էլ Հայոց Արքահամ կաթողիկոսը, որ փոխանակ հետեւելու իւր նախորդի խոհեմ ընթացքին և հայրական խրատ ու սիրալիւր յորդոր գործ դնելու, գործ է գրել անէծք ու սպառնալիք ⁶⁸⁾: Սակայն գիտնականներից ոմանք, ինչպէս, օրինակի համար, հանգուցեալ Բուսսէն, կասկածանքով են վերաբերուել դէպի Ուխտանէս պատմագրի

⁶⁸⁾ Բացի այդ երկու պատճառից, կայ և մի երրորդը, որի վերայ սովորաբար ուշադրութիւն չեն դարձնում մեր եկեղեցական պատմութիւնը զրոյնները և որ ի նկատի չի առնում և հանգուցեալ Էմինը. Վրացիք բաժանուելով Հայերից և անցնելով ֆեոդալիզմականների կողմը, դորանով ձեռք են բերում Բիւզանդիոնի հոգևոր և մարմնաւոր իշխանութեան բարեհաճութիւնը, որ քաղաքական տեսակէտից մեծ նշանակութիւն ունէր վրացաց համար, որովհետեւ այդ ժամանակները Վրաստանն էլ Հայաստանի մի մեծ մասի հետ միասին գտնուում էր Բիւզանդիոնի իշխանութեան ներքոյ:

պատմածները ալդ դէպքի վերաբերութեամբ, Ուխտանէսի, որ երկու դրացի ազգի եկեղեցիների բաժանման պատմութեան գլխաւոր աղբիւրն է: Կասկածելու տեղիք է տուել նախ, այն, որ ալդ պատմութեան մէջ ոչ մի անգամ չի լիջուում վրաց Գուարամ Կիւրոպաղատի անունը, որի ժամանակ եղել է բաժանմունքը, և, երկրորդ, որ դոյն պատմութեան մէջ իւրաքանչիւր քալում ընթերցողը պատահում է ժամանակագրական անճշգրութիւնների: Էմինը կարծում է, որ Գուարամ Կիւրոպաղատի անունն չլիջուելը մի պատահական բան է միայն, իսկ ժամանակագրութեան անճշգրութիւնները Հայոց պատմագրների աղաւաղուած լինելու արգասիք: Նորա ասելով, երբ որ Հայոց հեղինակների բնագրերը խիստ քննութեան բովից անցնեն, մաքրուած ու զրտուած նորից հրատարակուեն, շատ անճշգրութիւնների հետ միասին նոցա ժամանակագրութիւնն էլ կճշուի ու կարգի կընկնի: Որ Ուխտանէսի պատմածները ճիշդ են—, դորան իբրև ապացոյց կարող է ծառայել այն հանգամանքը, որ նոյնը պատմում են և Մովսէս Կաղանկատուացին ու Յովհաննէս Իրասխանակերտեցին, որոնցից առաջինը իւր պատմութիւնը աւարտել է նորանից առաջ, այսինքն 914 թուին, իսկ երկրորդը կաթողիկոսութիւն է արել մինչև 925 թուականը, ուրեմն իւր պատմութիւնը և «Շարք կաթողիկոսաց Հայոց» գրուածքը գրել է նոյնպէս նորանից առաջ: Իսկապէս Ուխտանէսը (972—992) պատմագիր էլ չէ, այլ հաւաքող, որովհետև նա իւր կողմից համարեալ թէ ոչինչ չի գրել. նա միայն հաւաքել է բոլոր պաշտօնական թղթակցութիւնը, որ փոխանակուել է Մովսէս, Աբրահամ և Կիւրիոն կաթողիկոսների մէջ բաժանման խնդրի մասին և կապել է նոցա միմեանց հետ, ամբողջացրել է նոցա, պահպանելով խիստ անաչառու-

թիւն, թէ և այդ թղթակցութիւնից մի քանիսն էլ յօգուտ Հայերին չեն խօսում:

Յայտնի է, որ Հայոց տօմարական թուականը հաստատուել է Նղիվարդեցի Մովսէս Բ կաթողիկոսի ժամանակ 551 թուին Դվնայ երրորդ ժողովում: Սակայն ասողներ կան, որ մեր պատմութեան այդ նշանաւոր դէպքը եղել է ոչ թէ Մովսէսի, այլ Ներսէս Բ-ի ժամանակ, ոչ 551 թուին, այլ 553-ին: Այդպէս պնդողները իւրեանց կարծիքը հիմնում են Ասողիկ պատմագրի խօսքերի վերայ, որ ուղղակի ասում է, թէ Փրկչի ծննդից մինչև Դվնայ ժողովը և Հայոց թուականը անում է 553 տարի: Էմինը իւր „Время установления армянскаго лѣтосчисленія“ յօդուածով, որ կցել է իւր Ասողիկ թարգմանութեան իբրև յաւելուած, հերքում է այդ կարծիքը և ապացոյց է տալիս, որ Ասողիկ պատմութեան հէնց այդ կտորը սաստիկ աղաւաղուած ու խանգարուած է: Որ տօմարական թուականը հաստատուել է Մովսէս Նղիվարդեցու ժամանակ—, այդ երևում է նորանից, որ եօթերորդ դարի հեղինակ Յովհաննէս Եպիսկոպոս Մամիկոնեանը մէջ բերելով Դլակայ վանքի վանահայրերի անուանական ցուցակը, ի միջի այլոց, լիշում է և վանահայր Աթանասին, որ ապրել է Մովսէս Բ-ի ժամանակ և իբրև թուաբան նորա յանձնարարութեամբ Դվնայ ժողովում կազմել է տօմարը. այդ երևում է և նորանից, որ Թդարի վերջին և Ժ դարի առաջին քառորդների հեղինակ Յովհաննէս Դրասխանակերտեցին, որ իբրև կաթողիկոս անկասկած օգտուել է կաթողիկոսական դիւանի վաւերական թղթերից, ուղղակի նկատում է, թէ Հայոց տօմարական թուականը հաստատուել է Մովսէս Բ-ի ժամանակ: Իսկ որ Ասողիկ Հայոց թուականի հաստատման հանգամանքներին վերաբերեալ կտորը խան-

գարուած ու աղաւաղուած է—, այդ էլ երևում է նորանից, որ նորա այդ կտորում հաղորդած ժամանակագրական թուեքը չեն համապատասխանում միմեանց։ Ստեփանոս Տարօնեցու ասելով, Ներսէս Բ-ը կաթողիկոսացել է Մժէժ Գնունու մարզպանութեան 7 տարին և կառավարել է կաթողիկոսական գահը 9 տարի. նա իւր կաթողիկոսութեան 4 տարին և Մժէժի իշխանութեան 10 տարին գումարել է Դվնայ ժողովը, որին մասնակցել են նշանաւոր Պետրոս Սիւնեցին և Ներշապուհ Տարօնեցին և որի մէջ հաստատուել է Հայոց տօմարական թուականը Յուստինիանոսի 14 տարին, Խոսրովի 24 տարին, Իզդ-Բուզիտի նահատակութեան տարին, Յունաց թուականի 304 տարին, Փիլիպպոս կայսեր 7 տարին և Հայոց լուսաւորութեան 252 տարին։ Ուրեմն, եթէ մենք ի նկատի առնենք, որ Մժէժ Գնունին մարզպանութիւն է արել 518—548-ը, Ներսէս Բ ը կաթողիկոսութիւն է արել 524—533-ը, Յուստինիանոսը թագաւորել է 527—565-ը. Խոսրովը թագաւորել է 531—578-ը և Իզդ-Բուզիտը նահատակուել է 552 թուին, կստանանք Ներսէս Բ-ի կաթողիկոսանալու, Դվնայ ժողովի գումարուելու և Հայոց տօմարական թուականի հաստատուելու տարիները, որոնցից ոչ մէկը չի համապատասխանի 553 թուականին⁶⁹⁾։ Եթէ մենք հետևելով Ասողկի ասածներին ընդունենք Հայոց տօմարական թուականի սկիզբը ոչ 551-ը, այլ 553-ը,

⁶⁹⁾ Այդ թուականների «ինքրորդմը» աւելի ակներև անելու համար, աւելորդ չենք համարում դնել այստեղ նոցա աղիւսակը—

Մժէժի 7 տարին	524
Ներսէս Բ-ի 4 տարին	527
Յուստինիանոս Ա-ի 14 տարին	540
Խոսրով Ա-ի 24 տարին	554
Իզդ-Բուզիտի նահատակութեան տարին	552

այն ժամանակ այդ վերջին թուականը պետք է համապատասխանի Յուստինիանոսի թագաւորութեան ոչ 14 տարուն, այլ 25-ին, Խոսրովի թագաւորութեան ոչ 24 տարուն, այլ 21-ին:

Էմինի պատմական հայեացքներին ծանօթանալու տեսակէտից, վերջապէս, կարեւոր է մեզ համար և նորա Վարդան Բարձրբերդցու թարգմանութեան լառաջաբանը, որ մասամբ վերաբերում է հանգուցեալի գրական երկերի շարքին, մասամբ էլ պատմականներին ⁷⁰⁾: Այդ լառաջաբանի մէջ հանգուցեալ գիտնականը մէջբերելով Վարդան պատմագրի համառօտ կենսագրութիւնը, ի միջի այլոց, նկարագրում է և այն միջավայ-

Էմինը առաջարկում է հետեւեալ աղիւսակը՝—

Դենշապուհ-պարսկի մարպանութեան 4 տարին .	551
Մովսէս Բ-ի կաթողիկոսութեան 1 տարին .	551
Պարսից թագաւոր Խոսրով Ա-ի 21 տարին .	551
Յուստինիանոս Ա-ի 25 տարին .	551

Հանգուցեալ Բոսսէն 553 թուականի մասին հետեւեալ գիտողութիւնն է անում՝ „Le me contente d'ajouter que l'année 553, dans laquelle fut organisé le comput arménien .. répond en effet à 551 de l'ère chrétienne, parce que la chronologie d'Eusèbe, alors suivie par les Arméniens, place la naissance du Sauveur deux ans avant le commencement de l'ère vulgaire“: (Analyse critique de la Всео́бщая Истoрия de Vardan, St-Petersburg, 1862, p. 18.)

⁷⁰⁾ Այստեղ մենք չենք խօսում Էմինի Արշակունիների մասին գրած վերոյիշեալ երեք յօդուածի մասին, որովհետեւ նորա ոչ մի նոր բան չեն պարունակում իւրեանց մէջ, Աւելորդ ենք համարում խօսել և հանգուցեալի „О памятникaxъ древности въ Русской Арменіи и о походахъ Руссовъ на Партавъ“ գրուածքի մասին, որովհետեւ նորա պատմական մասը բաղկացած է Մովսէս Վաղանկատուացու պատմութեան մի փոքրիկ հատուածի թարգմանութիւնից միայն, իսկ հնագիտականի մասին մենք խօսել ենք իւր տեղում:

րը, որտեղ նա սնուել ու դաստիարակուել է, Հայոց կեանքի այն պայմանները, որոնց ազդեցութեան ներքոյ հասունացել է նորա քանքարը և, վերջապէս, այն հանգամանքները, որոնք նպաստել են Կիլիկիայի Հայոց թագաւորութեան անկման: Էմինը կարծում է, որ Հայոց թագաւորութիւնը Կիլիկիայում Հեթում Ա-ի ժամանակներից արդէն տազնապի մէջ է ընկնում. նա յուսահատութեամբ ձեռքերը կարկառում է մերթ դէպի արեւելք և օգնութիւն խնդրում թաթարներից, մերթ դէպի արեւմուտք և ձեռնտուութիւն հայցում պապերից: Բայց ոչինչ չի օգնում. նորա անկման ժամը մօտեցած է լինում և այդ նորա օրհասականի վերջին ճիգերն և հոգեվարքի վերջին տանջանքներն են լինում: Զիշտ է, Կիլիկիայի քաղաքական թատերախաղի այդ վերջին ողբերգական արարուածներում բեմ են դուրս գալիս մի քանի նշանաւոր պատմական անձինք, բայց նոքա էլ չեն կարողանում կասեցնել արագութեամբ դէպի կորստեան անդունդը դիմող տէրութեան քայքայումը: Չեն օգնում ոչ Ներսէս Շնորհալին և ոչ Ներսէս Լամբրօսացին, որոնք ճիգ թափելով միացնելու Հայոց եկեղեցին Յունացի հետ, դորանով կամենում են նեցուկ գտնել իւրեանց տատանուող հայրենիքի համար, ոչ էլ Կոստանդին Ա-ին կաթողիկոսը, որ աշխատելով յաջողեցնել Հայոց եկեղեցու միութիւնը արեւմտեանի հետ, դորանով կամենում է շահել արեւմտքի համակրութիւնը և խաչակրների օգնութիւնը ստանալ: Այդ բոլորը չի օգնում, որովհետեւ, Էմինի ասելով, ինքը հայ ազգը, հայ ժողովուրդը այդ ժամանակները արդէն այնքան նիւթականապէս և բարոյապէս ընկել էր, որ նորա մէջ հատել էր կենսունակութեան ոյժը, պակասել էր քաղաքական մարմին կազմելու ընդունակութիւնը: Եւ այս անողորմ դատավճիռը Էմինը կարդում է խեղճ հայ ազ-

գի գլխին, հիմնուելով միայն և միայն Լամբրոնացու ասածների վերայ, որ ամեն բանի վերայ նայելով կրօնական տեսակէտից, մի տեղում եկեղեցի չ'լինելը, միւսում առաջնորդական վիճակի թափուր լինելը վերագրում է ժողովրդի անբարոյականութեան և անկեալ դրութեան, ազնուական դասակարգի բարոյական անկումից և հոգեւոր դասի անկարողութիւնից հետեւեցնում է, որ ամբողջ ազգն էլ անբարոյական է, ամբողջ ազգն էլ ընկած է: 'Ի հարկէ, ժողովրդի տգիտութիւնը, հոգեւոր դասի ու ազնուականութեան բարոյական անկումն լաւ նշաններ չէին Կիլիկիայի Հայոց թագաւորութեան համար, բայց դորանից դեռ չի կարելի եզրակացնել, թէ հայ ժողովուրդը արդէն կենսունակութիւն չունէր, ընդունակութիւն չունէր մի քաղաքական մարմին կազմելու: Չ'պէտք է մոռանալ ժամանակը, որ նկարագրում է հսնգուցեալ գիտնականը: Այդ միջին դարերն էին, երբ ամեն տեղ, ամեն քրիստոնեայ տէրութեան մէջ էլ դործում էին համարեա՞ թէ միւսնոյն ընկերական և քաղաքական ֆակտորները, երբ ամեն տեղ էլ ժողովուրդը խարխափում էր խոշին տգիտութեան մէջ, երբ հոգեւոր ու ազնուական դասակարգերը նսյն անկման սլամանների մէջ էին, ինչպէս և Կիլիկիայում, այն ինչ միջնադարեան տէրութիւններից շատերը գոյութիւն ունին մինչև ցայսօր ևս և ծաղկեալ դրութեան են հասել, շատերն էլ ընկել ու կորել են իսպառ: Լատինների եկեղեցիների բազմութիւնը, լատին իշխանների կրօնասիրութիւնը, նոցա հոգեւոր դասի աջալրջութիւնը, որ գովաբանում է Լամբրոնացին, ամենեւին չարգելեցին Երուսաղէմի թագաւորութեան, Անտիոքի Պրինցութեան, Մարաշի և Եւգեսիոյ կոմսութիւնների քայքայման ու անկման. վրաց թագաւորութեան ներքին կեանքի նոյնանման սլամանները ոչ մի բանով գերազանց չէին

Հայկականից, այն ինչ նա գոյութիւն ունեցաւ մինչեւ դարիս սկզբները: Ձէ, Կիլիկիոյ Հայոց թագաւորութեան անկման պատճառները հանգուցեալի մէջ բերած հանգամանքները չեն, ալ ներքին կրօնական խռովութիւնները և արտաքին քաղաքական պայմանները: Որքան որ հայ ժողովուրդը տգէտ լինէր, որքան որ նորա բարձր դասակարգերը անբարոյականացած ու ընկած լինէին, այնու ամենայնիւ հայ ազգը դեռ չէր կորցրել իւր կենսունակութիւնը ու քաղաքական մարմին կազմելու ընդունակութիւնը, որովհետեւ բուն հայ ամբոխը, բուն հայ ժողովուրդը իւր հրաշալի ընտանեկան կազմակերպութեան և նահապետական բարոյականութեան շնորհիւ մաքուր էր, առողջ էր: Եւ այդ իւր ժողովրդի առողջութեան է պարտական հայ ազգը, որ չ'նայելով, որ Կիլիկիոյ թագաւորութեան անկումից յետոյ էլ նա դեռ բազմաթիւ և անհանդուրժելի պատահարների ու փորձանքների է հանդիպել, չ'նայելով, որ նա, կարելի է ասել, հրից և ջրից է անցել, մինչև ցայսօր ևս տակաւին նա ցոյց է տալիս վերին աստիճանի կենսունակութիւն ու ճկունութիւն:

ԳԼՈՂԽ ԺԷ.

Էմինի մանկավարժական գործունէութիւնը տևելով ամբողջ կէս դար, գրաւել է նորա կեանքի մեծ մասը. նա 38 թուից մինչև 49—50 թուականները, այսինքն 12 տարի Հայոց լեզուի ուսուցիչ է եղել Լազարեան ձեմարանի դասարաններում, իսկ 50-ից մինչև 83 թուականը, այսինքն 32 տարի դասախօսել է նոյն Հայոց լեզուն ու գրականութիւնը ձեմարանի լիկէոնական դասարաններում իբրև ուսուցչապետ Հայոց ամբիոնի: Էմինը մեր հին վարժապետներից է եղել. նա սովորեցրել է հին ձևով ու եղանակով, նորա դասատուութե-

Թիւնը կրել է իւր վերայ միջնադարեան հնութեան և կեղծ դասականութեան կնիքը: Ռոմանտիք ուղղութիւնը, որ սկսուել էր տարածուել Ռուսաստանի արեւմտեան նահանգներում դարիս առաջին քառորդից և անտեղից էլ անմոռաց Խաչատուր Աբովեանի, Ստեփանոս Նազարեանի և Դորպատի միւս Հայ ուսանողների ձեռքով երեսնական և քառասնական թուականներին փոխանցել էլ հայ հոգի վերայ և նոր ուղղութիւն մտցրել հայ ուսումնարանական գործի և գրականութեան մէջ, չէր շօշափել Էմինի ոչ գրական և ոչ մանկավարժական գործունէութիւնը: Նա իւր աշակերտներին ման է ածել հին կեանքի մթնոլորտում և նոցա միտքը զբաղեցրել, գլուխը խճողել հին գաղափարներով: Ինքը կտրուած լինելով ժամանակակից կենդանի աշխարհից, նա չի կարողացել իւր դասատուութեան գործում կեանք ու կենդանութիւն ցոյց տալ և ոգևորել իւր աշակերտներին նոր գաղափարներով, կենդանի կեանքի գաղափարներով: Նա աշխատել է իւր աշակերտներին ծանօթացնել Հայոց հին լեզուի գանձերին, աշխատել է սովորեցնել Հայոց լեզուի կազմակերպութիւնը, բաղադրութիւնները, ածանցաւորութիւնը և հոմանիշները, բայց չի աշխատել և չի կորողացել ընդլայնել նոցա մտքի հորիզոնը և զարգացնել նոցա աշխարհահայեացքը. նորա տուած շարադրութիւնները նպաստել են նորա աշակերտներին աւելի բառապաշար ժողովելու, ոճագիտութիւն ձեռք բերելու, գրաբառ յաջող թարգմանութիւններ անելու, քան թէ զարգանալու: Եւ եթէ այս բոլորի վերայ աւելացնենք և այն, որ նա այդ բոլորը կատարել է գրաբառ լեզուով, կարգալու նիւթ առաջարկելով գրաբառ գրքերը, ինքը դասախօսելով գրաբառ լեզուով, աշակերտների ձեռքը գրաբառ ձեռնարկներ տալով, կ'հասկանանք, թէ ինչպէս նա կաշկանդած պէտք է լինի իւր

աշակերտների միտքը և կենդանի կեանքից կտրած ու հեռացրած նոցա: Նա աւելի մտքի ու խելքի մարդ լինելով, չի կարողացել տալ իւր աշակերտներին սիրտ ու զգացմունք, կենդանի կեանքում գործելու պատրաստականութիւն, հասարակաց ցաւերով ցաւելու, ուրախութեամբ ուրախանալու յատկութիւն. նորա աշակերտները, ճիշդ է, իմացել են հատուկտոր բաներ հայի անցեալից, լիշել են Հայկ ու Լեւոնին, մասամբ էլ ոգևորուել են իւրեանց պապերի սխրագործութիւններով, օրհնել են Վարդանների, Վահանների յիշատակները և անիծել են Վասակներին ու Վեստ-սարգսներին, բայց այդ բոլորի վերայ նոքա սովորել են հայկէս, ինչպէս նախում էր ինքը Էմինը — անցած, գնացած բաներ, որոնք ոչ մի կապ, ոչ մի առնչութիւն չունին ներկայ կեանքի հետ: Նորանով կարելի է զգացուել, նորանով կարելի է ոգևորուել, մինչև իսկ նորանով, հայի այդ փառաւոր անցեալով, կարելի է պարծենալ, բայց նորանից ներկայ կեանքի համար մի խրատ ստանալ, նորանից մի գործնական օգուտ ստանալ իւրեանց գործունէութեան համար աշակերտները չեն կարող և չ'պէտք է էլ ստանան: Հայը անցեալի ազգ է, նորա լեզուն անցեալի լեզու է, նորա գրականութիւնը անցեալի գրականութիւն, իսկ ներկայումս նա մի կրօնական համայնք է, որ ոչ լեզու ունի և ոչ գրականութիւն, մի խօսքով, Էմինի կարծիքով, հայը ունեցել է անցեալ, բայց չունի ոչ ներկայ և ոչ ապագայ բառիս բուն նշանակութեամբ: Նոր ժողովուրդ, նոր կեանք, նոր լեզու, նոր գրականութիւն, նոր յոյս ու բարոյական վերածնութիւն — նա չի ճանաչել և չի էլ ճանաչեցրել իւր աշակերտներին: Միշտ լուրջ, միշտ չոր ու ցամաք գիտնականութեան վսեմութեամբ առլցուած նա պատկառելի է երևել իւր աշակերտների աչքին, բայց չի վայելել նոցա

սէրը, այն սէրը, որ սովորաբար լինում է իսկական, իւր վեհ կոչման արժանի ուսուցչի և աշակերտների մէջ. նորա աշակերտները յարգել են նորան, քաշուել են նորանից, բայց իւրեանց իսկական զգացմունքը միշտ ծածկել, թաքցրել են նորանից, չեն համարձակել բաց անել նորա առաջ իւրեանց սիրտը, իւրեանց ներքին աշխարհը, մի խօսքով նորա և իւր աշակերտների յարաբերութիւնը աւելի պաշտօնական բնաւորութիւն է ունեցել, քան թէ հայրական ու որդիական, ինչպէս որ պէտք է լինէր մի այնպիսի տեղում ու հանգամանքներում, ինչպիսին եղել է այն ժամանակները Լազարեան ձեմարանը իւր հայաբնակ տեղերի խոր անկիւններից Մոսկուայի պէս մի հեռաւոր տեղ նժդեհած, ծննդավայրի քաղցրութիւնից և հարազատների գուրգուրանքից զրկուած սասնեցող: Այսպէս ենք մենք տեսել ու ճանաչել Էմինին մեր ուսանողութեան ժամանակ, այսպէս են մեզ նկարագրել, մեզ ներկայացրել նորան նորա հին ուսանողներից և աշակերտներից շատ շատերը: Այս այսպէս լինելով, մենք շատ ու շատ զարմացանք, երբ կարգացինք հանգուցեալ Ռափայէլ Պատկանեանցի մանկական լիշողութիւնները Էմինի մասին, մանկական լիշողութիւններ, որոնք հանգուցեալ գիտնականին ու նորա ուսուցչութիւնը բոլորովին հակառակ պատկերով են ներկայացնում: Մենք իսկապէս չենք էլ հասկանում, թէ արդեօք հանգուցեալ բանաստեղծը իւր սիրական ուսուցչի իսկական պատկերն է նկարում իւր լիշողութիւններում, թէ այդ մի զրուատիք է, որ նա գրում է նորա մասին նորա յոբելեանի առթիւ: Ի հարկէ, ընդհանրապէս լիշողութիւնները և մասնաւորապէս մանկական լիշողութիւնները պատկանում են գրուածքների այն տեսակին, որոնց ճշգրութեան դէմ վիճաբանելը շատ դժուար է. այդտեղ քննադատութիւն լինել չի կարող, այդտեղ

միակ դատաւորը լիշողութիւնների հեղինակի խիղճն է։ Բայց չէ՞ որ մենք էլ ամբողջ երեք տարի բաւականին մօտ ճանաչել ենք նորան, աշակերտելով նորան, յաճախելով նորա տունը, երկար ու բարակ խօսակցելով նորա հետ զանազան նիւթերի վերայ և աշխատելով օգտուել նորա գիտութիւնից, ամեն տեսակ ճանաչել նորան։ Ինչպէս է, որ մենք չենք դտել ուսուցչի աչն իդէալական յատկութիւնները նորա մէջ, որ գտել ու լիշում է լիշողութիւնների հեղինակը։ Պատկանեանցի ասելով Էմինի դասաժամը այնպէս չի անցնելիս եղել, ինչպէս միւս ուսուցիչներինը, այսինքն կէս ժամ հարցնելով, կէս ժամ պատմելով, նա մի քառորդ ժամ հարցնում է եղել, իսկ մնացեալ բոլոր ժամանակը գործ է դնում եղել պատմելու վերայ։ Էմինի պատմածները այնքան հետաքրքրական են եղել, որ աշակերտները ոչ թէ միայն լսել են, այլ կլանել են և դորանով ևս չբաւականանալով, օրերով ու շաբաթներով ընկերական զրուցատրութեան և վիճաբանութեան առարկայ են շինել։ Էմինի սիրած բանն է եղել ծանօթացնել աշակերտներին Հայոց բառերի արմատներին, նոցա բաղադրուելու, ածանցուելու կանոններին. նա սիրում է եղել հոմանիշ բառերը միմեանց մօտ դասաւորել և հազար տեսակ օրինակներով նոցա տարբերութիւնը ցոյց տալ։ Շաբաթուայ մէջ մի երկու անգամ նա սովորութիւն է ունեցել մի ամբողջ ժամ ընթացանութեան նուիրելու և կարդացածը պատմելու, մեկնաբանելու։ Երկրորդ դասաւորումը աշակերտները ինքնուրոյն կարդացել են Գանիէլ մարգարէի գիրքը՝ Շուշանի պատմութիւնը և Յովբայ գիրքը, երրորդ դասաւորումը—Աւետարանները և Գործք-Առաքելոցը, չորրորդում—Օսմանեան պատմութիւնը, հինգերորդ և վեցերորդ դասարաններում, համարեա՛ առանց բառարանի օգնու-

Թեան, կարգացել են Եղիականը, Կորուսեալ գրախտը, Մահ Աբէլին, Խորենացին, Տելեմաքը, Եղիշէն, Փաւստոսը և շատ Հայոց հեղինակներ և ընտիր թարգմանութիւններ: Առաջին անգամ Էմինն է նոցա կարգացել Ալիշանի «Պլպուլն Աւարայրի» և նորա միւս գեղեցիկ բանաստեղծութիւնները, առաջին անգամ նա է ծանօթացրել նոցա այդ բանաստեղծութիւնների գեղեցկութեան և ժողովրդական բանահիւսութեան սէրը ձգել նոցա սրտի մէջ: Էմինի դասախօսութիւնները սոսկ դասեր չեն եղել, այլ մի տեսակ գրական, պատմական և կրթողական քարոզներ, որ «խորունկ» տպաւորուել են նորա աշակերտների սրտերում, անջնջելի մնացել և մի տեսակ ուղեցոյց աստղ եղել նոցա համար: Էմինը խմբելով իւր չորս կողմը աշակերտներին, սովորութիւն է ունեցել, խօսակցել նոցա հետ և ուղղութիւն տալ նոցա զրոյցներին, խօսքը դարձնելով Հայաստանի, ձեմարանի, Մխիթարեանց և ս. Էջմիածնի վերայ. նա այդ խօսակցութիւնների ժամանակ պատմութեան շատ խրթին և մութ կէտեր պարզել ու շօշափելի է դարձրել երեսմաների առաջ: Էմինը միշտ գովասանքով է խօսում եղել իւր ուսուցիչների՝ Թաղիադեանի, Աւգալի և միւսների մասին: Նա սովորութիւն չի ունեցել պախարակել Հայերին, այլ ընդհակառակը նա իւր աշակերտների մէջ երկրորդ բնութիւն է դարձրել պատուել ամեն բան, որ Հային է պատկանում՝ հայ լեզու, հայ ազգ, հայ գրականութիւն, հայ մատենագիր, Էջմիածնի աթոռ, վեհափառ Կաթողիկոս և Մխիթարեան ուխտ: Լերմոնտովի և Պուշկինի գրութեաններին Էմինն է իւր աշակերտներին ծանօթացրել և հէնց այդ պատճառով էլ նորա աշակերտներից շատերը բանաստեղծ են դուրս եկել՝ «ոգևով և ճաշակով» Ասկարեանց, Փափազեանց, Միրիմանեանց, Դոդոխեանց և Շահազիզեանց. Էմինը Հայոց

«մամուտած», «փոշիոտած» պատմութիւնը մեր հայրերից թողած հրկտակ է դարձրել, իսկ իւր աշակերտներին հարադատ ժառանգորդ Հայաստանին և այդպիսով հետեւաբար ազգային պատմաբանի մեծ հանձար է ունեցել. վերջապէս, հանգուցեալ բանաստեղծի ասելով, Էմինը հիանալի աշխարհաբառ խօսել է իմացել և կանոնաւորել է ձեմարանի լեզուն, որ մինչև նորա ժամանակները, Սալլանթեանի ճնշողութեան ներքոյ, Հաշտարխանի բարբառն է եղել, և տուել է նորան այն կերպարանքը, որ այժմ անարդարապէս Ալլարատեան բարբառ է կոչուում, փոխանակ ձեմարանական կոչուելու⁷¹⁾։ Կըրկնում ենք, որ այս բոլոր յատկութիւններէ, որ վերագրում է ուսուցիչ-Էմինին Պատկանեանցը, մենք և ոչ մէկը լիակատար կերպով չենք տեսել նորա մէջ։ Դիցուք հանգուցեալ բանաստեղծի յիշողութիւնները վերաբերում են 43—49 թուականներին, երբ Էմինը դեռ ուսուցիչ է եղել ձեմարանական դասարաններում և երբ նա երիտասարդ լինելով, գործել է իւր բոլոր եռանդով, իսկ մենք աշակերտել ենք նորան վերջին ժամանակները—79—82 թուականներին, այն էլ Լիկէոնական դասարաններում, երբ նա արդէն ծերացած էր և եռանդի մի մասն էլ կորցրած։ Բայց միթէ կարելի է ենթադրել, որ մի լաւ, կարելի է ասել, իդէալական ուսուցիչ, ինչպէս ներկայացնում է Էմինին Պատկանեանցը, կարող էր իւր ծերութեան ժամանակ այնքան փոխուել, որ ոչ մի բանով չ'իշխեցնէր իւր երիտասարդութիւնը։ Էմինը, ճիշդ է, 79—82 թուականներին ծերացած էր, բայց զառամեալ չէր. նորա մտաւոր ըն-

⁷¹⁾ Տես Վանկական յիշողութիւններ պր. Մ. Էմինի մասին, որ պարոն Գրիգոր Խալաթեանցը կցել է Էմինի «Ներկասիրութիւններին» չորրորդ հատորին իբրև կենսագրական նիւթ։

դունակութիւնները դեռ բոլորովին թարմ էին, լիշողութիւնը լաւ, ուժը վերան և ինքը գեղուն ու թաթախուն գրաւոր վաստակների մէջ: Որ նա դասարանում աւելի պատմել ու կարդացել է, քան թէ դաս հարցրել, այդ անհաւանական չէ, բայց որ նորա պատմածները և կարդացածները այնքան հետաքրքրական են եղել, որ աշակերտները չեն լսել, այլ կլանել են նոցա—, այդ մեզ, եթէ ոչ անհաւանական, դո՛նէ, շատ չափազանցած է երևում, որովհետեւ հանգուցեալ գիտնականը գեղեցկախօս չէր, ոգևորուած պատմող չէր, կարդացած գրքերն էլ, նիւթերն էլ գրաբառ լինելով, ինչպէս, օրինակի համար, Բազմավէպի գրաբառ թարգմանութիւնները, թէ լեզուի դժուարութեան և թէ բովանդակութեան կողմից այնքան էլ հետաքրքրական չպէտք է լինէին: Որ հանգուցեալ բանաստեղծը և իւր ընկերակիցները ուսուցչի օգնութեամբ երկրորդ դասարանում կարդացել են Յոբայ գիրքը և Դանիէլի գրքից Շուշանի պատմութիւնը, երրորդ դասարանում—Աւետարանները և Գործք-Առաքելոցը, չորրորդ դասարանում—Այվազովսկու Օսմանեան պատմութիւնը և հինգերորդ ու վեցերորդ դասարաններում—Եղիշէի, Փաւստոսի պատմութիւնները և Մահն Աբէլի ու Տելեմաքը—, այդ կարող է լինել, բայց որ նոքա, առանց բառարանի օգնութեան, կարողացած լինին հասկանալ Խորենացին, Եղիականը և Միլտոնի Դրախտ կորուսեալը—, այդ մենք անկարելի ենք համարում, որովհետեւ գորահամար շատ բան հարկաւոր է, գրաբառի գիտութեան մեծ պաշար պէտք է, որ չեն ունեցել և, զո՛նէ, ոչ մի բանով չեն ցոյց տուել հանգուցեալ բանաստեղծի ընկերակիցները: Որ նա իւր աշակերտներին կարդացել է հայր Ալիշանի գրաբառ բանաստեղծութիւնները, գուցէ և «Բլբուլ Աւարայրին»—, դորան կարելի է հաւա-

տալ, բայց որ նա ծանօթացրած լինի իւր աշակերտներին հայ ժողովրդական բանահիւսւթեան, այդ հաւանական չէ, որովհետեւ նա չէր ճանաչում ոչ արդի հայ ժողովուրդը, ո՛չ նորա նոր լեզուն և ոչ նորա նոր գրականութիւնը, ուր մնաց, որ նա իմանար հայ ժողովրդի ներկայ անպաճոյճ գուեհիկ բանաստեղծութիւնը և իւր աշակերտներին ծանօթացնէր նոցա: Մենք նորա «Բըլբուլ Աւարայրին» դասարանում կարդալու մասին ևս կասկածում ենք, որովհետեւ նա սովորութիւն չուներ աշխարհաբառ գիրք կարդալու, ուր մնաց, որ նա իւր աշակերտների ձեռքը տար նոցա, ինքը առաջնորդէր, ինքը կարդար նոցա համար: Աշխարհաբառ գրքերից, որքան մենք լիշում ենք, նա կարդում էր Բազմալէսը, Զարբանալեանի Հայոց մատենագրութեան պատմութիւնը և իւր ընկեր Գէորգ Հախվերդեանի Սայեադ-Նովան: Կարակաշեանի քննական պատմութիւնը, որի անունը նա երբեմն տալիս էր, նա մինչև վերջին ժամանակները չէր տեսել, ալ միայն լսելով գիտէր նորա մասին: Որ նա իւր աշակերտների հետ զրուցել է Ս. Էջմիածնի, Մխիթարեանց և Հայաստանի մասին —, դորան մենք իրաւունք չունինք չ'հաւատալու, լայց թէ ինչ կամ ինչպէս է խօսել, այդ է կարևորը, այդ է հետաքրքրականը: Մենք կարծում ենք, նախ, որ այդպիսի զրոյցները պահանջում են մի յայտնի աստիճանի մտերմական յարաբերութիւն ուսուցչի և աշակերտների մէջ, որ չ'կար և 'ի նկատի առնելով Եմինի բնաւորութիւնը չէր էլ կարող լինել նորա և իւր աշակերտների մէջ, երկրորդ, եթէ եղել էլ են այդպիսի զրոյցներ, նոքա այնպէս են եղել, այնպիսի բնաւորութիւն են կրել, որ մի շօշափելի օգուտ չեն բերել աշակերտներին: Հանգուցեալ գիտնականը անկասկած, ինչպէս ասում է Պատկանեանցը, ձգտել է երկրորդ բնութիւն դարձնել իւր ա-

շակերտների մէջ պատուելը ամեն բան, որ միայն հայի անուն է կրում, բայց այդ մի շատ էլ օգտաւէտ բան չէ, որովհետեւ, բացի նորանից, որ դորանով աշակերտների մէջ զարգանում է սնափառութիւնը իւրեանց ազգի վերաբերմամբ, բացի նորանից, որ նոքա մնում են ինքնախաբէութեան, մոլորութեան մէջ իւրեանց ազգի զանազան յատկութիւնների և ազգային կեանքի զանազան երևութների և իսկական արժանաւորութիւնների վերաբերութեամբ, այլ և վնասում է ազգի շահերին: Եւ ճշմարիտ, եթէ ամեն բան, ինչ որ միայն ազգին է պատկանում, լաւ է, սուրբ է, պատուելի է, ուրեմն չպէտք է էլ քննութեան ենթարկել նորա կեանքի զանազան կողմերը, չպէտք է էլ պախարակել, մտրակել ազգային պակասութիւնները, չպէտք է էլ ազգի յառաջադիմութեան վերայ մտածել: Դուրս է գալիս, ուրեմն, որ Եմինը քարոզել է իւր աշակերտներին այն, ինչ որ պախարակել են մեր ամենապառաջադէմ հեղինակները՝ Նազարեանցը, Նալբանդեանցը, Պատկանեանցը, Շահազիզեանցը, Բաֆֆին և միւսները, — անշարժութիւն, ինքնաբաւականութիւն կամ մի տեսակ խաբուսիկ անդորրութիւն և կամ ինքնամոռացութիւն, որի հետեանքն է կորուստ և անխուսափելի մահ: Հայ ուսուցիչը, ի հարկէ, պէտք է սովորեցնէ իւր աշակերտներին պատուել ու յարգել իւր լեզուն, իւր ազգն ու գրականութիւնը, բայց ոչ ամեն բան, որ վերաբերում է կամ պատկանում է Հային: Նա ընդհակառակը պէտք է աշխատէ սովորեցնել նոցա քննական աչքով նայելու իւր անցեալի ու ներկայի վերայ, պէտք է նոցա ձեռքը տայ այն հրաշալի նշտարը, որ կտրում, մի կողմ է ձգում կարեւոր խոցերը հիւանդ մարմնի վերայից, մաքրում է նեխած վէրքերից շարաւը և դորանով արմատական կերպով բուժում ախտացած մարմնի ամբողջ կազմա-

Վերստի՞նք իմինի և նորա համախոհների հէնց այդ տեսակ քարոզութիւնների դէմ է, որ բարձրաբարբառ բողոքել է բանաստեղծը՝—

«Առողջ մտածողն—աղանդաւոր է»,

«Չմարիտ խօսողն—Հալի ոխերիմ».

«Ինչ որ Հալինն է—այն երկնքից է»,

«Դատ արա՛ սոցա, Տէր իմ, Աստուած իմ»¹²⁾։

Իմինի և նորա համախոհների բռնած հէնց այդ ուղղութիւնն է, որ հեզնել է դառնապէս հրապարակախօսը՝—

«Ես սիրում եմ հայրենիքը»,

«Նորան միշտ ու միշտ գովում եմ».

«Օտար ազգի առջևը»

«Պակասութիւնքը ծածկում եմ»¹³⁾։

Որ իմինը կարդացել է իւր աշակերտներին Պուշկինի և Լերմոնտովի գրուածներէից մի քանի բան—, այդ շատ հաւանական է, բայց որ ձեմարանի աշակերտները 43—49 թուականներին միայն իմինի միջոցով են ծանօթացել վերոյիշեալ համբաւաւոր բանաստեղծների գրուածներին, այդ մենք առասպել ենք համարում։ Ապա ինչ էր անում այդ ժամանակուայ ձեմարանի ուսուցիչը և գրականութեան ուսուցիչը։ Եւ լետոյ գլխովին սխալ է հանգուցեալ բանաստեղծի այն կարծիքը, թէ իմինը կարդալով Պուշկինի և Լերմոնտովի գրուածները իւր աշակերտներին, դորանով նոցանից հոգւով և ճաշակով բանաստեղծ երիտասարդներ է պատրաստել կամ պատճառ է եղել իւր աշակերտներէից մի քանիսին բանաստեղծ լինելու։ Նախ և առաջ Փա-

¹²⁾ Տես Ս. Շահաղեղեանցի Լեռնի վիշտը—«Ազգային վիճակ»։

¹³⁾ Տես Նալբանդեանցի «Հայ մարդու հայրենիքը» (Հիւսիսափայլ՝ 58 թ., տ. 3)։

փազեանցը, Ասկարեանցը և Միրիմանեանցը ոչ մի աչ-
 քի ընկնելու բանով չեն արտայայտել իւրեանց բանա-
 ստեղծական հոգին ու ճաշակը, երկրորդ, բանաստեղծ-
 ները չեն պատրաստուում, այլ ծնուում են: Հանգու-
 ցեալը կարող էր հաւատացած լինել, որ եթէ ինքը և
 Ս. Շահադիդեանցը բանաստեղծութեան բնատուր շնորհ-
 քով և քանքարով օժտուած չլինէին, ոչ մի երկնային
 բանաստեղծութեան ընթերցումն չէր կարող նոցանից
 բանաստեղծ պատրաստել, ոչ մի երեւելի բանաստեղծ
 չէր կարող նոցա վերայ այնպէս ազդել, որ նոքա բա-
 նաստեղծ դուրս գալին. զանազան բանաստեղծների ըն-
 թերցանութիւնը մանկական հասակում միայն ազդում
 է տպագալում բանաստեղծական ձերք ցոյց տուող հե-
 ղինականների գրուածների ուղղութեան վերայ, գուցէ-
 մասամբ և մի տեսակ խթան ընդոստուցիչ է լինում
 նոցա իւրեանց մէջ ծածկուած բանաստեղծական շնորհ-
 քը երեւան հանելու: Յամենայն դէպս Եմինի աշակերտ-
 ներից մի քանիսի բանաստեղծ դուրս գալու հանգա-
 մանքը կապելը նորա երբեմն իւր աշակերտներին Լեր-
 մոնտովի և Պուշկինի բանաստեղծութիւնները կարգա-
 լու հետ, եթէ չասենք մեծ վստահութիւն է, գոնէ,
 այն բազմաթիւ տարօրինակ կարծիքներից մէկն է, որ
 մենք շատ ենք պատահում հանգուցեալ բանաստեղծի
 գրուածների մէջ: Որ Եմինը, վերջապէս, իւր աշա-
 կերտներին թէ դասարանում և թէ դասից դուրս եր-
 բեմն Հայոց պատմութիւնից հատուածներ է պատմել—,
 այդ մի երեւելի մանկավարժական արժանաւորութիւն
 չէ. այդ արել են և անում են մեր թէ հին և թէ
 նոր ուսուցիչները, այդ անում են և յօյն ու լատին
 լեզուի ուսուցիչները, որովհետեւ շատ անգամ դաս տը-
 րուած հեղինակների հատուածները առանց այդպիսի
 պատմական մեկնաբանութեան հասկանալի չեն լինում:

աշակերտներին, բայց որ նա Հայոց «փոշիոտած» և «ամամուտած» պատմութիւնը մեզ համար մեր հայրերից թողած հրետակ դարձրած լինի և իւր աշակերտներին հարազատ ժառանգորդ Հայաստանին, կամ թէ պատմութեան շատ խրթին տեղերը պարզելով, շօշափելի դարձրած լինի և ընդհանրապէս ազգային պատմութեան հանճար ունեցած լինի —, մենք դուրան իսպառ չենք հաւատում: Եմինը ոչ թէ ազգային պատմաբանի, այլ և ընդհանրապէս պատմաբանի ոչ մի հանճար չունէր. նա ոչ մի միջին տող, ոչ մի կնճռոտ հանգուց ազգային պատմութեան մէջ չի լուծել ոչ բերանացի իւր աշակերտների և ուսանողների առաջ և ոչ իւր գրական գործերում: Նա Հայոց պատմութիւնը գիտէր այնքան, որքան նորան իմացել են և գիտեն ամեն մի հայ գրականութեամբ զբաղուող գրականագետ, այսինքն այնքան, որքան այդ հարկաւոր էր նորա գրական պարապմունքների համար: Մենք մինչև անգամ աւելին կասենք. նա Հայոց պատմութիւնը չէր ուսումնասիրել և այն չափով ու որակութեամբ, որ պարունակում է իւր մէջ հանգուցեալ Ս. Պալասանեանի պատմութիւնը. նորա իմացածը մեր հին համեմատութեան ու քննութեան բովից չանցկացած, մի որոշ սխտեմի չբերուած պատմութիւնն էր, այսինքն այն հոլմ նիւթը, որ մատակարարում են մեզ մեր պատմագրները, և այն ևս ոչ ամբողջապէս, այլ հատուածներով ու շրջաններով միայն: Մենք մեր ուսանողութեան ժամանակ, գոնէ, մեր ազգային պատմութեան վերաբերեալ ոչ մի միջին տեղ չենք կարողացել նորա օգնութեամբ պարզել մեզ, մեր ոչ մի տարակուսանքը նորա օգնութեամբ չ'ենք կարողացել փառատել: Եւ մեղադրելի էլ չէ, որովհետև նա իրան ամբողջապէս նուիրել էր գիտական-թարգմանական գործունէութեան, իսկ հայագիտութեան միւս ճիւղերով

նա պարապում էր միայն այնքան, որքան այդ հարկա-
ւոր էր նորա այդ գործունէութեան համար: Նա միայն
վերջին ժամանակներն էր սկսել պարապել Հայոց պատ-
մութեամբ, երբ նորա գրական վաստակները նորան բե-
րին, հասցրին այն տեղը, որ այլ ևս առանց լուրջ պատ-
մութեան, քննական պատմութեան գիտութեան անկա-
րելի էր նորան առաջ գնալ իւր ընտրած գործունէու-
թեան ասպարիզում, երբ սկսան կասկածներ յայտնել
Հայոց հնագոյն պատմութեան աղբիւրների ճշգրութեան
մասին, մի խօսքով, սկսան Մովսէս Խորենացու պատ-
մութեան հիմունքը քանդել, Խորենացու, որի թարգ-
մանութեան և գիտական ուսումնասիրութեան նա նուի-
րել էր իւր գործունէութեան ամենափայլուն և ամե-
նալու մասը: Նորա այդ վերջին պարապմունքների ար-
դիւնքն էին ահա նորա „Мойсей Хоренский и древ-
ний Эпосъ армянскій“ և Династическій списокъ
Хайкидовъ“ գրուածները, որոնցից առաջնով, ինչ-
պէս ասել ենք, նա ճշգրտւմ է և աշխատում է ուրիշ
հիմունքի վերայ գնել Խորենացու աղբիւրների խնդիրը,
իսկ երկրորդով մի քննական հայեացք է ձգում Չամ-
չեանի ժամանակագրութեան վերայ և որոշում է Հայ-
կազանց կոչուած հարստութիւնների թիւն ու տեսակ-
ները: Բացի այս բոլորից, Պատկանեանցը, ինչպէս մենք
տեսանք, մի զարմանալի բան էլ է ասում Էմինի աշ-
խարհաբառ լեզուի մասին: Էմինը և աշխարհաբառ լե-
զու: Այդ երկուսը այնպիսի ներհակ բաներ են, որ մէ-
կը միւսին ոչնչացնում է անհետ, ինչպէս բացասական
և դրական մեծութիւնները թուաբանութեան մէջ: Նա
ոչ միւսին «հիանալի» աշխարհաբառ չէր խօսում, այլ և,
կաշելի է ասել, արդի գրական լեզուով նա ամենեւին
չէր խօսում: Նա միշտ պարապելով գրաբարի թարգմա-
նութեամբ ու ուսումնասիրութեամբ, առօրեայ կեան-

քում էլ միշտ ուսներէնը գործածելով, մոռացել էր թէ իւր մայրենի ջուղայեցւոց բարբառը և թէ ձեմարանում նորա աշակերտութեան ժամանակ կիրարկուած լեզուն։ Նորա հետ հայերէն խօսելը կատարեալ պատուհաս էր։ Բացի նորանից, որ նորա բերանից անդադար «էստուր համար» և «էնդուր համար» գաւառաբանութիւնը լլսելը մարդու ականջ էր ծակում, այլ և պէտք էր լինում բաւականին երկար ժամանակ սպասել, մինչև որ կարողանաս ասածիդ կամ հարցրածիդ պատասխանը ստանալ, որովհետև նա շատ ծանր, դանդաղ, միտք անելով և բառեր որոնելով էր խօսում, այնպէս որ երբեմն մտքերի փոխանակութիւնը վարժ կատարելու համար, հարկաւորում էր խօսակցութիւնը ուսներէնի դարձնել։ Երբեմն էլ բաւականին զուարճալի էր լինում, երբ հանգուցեալը չ'կարողանալով գտնել յաճախ ամենադժուոր ձեւերի ոճերը և բառերը, բոլորովին անսովոր գրաբառ ոճեր ու դարձուածներ էր գործածում։ Մենք չենք հերքում այն, որ Հաշտարխանի բարբառը ազդեցութիւն է ունեցել ձեմարանի լեզուի վերայ, չենք հերքում մինչև անգամ և այն, որ Սալլանթեանը ճնշող ազդեցութիւն է ունեցել նորա, այդ լեզուի վերայ, բայց որ ձեմարանի լեզուի կանոնաւորողը, Հաշտարխանի գաւառաբարբառը մաքրողը Էմինը եղած լինի—այդ իսպառ չենք ընդունում, որովհետև չի կարելի երևակայել, որ մի մարդ, որ ինքը մի լեզուով չի խօսում, չի գրում, կարողանայ նոյն լեզուն կանոնաւորել, ուղղել, մաքրել ու գտել։ Ձեմարանի լեզուն կանոնաւորել են մի խումբ բուն հայախօս կենդրոններից՝ Երևանից, Վաղարշապատից, Աշտարակից և միւս տեղերից քառասնական և յիսնական թուականներին եկած աշակերտներ, ձեմարանի լեզուն կանոնաւորել են նալբանդեանցը իւր թէև կարճատև, բայց զօրեղ ազդեցութիւն ունեցող ուսուց-

չութեամբ, Ս. Շահազիզեանցը իւր երկարատեւ վերակացութեամբ և ուսուցչութեամբ և դոցա համախոհները ու ընկերակիցները, ձեմարանի լեզուն կանոնաւորել է Հիւսիսսփայլը, որի մուտքը ձեմարան թէւ Էմինի և Սսերի ազդեցութեամբ արգելուած է եղել, բայց որ ծածկաբար շատ տարածուած է եղել աշակերտների մէջ և երկար ժամանակ միակ հետաքրքրական աշխարհաբառ ընթերցանութեան նիւթն է եղել ձեմարանում և, վերջապէս, ձեմարանի լեզուն կանոնաւորել են Նալբանդեանցի Թափառական Հրէան, Նազարեանցի Հանդէս նոր հայախօսութեանը և Շահազիզեանցի Լեոնի վիշտը, որոնք Հիւսիսսփայլի հետ միաժամանակ կամ մի փոքր լետոյ մուտք են գործել ձեմարան: Եւ լետոյ ինչ է նշանակում՝ «Էմինը հէնց որ առաջին անգամ ոտք է կոխում դասարան, խօսակցութեան լեզուն օրէցօր սկսում է մաքրուել, կանոնաւորուել, կոկուել, շատ կամ սակաւ դաշնաւորութիւն ստանալ, և ստացաւ այն՝ կերպարանքը, որ մենք այսօր տեսնում ենք անարդարապէս Արարատեան կոչուած բարբառումն, որ ըստ ամենայն իրուանց և արդարութեան պէտք էր ձեմարանական բարբառ անուանելու և որի եթէ ոչ ստեղծողը, գէթ կերպարանք և շքեղութիւն տուողը Մ. Էմինին ճանաչելու: Դուրս է գալիս, ուրեմն, որ մեր արդի արեւելեան գրական լեզուն սխալմամբ կամ անարդարապէս է Արարատեան կոչուում, այլ պէտք է կոչել ձեմարանական, և նորա եթէ ոչ ստեղծողը, գէթ կերպարանք և շքեղութիւն տուողն էլ Էմինն է եղել: Ահա ձեզ մի խոշոր, մի շատ խոշոր նորութիւն: Եւ ճշմարիտ, եթէ հանգուցեալ բանաստեղծը ինքը այդ բանը չասէր, այլ թողնէր, ինչպէս ինքը նկատում է, որ ուրիշներն ասէին, դեռ շատ երկար կ'սպասէր, որովհետեւ հազիւ թէ գտնուէր մէկը, որ վստահութիւն լանձն

առնէր մի այդպիսի անհետեւ կարծիք լայտնելու. Ո՛հ, սաստիկ մեծ առասպել է, այլ և առասպելների առասպել է, կասէր այդ դէպքում մեր բազմաչարչար պատմահայրը, բայց քեզ ի՞նչ փոյթ, որովհետեւ արգարեկ այդ տեսակ տարօրինակ հայեացքների և կարծիքների տէր էր հանգուցեալ բանաստեղծը: Մենք կարծում ենք, որ եթէ հանգուցեալ Էմինը իմանար, թէ լ'նչեր են վերագրում իրան, ինքն էլ կ'զարմանար և ոտքով ձեռքով կ'հրաժարուէր այդ մեծ պատուից, որովհետեւ նորա մտքովն էլ չէր կարող անցնել, որ նա կարող է երբեւիցէ արդի աշխարհաբառ գրական լեզուի հիմնադիր համարուել, այն աշխարհաբառի, որի դէմ նա իւր ամբողջ գործունէութեան ընթացքում խուլ կերպով մաքառել էր, որով նա երբէք չէր խօսել և չ'գիտէր էլ խօսել, որով նա իւր կեանքում երկու տող չէր գրել և որի գոյութիւնը անգամ իբրեւ գրական լեզու ժխտում էր: Ինչու մեր արդի արեւելեան գրական լեզուն պէտք է կոչել ճեմարանական և ոչ թէ Այրարատեան. միթէ ճեմարանական լեզուն նոյն Այրարատեանը չէ, միթէ Հաշտարխանի, Ղզլարի, Պարսկահայոց և Հնդկահայոց լեզուները նոյն Այրարատեան լեզուի ճիւղաւորութիւնները չեն: Դիցուք Լազարեան ճեմարանը իբրեւ Հայոց ամենահին մեծ և կանոնաւոր ուսումնարանը առաջինն է սկսել ուսումնական մարդիկ տալ ազգին, ուսումնական մարդիկ, որոնք թէ իւրեանց աշակերտութեան ժամանակ և թէ կեանքի մէջ աւելի մաքուր Այրարատեան լեզուով են խօսել ու գրել, քան թէ խօսում ու գրում էին իւր ժամանակին Երևանում և նորա շրջակայքում, օտարազգի բառերի տեղ Հայոց բառեր գործածելով, «էս, էդ, էն» «այս, այդ, այն» փոխելով, «ըսենց, ըդենց, ընենց» «այսպէս, այդպէս, այնպէս» արտասանելով, «աւում ա, ուտում ա, գնում ա», «ասում է, ուտում է,

գնում է» գրելով և խուսափելով Այրարատեան լեզուի շատ գաւառաբանութիւններէց. միթէ, ասում ենք, Այրարատեան լեզուն դորանով փոխուեց, դորանով դադարեց Այրարատեան լինելուց և ճեմարանական դարձաւ: Հետաքրքրական էր իմանալ՝ ապա ինչպէս էին խօսում Ներսիսեան դպրանոցում, ինչ լեզուով էր լինում այնտեղի դասատուութիւնը: Եթէ դարձեալ նոյն գաւառաբանութիւններէց մաքրուած Այրարատեան լեզուով, որ անկասկած ուրիշ պէս չէր կարող լինել, ուրեմն ինչու դպրանոցական չ'կոչել մեր արդի գրական լեզուն. միթէ պակաս արժանաւոր մարդիկ է տուել ազգին այդ դպրանոցը, ապա Նազարեանցն ու Աբովեանցը ո՞րտեղ էին սովորել Հայոց լեզուն—աշխարհաբառը: Զարմանալի բան է. կարելի է ուսումնական, մինչև իսկ գիտնական մարդ լինել և երբեմն ամենատարրական բանը չ'հասկանալ: Ահա և Քերովբէ Պատկանեանը, որ իւր հայ բարբառների ուսումնասիրութիւններից մէկի մէջ համարեա՞ թէ նոյն կարծիքն է յայտնում, Հաշտարխանի բարբառը համարելով հիմք մեր ներկայ գրական լեզուին: Երբ որ մենք ասում ենք, թէ մեր արդի արևելեան գրական լեզուն Այրարատեանն է, դորանով անկասկած չենք հասկանում, որ նա Աբովեանի «Վերք Հայաստանի»-ի կամ Քերովբէ Պատկանեանցի իւր բարբառների հաւաքածուում մէջ բերած «Երևանի բարբառ»-ի լեզուն է, այլ որ Արարատեանն է մեր արդի գրական լեզուի հիմքն, սաղմն իւր հոգւով, ոճաբանութեամբ և դարձուածներով. նա այն ցանցն է, որի վերայ քաջ ասղնեգործը արուեստագործում է իւր հրաշալի ձեռագործը, նա այն հինուածքն է, որի վերայ ճարտար ոստայնանկը հինում է իւր անկուածքը: Տոսկանիոյ բարբառը համարուում է իտալիոյ գրական լեզուն: Այդ անկասկած չի նշանակում, որ Իտալացւոց հեղինակները, գրում են հենց այնպէս,

ինչպէս որ խօսում են Տոսկանացիք, այլ մաքրուած, գրականութեան յարմարեցրած տոսկաներէն: Այդպէս էլ պէտք է հասկանալ Այրարատեանը: Այժմ դարձեալ դառնանք հանգուցեալ Ռափայէլ Պատկանեանցի մանկական լիշողութիւններին և նոցա Էմինի մանկավարժական բնորոշ գծերի նկարագրութեան: Մենք համոզուած ենք, որ հանգուցեալ բանաստեղծը, եթէ այդ մի դըրուատիք չէ, որ նա գրում է Էմինի մասին, գոնէ, իւր հօր գովասանքներից չափազանց յափշտակուած, չափազանց նախապաշարուած Էմինի արժանաւորութիւնների մասին, ինչպէս ինքն էլ ասում է, մտել է Լազարեան ձեմարան, նախապաշարուած աշակերտել է հանգուցեալ գիտնականին ամբողջ վեց տարի և նախապաշարուած էլ նորա արժանաւորութիւնների մասին նա դուրս է եկել ձեմարանից: Մեր խորին համոզմունքն է, որ Պատկանեանցը, համեմատ իւր ամեն բան չափազանցնող բնաւորութեան, Էմինի ուսուցչական արժանաւորութիւններն էլ չափից դուրս բարձրացրել է և նորա մանկավարժական գործունէութեան գիմակի տակ իւր լիշողութիւնների մէջ ներկայացրել է մեզ ոչ իսկական ուսուցիչ-Էմինին, այլ ընդհանրապէս իւր իդէալը հայ ուսուցչի մասին:

ԳԼ. ԺԸ.

Էմինի երկարատե ուսուցչապետական գործունէութիւնը Մոսկուայի հայ ուսանողներից շատ քչերի համար է արգասաւոր եղել, որովհետեւ, նախ, հայ ուսանողների թիւը Լիկէոնում միշտ սահմանափակ է եղել, երկրորդ, այդ սակաւթիւ ուսանողներից շատ քչերն են մասնագիտօրէն ուսումնասիրել Հայոց լեզուն և գրականութիւնը և աշխատել օգտուել ուսուցչապետի

գիտութիւնից: Ընդհանրապէս հայ ուսանողները Լիկէոնում բաւականացել են պաշտօնական դասընթացքով և չեն ձգտել մի բան աւելի ուսանել, մի բան աւելի իմանալ: Իմինն էլ չի ունեցել այն բնաւորութիւնը, որ կարողանար ազդել անտարբերների վերայ, հետաքրքրական անել նոցա համար իւր առարկան և գրաւել նոցա ուշադրութիւնը: Զիշդ է, եղել են միջոցներ, երբ թէ Լիկէոնի և Թէ Մոսկուայի համալսարանի հայ ուսանողները ոգևորուել են և համախմբուելով միասին, սկսել են մեծ սիրով յաճախել հանգուցեալի դասախօսութիւններին, բայց այդ միջոցները շատ երկար չեն տեւել և դադարել են հանգուցեալի մի քանի դասախօսութիւններից յետոյ: Այդ ցաւալի հանգամանքի պատճառը եղել է մասամբ հայ ուսանողութիւնը, մասամբ էլ ինքը հանգուցեալ ուսուցչապետը: Ուսանողութիւնը յաճախելով Լիկէոնի լսարանները, առլցուած է եղել բուռն ցանկութեամբ լսելու կենդանի, ոգևորուած լեզուով ամբիոնից խօսուած դասախօսութիւնները: Հայոց լեզուի մասին, դիւրին և ախորժելի կերպով ու ճանապարհով ծանօթանալու հայոց թէ նախնի և թէ ժամանակակից գրականութեան պատմութեան, ծանօթանալու իւր ազգի անցեալին, զարգացման շրջաններին և հայ գրականութեան ընդհանուր գրականութեան հետ ունեցած առնչութեան և համեմատութեան արդիւնքներին և երկրորդի առաջնի վերայ ունեցած ազդեցութեան արգասիքներին, մոռանալով նոյն ժամանակ, որ այդ բոլորի համար պէտք է ունենալ մի յայտնի ոստիճանի գիտութիւն, նախապատրաստութիւն, պէտք է իմանալ, գոնէ, համառօտաբար հայոց պատմութիւնը, կարգացած լինել հայոց գլխաւոր հելինականներին, կամ կարգաւոր, հասկանալու պատրաստակաւնութիւն ունենալ և ընդհանրապէս հայոց լեզուի ու գրակա-

նութեան, գոնէ, նախնական, նախապատրաստական ընթացքը անցած լինել, որ ուսանողներէց շատ շատերը չեն ունեցել, Ի հարկէ, Էմինը, եթէ ինքը այնքան նուիրուած չլինէր իւր անձնական մանրակրկիտ գրական պարապմունքներին, եթէ կամենար մի փոքր աւելի ուշադրութիւն դարձնել ուսանողների ձգտման և ցանկութիւնների վերայ, հեշտութեամբ կարող էր իւր լսարանը դիմող ուսանողների նպատակը հասկանալ, և եթէ ոչ այն չափով, որ չափով ակնկալում էին ուսանողները, գոնէ, մասամբ կարող էր լրացնել նոցա բաղձանքը։ Նա կարող էր Հայոց գրականութեան մի թեթև դասընթացք կազմել և ամբիոնից կենդանի լեզուով դասախօսելով, ծանօթացնել հայ ուսանողներին հարազատ գրականութեան պատմութեան, գոնէ, գլխաւոր մոմենտներին, որով և մի կողմից նա մեծ օգուտ տուած կլինէր Մոսկովայի ուսանողութեան, միւս կողմից էլ շատ կնպաստէր հայ գրականութեան գիտութեան տարածուելուն ու ընդհանրանալուն։ Բայց, փոխանակ սորան, Էմինը սովորութիւն է ունեցել մի որ և է հայ մատենագիր դնել ուսանողների առաջը և հերթով կարգաւ տալով, ռուսերէն թարգմանել նորանմանը քերականական վերլուծութիւնով հանդերձ, որով և հէնց առաջին նուագ խրտնեցրել է ուսանողներին, պատճառ է եղել դադարելու յաճախել նորա դասախօսութիւններին և հայերէն ուսանելու ասպարէզը միայն Լիկէոնի ուսանողներին թողնելու։

Մեր ուսանողութեան օրերով Լիկէոնի հայ ուսանողները բաժանուում էին երկու կարգի՝ գիմնազիոններից և Լազարեան ճեմարանից աւարտածների։ Առաջին կարգի ուսանողները ամենեւին նախապատրաստութիւն չունենալով հայերէնից, չենք ասում լիկէոնական բարձր դասընթացքը, այլ դժուարութեամբ սովո-

ըսում էին մինչև անգամ նախնական դասընթացքը, լեզուի սկզբնական տարերքը ¹⁴⁾, իսկ երկրորդ կարգինը անցած լինելով ճեմարանական դասարանների Հայոց լեզուի ընթացքը, բոլորովին պարաստուում էին լսելու ըստ լիկեոնական բարձր դասընթացքի: ձեմարանից աւարտածներն էլ իւրեանց հերթով բաժանուում էին երկու կարգի՝ անտարբերների և մասնագէտների: Առաջինները, որոնք կազմում էին մեծամասնութիւնը, Հայոց լեզուն էլ սովորում էին այնպէս, ինչպէս սովորում էին և միւս առարկաներն ու գիտութիւնները. նոցա ձգտումն էր բաւարար կերպով ուսումնասիրել բոլոր առարկաների պաշտօնական դասընթացքը և արժանանալ ստանալու բարձրագոյն դպրոցների համար սահմանուած դիպլոմը-վկայագիրը յայտնի իրաւունքներով: Երկրորդները, որոնք կազմում էին փոքրամասնութիւնը, ընդհակառակը ուսանելով լիկեոնական բոլոր միւս առարկաների միայն պաշտօնական դասընթացքը, իւրեանց բոլոր ուշադրութիւնը դարձնում էին Հայոց լեզուի վերայ և ուսումնասիրում էին նորան մասնագիտօրէն: Էմինի դասախօսած Հայոց լեզուի և գրականութեան պաշտօնական դասընթացքը շատ ընդարձակ չէր. նա առաջին երկու լսարանում կարդում էր Հայոց հե-

¹⁴⁾ Լիկեոնի հայ ուսանողների մէջ պատահել են այնպիսիները, որոնք ոչ հայերէն խօսել և ոչ մինչև անգամ գրել-կարդալ են իմացել, ուրեմն կարելի է երեակայել հանգուցեալ տեսուցչապետի դրութիւնը, որ փոխանակ գրականութիւն կարդալու իւր ուսանողներին, ստիպուած է եղել լեզուի տարերքը սովորեցնել նոցա: Մեր ուսանողութիւնը, որ յաճախ մեծ-մեծ խօսել և ազգից իւր օգտին զոհողութիւն պահանջել գիտէ, սովորութիւն չունի իւր մայրենի լեզուով խօսելու և կարող է մատնացոյց ահել իւր անդամներից շատերի վերայ, որոնք իսպառ չգիտեն իւրեանց լեզուն:

ղինականներին, թարգմանում էր նոցա ռուսերէն, քերականական վերլուծութիւններ էր անում, պատմական, գրական, հնագիտական, աշխարհագրական և լեզուաբանական նկատողութիւններ էր անում, իսկ երրորդ լսարանում կարգում էր Հայոց գրականութեան պատմութիւնը Զարբանալեանի յայտնի գրքի վերայ և կարգացած հեղինակների երկերի մասին ռեֆերատներ էր տալիս գրելու: Մասնագէտների, կամ, լաւ է ասել, նոցա հետ, որոնք առանձին սէր ու ձգտումն էին ցոյց տալիս աւելի հիմնաւոր կերպով ուսումնասիրելու Հայոց լեզուն ու գրականութիւնը, Էմինի դասախօսութիւնը փոփոխութեան էր ենթարկուում, որովհետեւ դոքա իւրեանց ունեցած նախապատրաստութեամբ և անընդհատ հարց ու փորձով ստիպում էին նորան աւելի սրտաբաց լինել, աւելի խօսել, աւելի գիտելիք հաղորդել: Այդ դէպքում պաշտօնական դասընթացքը թէև դարձեալ պահում էր իւր ընդհանուր բնաւորութիւնը, բայց աւելի ընդարձակուում, աւելի մեծ ծաւալ էր ստանում, կրելով այն բնաւորութիւնն ու կերպարանքը, որ իսկապէս պէտք է ունենար Լիկէոնի Հայոց լեզուի ու գրականութեան ընթացքը: Համեմատաբար աւելի շատ էր կարգացում դասական հեղինակների գրուածներին, աւելի շատ, աւելի լուրջ ռեֆերատներ էին գրուում և Զարբանալեանի բոլոր դպրութեան պատմութիւնն էր անցնում: Մենք, օրինակի համար, հանգուցեալի առաջնորդութեամբ կարգացել ենք առաջին լսարանում՝ Թովմա Մեծոբեցու պատմութիւնը, Աղէքսանդր Մակեդոնացու պատմութիւնը, ամփոփ տեղեկութիւն ենք ստացել Հայոց անվաւեր գրուածների մասին և ռեֆերատներ ենք գրել Թովմա Մեծոբեցու և նորա ժամանակակից նշանաւոր վարդապետների ու Հայոց ուսումնարանական գործի մասին: Երկրորդ լսարանում կարգա-

ցել ենք՝ Ղազար Փարպեցին, համեմատել ենք նորան Եզիշէի հետ և առհասարակ ուսումնասիրել ենք նորան այն չափով, որ չափով ուսումնասիրուած է այդ հեղինակը Խալաթեանցի «Ղազար Փարպեցի» ուսումնասիրութեան մէջ, և այդ նիւթի մասին ռեֆերատներ ենք գրել ⁷⁵⁾։ Երրորդ լսարանում կարդացել ենք՝ Հեթում պատմիչը, համեմատելով նորան այն պատմիչների հետ, որոնք պատմել են թաթարների մասին. համեմատել ենք մի երկու շարական, գլխաւորապէս Ս. Հռիփսիմեանց շարականը, ռուս թարգմանութեան հետ. կարդացել Լամբրոնացու ատենաբանութիւնից հատուածներ և Նարեկացու ժողովրդական բանաստեղծութիւնները, Հայոց գրականութեան պատմութեան համար առանձին դասախօսութիւններ կազմելու և անձամբ ուսանողներիս կարդալու հանդուցեալը սովորութիւն չունէր. նա ուսանողներիս կարդալ էր տալիս Զարբանալեանի վերոյիշեալ դպրութեան պատմութիւնը, իսկ ինքը իւր կողմից միայն լրացնում կամ յապաւում էր, նկատողութիւններ ու ծանօթութիւններ էր անում, տեղտեղ էլ իւր կարծիքներն էր յայտնում և առաջարկում էր հեղինակների այս կամ այն կտորի վերայ ուշադրութիւն դարձնել, ծիշդ է, նա Լիկէոնի նոր բացուած ժամանակները փորձել էր Հայոց գրականութեան և ճարտասանութեան գրաբառ լեզուով դասախօսութիւններ կազմել և կարդալ, բայց մի երկու դասախօսութիւն

⁷⁵⁾ Պ. Գրիգոր Խալաթեանցի «Ղազար Փարպեցի» ուսումնասիրութիւնը, որքան մեզ յայտնի է, Էմինի Փարպեցու մասին արած դասախօսութեան և նոյն նիւթի մասին ուսանողներին տուած ռեֆերատի արդիւնքն է։ Խալաթեանը Մսկոլայի Համալսարանի ուսանող լինելով հանդերձ, լսել է և Էմինի դասախօսութիւնները Լիկէոնում։

կարգալուց լետոյ, մեզ անյայտ պատճառով, նա թողել էր այդ փորձը և սկսել էր գործ դնել վերոյիշեալ եղանակը: Դասախօսութիւնների հետ զուգընթացաբար յառաջ էր գնում և մեր տնային պարապմունքների՝ ռեֆերատներ գրելու, աղբիւրներ կարգալու, նիւթեր հաւաքելու և ընդհանրապէս մեր ընթերցանութեան գործը: Հանգուցեալ ուսուցչապետը իբրև օժանդակ աղբիւր գրականութեան պատմութեան և դասական հեղինակների ուսումնասիրութեան առաջարկում էր կարգալ գլխաւորապէս իւր գրուածներն ու թարգմանութիւնները: Այսպէս, երբ խօսք է եղել Հայոց վէպի մասին, նա տուել է մեզ կարգալու իւր «Վէպը հնոյն Հայաստանին», երբ շօշափուել է դասախօսութիւնների ժամանակ Հայոց հեթանոսական կրօնքի խնդիրը, նա առաջարկել է մեզ կարգալ իւր Ասողկի յաւելուածներում տպագրուած «Очеркъ релігіи языческих Армянъ», Վահագն Վիշապաքաղը և Արայի առասպելը, երբ գրականութեան մէջ լիշուել է շարականների, անվաւեր գրուածների, Յունաց և Հայոց եկեղեցիների յարաբերութիւնների, Հայոց աշխարհագրական, բնագիտական և թուաբանական գրուածների և Հայոց ալբուբենի մասին, նա մեզ առաջարկել է կարգալ իւր այդ խնդիրներին վերաբերեալ ծանօթութիւնները, նկատողութիւնները, ուսումնասիրութիւնները, տեսութիւնները, ակնարկները, մենագրութիւնները և թարգմանութիւնները: Մենք ասացինք, որ ուսանողները երբեմն իւրեանց հարցուփորձով ստիպում էին հանգուցեալին սրտաբաց լինել և աւանդել ու պատմել մեզ այնպիսի բաներ, որ յաճախակի չէին վերաբերում դասախօսութեան բուն նիւթին, կամ միայն հեռաւոր աղերս ու առնչութիւն ունէին դասի հետ: Այսպէս, օրինակի համար, մէկ անգամ օգտուելով դէպքից, երբ նա խօսում էր շարականների մասին և ցոյց էր տալիս

նոցա թարգմանութեան դժուարութիւնները, մենք հարցրինք, թէ արդեօք նա փորձ չի փորձել թարգմանելու Դաւիթ Անյաղթի գրուածներէց մի բան, կամ Մագիստրոսի թղթերն ու ոտանաւորները: Նա պատասխանեց, թէ թողնելով մի կողմ Անյաղթի մեր ձեռքը հասած շարադրութիւնների լեզուի դժուարութիւնները, նորա գրուածների թարգմանութիւնն էլ մի ապարդիւն գործ կլինի, որովհետեւ Հայոց այդ փիլիսոփան համարեա՞ թէ ինքնուրոյն գրուածք չունի, այլ բոլորը ևս թարգմանութիւններ ու քաղուածքներ են լոյն իմաստասէրների գրուածներից, իսկ ինչ որ վերաբերում է Մագիստրոսի թղթերին ու ոտանաւորներին—, նոցա մէջ արժանի ուշադրութեան շատ բան կայ և անօգուտ չի լինիլ նոցա թարգմանութիւնը և որ ինքը միտք ունի մէկ օր ձեռնարկելու այդ գործին և արդէն իսկ մի երկու թուղթ էլ թարգմանել է: Միւս անգամ, երբ նա իւր սովորական քթի ձայնով կարդում էր մեզ Նարեկացու ոտանաւորը՝ «ի գիլ գայր 'ի գիլ սալիկն 'ի գիլ»

«ի Մասեաց լաջ կողմսնէ...»,

մենք հարցրինք, թէ, երևի, Նարեկացու թարգմանութիւնը աւելի դժուար կլինի, քան թէ Շարականինը: Նա պատասխանեց՝ «Այո՛, այդ կլինէր մի այնպիսի գործ, որ կգարմացնէր թէ ներկայ և թէ ապագայ սերունդը, բայց մենք փորձել ենք մի երկու կտոր բան թարգմանել «վերստին լաւելուածներից»: Մէկ անգամ էլ, երբ մենք համար էինք իսկա՞հանգեալին նորա մեզ կարդալու տուած „Краткій очеркъ истории армянской церкви“ գրուածքի մասին և այդ առթիւ յայտնում էինք մեր տարակուսանքները: Նա քմծիծաղ պատասխանեց՝ «Այո՛, մենք Հայերս Եւտիքեան ենք» և նկատելով, որ այդ շատ անախորժ տպաւորութիւն թողեց մեր վերայ, աւելացրեց՝ «Մենք Եւտիքեան ենք այն չափով, որ չափով Եւտիքեան են եղել առաջին ե-

ընթ տիեզերական ժողովները, որովհետև Հայոց եկեղեցին ընդունել է այդ ժողովների վճիռներն ու կանոնները, մենք Եւտիքեան ենք այն չափով, որ չափով, Եւտիքեան են եղել Աթանաս Մեծը և Կիւրեղ Աղեքսանդրացին, որովհետև Հայոց եկեղեցին բնութեան խնդրի վերաբերմամբ այնպիսի հայեացք ունի, որպիսին ունէին դոքա: Բայց այդ խնդիրը, ասում էր նա, մի մեծ, մուլթ ու դժուար լուծելի բան է. դորան կարող է պարզել միայն մի մեծ ընդհանուր ազգային եկեղեցական ժողով հոգևորականներից և աշխարհականներից բաղկացած կաթողիկոսի նախագահութեամբ, ինչպէս այդ լինում էր հնումը, ուրիշ ոչ ոք: Պէտք է, վերջապէս, մի որոշ եզրակացութեան գալ, որովհետև մինչև ցայսօր եղած ժողովներում կայացած որոշումները, դաւանական թղթերը, պաշտօնական թղթակցութիւնները և յարաբերութիւնները վանազան քաղաքական հանգամանքների պատճառով մի որոշ գոյն են ունեցել, որ և արգելառիթ է եղել խնդրի էութեան ճիշտ կերպով պարզուելուն: Բացի այս դէպքերից, մեր կեանքում մեր ուսանողութեան օրերով երբեմն տեղի ունեցող զանազան երևոյթներ առիթ էին տալիս մեզ հարց ու փորձ անելու նորան, նորա կարծիքն իմանալու զանազան խնդիրների վերաբերութեամբ և ուսանելու նիւթ ստանալու նորանից: 1882 թուի դեկտեմբերին, օրինակի համար, մեռաւ յայտնի հայագէտ Եղուարդ Դիւլոռիէն, որ 62 թուից, այսինքն Լըվայեան դը Ֆլոռիվալ հայագէտից լետոյ, վարում էր Պարիզի „École des langues orientales“ բարձրագոյն դպրոցի հայ ամբիոնի ուսուցչապետութիւնը: Հայ հասարակութիւնը, որ ծանօթացել էր հանգուցեալ հայագէտի գործունէութեան Մշակում տպագրուած Յարօյի թղթակցութիւններից և Քերովբէ Պատկանեանի 1880 թուին լոյս տեսած „Библиографическій очеркъ армянской исторической литературы“

Համառօտ ակնարկից, իմացաւ այդ ցաւալի մահուան մասին Մշակում տպուած մի թղթակցութիւնից: Հայագէտը վախճանել էր Պարիզի Մեօդօն արուարձանում և շքեղ յուղարկաւորութեամբ թաղուել էր նոյն արուարձանի գերեզմանոցում: Եմինը, որ ինչպէս միւս Ֆրանսիացի հայագէտների հետ, նորա հետ էլ նամակազրու-
թիւն ունէր և լաւ ծանօթ էր նորա գրական գործու-
նէութեան, ըստ իւր սովորութեան ամեն բան ծածկելու իւր մէջ և ոչ ոքի մասնակից չանելու իւր մտածմունքնե-
րին, իւր ներքին աշխարհին, զգացմունքներին, ոչ թէ մի-
այն դասախօսութեան նիւթ չդարձրեց հանգուցեալ հայ-
ագէտի գրական գործունէութիւնը, չքննեց նորա երկերի
արժանաւորութիւնները, չցոյց տուեց նոցա պակասու-
թիւնները, այլ և մի քանի համակրական խօսքեր էլ չասաց
նորա մասին, մինչև իսկ չլիշեց էլ հայ գրականութեան
այդ ժիր մշակի մասին, ժիր մշակի, որ զանազանուում
էր միւս հայագէտներից նորանով, որ, բացի Հայոց հին
կեանքից ու գրականութիւնից, հետաքրքրուում էր և
մեր նոր կեանքով ու գրականութեամբ: Մենք, որպէս
զի ստիպենք ուսուցչապետին խօսել հանգուցեալ Ֆրան-
սիացի հայագէտի մասին և նորա կարծիքն իմանանք
թէ Դիւլիոռէի և ընդհանրապէս բոլոր հայագէտ Ֆրան-
սիացիների մասին, մէկ օր դասախօսութեան ժամանակ
յայտնեցինք նորան, թէ Դիւլիոռէի մահուան առթիւ
Թիֆլիսում հանդիսաւոր հոգեհանգիստ է կատարուել
և ցաւակցական հեռագիր քաշուել Արևելեան կենդանի
լեզուների դպրոցի կառավարիչ Շէֆէրին⁷⁶): Եմինը, որ
ընդհանրապէս տեղեկութիւն չունէր, թէ ի՞նչ է կա-
տարուում հայկական կեանքում, որովհետև սովորու-
թիւն չունէր ոչ հայ լրագիր ստանալու և ոչ էլ կար-
դալու, ըստ երևութին, շատ բաւական մնաց. նորա
միշտ լուրջ և մասամբ էլ տխրամած երեսը պարզուեց,

⁷⁶) Տես Արձագանք 1882 թ., համար 3, 6.

ուրախ արտայայտութիւն ստացաւ և սովորական ժպիտը սկսաւ խաղալ նորա այտերի և շրթունքի վերայ: Նա հանդարտ հանեց, ինչպէս սովորութիւն ունէր այդպիսի դէպքերում անելու, իւր հաստ, ծանր ակնոցը, մաքուր թաշկինակով սրբեց ապակիների վերայից քըրտինքը և սկսաւ խօսել: Այո՛, այդ շատ լաւ է, ասում էր նա, որ հայ հասկացող դասակարգը սովորել է գնահատել իւր երախտաւորներին: Փրանսիացի հայագէտները արժանի են Հայերի համակրանքին, որովհետեւ, ճշմարիտ որ, նոքա բոլոր Եւրոպացիներից աւելի շատ են աշխատել և շատ են աշխատում հայ գրականութեան համար: 'Ի հարկէ, նոքա մեզ Հայերիս համար իւրեանց գրաւոր վաստակներում շատ նոր բան չեն կարողացել ասել և չեն էլ կարող ասել, որովհետեւ նոքա դժուար թէ կարողանան մեր հեղինակներին այնպէս հասկանալ, ինչպէս մենք ենք հասկանում, բայց նոցա հայագիտութեան վերաբերեալ լոյս տեսած երկերի վերայ չ'պէտք է մեր տեսակէտից նայել, այլ Եւրոպացւոց, որոնց համար Հայաստանը մի բոլորովին անծանօթ երկիր է, իսկ Հայը և իւր գրականութիւնն ու պատմութիւնը մի նորութիւն և մի նոր ուսումնական հետազոտութիւններ կատարելու ասպարէզ, ինչպէս Ասորեստանը և Եգիպտոսը, ինչպէս քաղդէական, ասորական և եգիպտական գրականութիւնը: 1798 թուից Պարիզի Արեւելեան կենդանի լեզուների դպրոցում հաստատուած Հայոց լեզուի ամբիոնը իւր Յակովբ-Նահան Զրպետ, Ֆլոռիվալ և Դիւլոռիէ ուսուցչապետներով և մի շարք ընդունակ աշակերտներով այն քուրան է եղել, որտեղ պատրաստուել են հայագիտութեան ասպարիզում գործելու ֆրանսիացիներից շատերը: Սէն-Մառտէն, Բռոսսէ, Վիկտոր Լանգլուա, Եւգենիոս Բոռէ, Եւարիստ Պոլիգոմ, Գատտէրիաս և միւս գիտնականները իւրեանց հետաքրքրական թարգմանութիւններով, Հայոց գրականութեան և պատ-

մուծեան վերաբերեալ իւրեանց համակրելի հետազոտութիւններով զարթեցրել են հետաքրքրութիւն ֆրանսիական հասարակութեան մէջ դէպի Հայը և նպաստել ու պատճառ են եղել ֆրանսիացի երիտասարդներին սիրով յաճախելու Արևելեան դպրոցի Հայոց դասախօսութիւններին և չ'թողնելու հանգչել Հայոց լեզուն ուսումնասիրելու մէկ անգամ ընդ միշտ բորբոքուած կրակը Փրանսիայում, չ'թողնելու սառել մէկ անգամ ընդ միշտ յարուցուած հետաքրքրութիւնը դէպի հայութիւնը: Սէն-Մառտէնի *Memoires historiques et geographiques sur L'Armenie*“-ին Լանգլուայի „Collection“-ը և Բոնստէի երկու հատոր հաւաքածուն կարևոր են ոչ թէ միայն Եւրոպացւոց համար, այլ և մեզ Հայերիս համար: Դժբաղդաբար հէնց սկզբից Հայոց լեզուի և գրականութեան ուսումնասիրութեան գործը ծուռ և անկանոն կերպով է կազմակերպուել կամ սկսուել Փրանսիայում: Փոխանակ որ երկու ամբիոն հաստատուի՝ մէկը Արևելեան կենդանի լեզուների դպրոցում Հայոց կենդանի լեզուի համար քաղաքական և առևտրական նպատակով, միւսը „Collège de France“-ում Հայոց դասական լեզուն ու գրականութիւնը ուսումնասիրելու նպատակով, հաստատուում է միայն մի ամբիոն Հայոց դասական լեզուի համար և այն էլ կենդանի լեզուների դպրոցում: Հանգուցեալ Դիւլոռիէն հասկանում էր այս անյարմարութիւնը և աշխատում էր դորա առաջն առնել, ամեն տեղ քարոզելով, որ Հայոց լեզուի ամբիոնը փոխադրուի Collège-ը, ուստի, բացի ընդհանուր պատճառներից, հայ գրականութեան մշակներից մէկի պակասելուց, և այդ կողմից շատ զգալի է նորա կորուստը մեզ համար: Սորանից երկու տարի առաջ, 1880 թուին, մեր գրականութիւնը զրկուեց բազմաշխատ Բոնստէից, այժմ էլ նա զրկուում է Դիւլոռիէից, որ մի վերին աստիճանի բարի և հայ գրականութեան նուիրուած մարդ

էր: Նորա գրաւոր վաստակներէց մեզ համար առանձին գին ունին նորա „Recherches sur la Chronologie arménienne“ և „Recueil des historiens arméniens des Croisades“: Նոյն նիւթի մասին նա խօսեց և մի ուրիշ անգամ, երբ ստացուեց Գատտերիասի 1870-ին հրատարակած Վահան Գողթնեցու մարտիրոսութեան թարգմանութիւնը, ուրից հանգուցեալը միտք ունէր մի կտոր մեզ կարդալու և համեմատելու բնագրի հետ (Սոփերք հայկականք, հատոր ԺԳ.): Այդ անգամ նա աւելի ընդարձակ խօսեց արտասահմանի հայագէտների մասին ընդհանրապէս և ֆրանսիացիների մասին մասնաւորապէս: Նա մի ընդհանուր տեսութիւն արեց արտասահմանեան հայագիտութեան մասին, բնորոշեց ուղղութիւնը, նպատակը և ցոյց տուած արդիւնքը, համառօտաբար պատմեց գլխաւոր հայագէտների կենսագրութիւնը, յիշեց նոցա գլխաւոր երկերը, երկար կանգ առաւ Լակոզի և Վատումնի Խորենացու մասին յայտնած կարծիքների վերայ և շեշտեց Վիստոնների թարգմանութեան նշանակութեան և արժանաւորութեան վերայ: Բայց զարմանալին այն է, որ հանգուցեալը բաւականին երկար խօսելով Զահրաբեանի և մինչև անգամ Զրպետի գործունէութեան մասին, յաճախակի յիշելով իւր սիրած Մխիթարեան ուխտի անուընդ, այդ խօսակցութեան ժամանակ նա ոչ մի անգամ չ'յիշեց Քերովբէ Պատկանեանցին: Եւ այդ ոչ թէ միայն այդ անգամ, այլ և ընդհանրապէս մենք մեր դասախօսութիւնների ժամանակ ոչ մի անգամ հանգուցեալի բերանից չ'լսեցինք Պետերբուրգի հայ ուսուցչապետի անունը: Նա նորա գործունէութեան մասին չէր խօսում, նորա թարգմանութիւնները, հետազօտութիւնները քննութեան առարկայ չէր շինում, մինչև իսկ նորա գրուածները թէ իբրև աղբիւր մեր ըեֆերատների և թէ իբրև ընթերցանութեան նիւթ մեզ չէր առաջարկում կարդալու: Մենք, 'ի հարկէ, հասկանում էինք հանգու-

ցեալի դէպի Պատկանեանցը ունեցած այդպիսի լարաբերութեան պատճառը և ինքներս էինք կարգում նորա երկերը, ինքներս էինք օգտուում նորա գրուածներէց մեր ընթերատների համար և առիթ չէինք բաց թողնում նորա անուընդ յիշելու: Թէ և այդ, ինչպէս երեւում էր, նորան շատ էլ ախորժելի չէր, բայց նա այնուամենայնիւ բան չէր ասում և աշխատում էր լռութեամբ անցնել: Մէկ անգամ միայն նա բացարձակապէս մեզ յայտնեց իւր կարծիքը նորա մասին: Այդ այն ժամանակն էր, երբ մենք մեր լրագրներից մէկում¹¹⁾ կարգալով „Le Muséon“ միջազգային հանդիսի յայտարարութիւնը և խմբագրութեան մի յորդորը հայ հասարակութեան բաժանորդ գրուելու այդ հանդիսին, որովհետև նորա գլխաւոր նպատակն է արեւելագիտութեան մասին յօդուածներ հրատարակել, խօսք բաց արինք այդ մասին հանգուցեալի հետ, ասելով, թէ հանդիսին, 'ի միջի այլոց, պէտք է մասնակցեն՝ Լընորմանը, Օպպերտը, Ժուստին և մեր Պատկանեանցը: Նա պատասխանեց, թէ Muséon-ը մեծ օգուտ չի կարող տալ ոչ արեւելքին ընդհանրապէս և ոչ մեզ Հայերիս մասնաւորապէս, որովհետև Լընորմանը, Օպպերտը և Ժուստին առանձնասեռեակի գիտնականներ են և չեն ճանաչում արեւելքը այնպէս, ինչպէս այդ պէտք է մի լրագրի համար, որ իրան նպատակ է դրել ուսումնասիրել արեւելքը, իսկ Պատկանեանցը իւր կարծիքը չունի, այլ գերի է Եւրոպացի արեւելագէտների կարծիքներին. նա կարող էր օգտաւէտ լինել հանդիսին իւր Հայոց հեղինակներից արած և անելիք թարգմանութիւններով, բայց դժբաղդաբար այդ բանում էլ նա ընդունակութիւն չունի. նորա թարգմանութիւնները մեծաւ մասամբ անճիշտ են, ուստի և գին չունին:

¹¹⁾ Տես Արձագանք 1882 թ, համար 1.

1881 թուին Վենետիկում կայացաւ Աշխարհագրական ժողով, որին Միլիթարեանք ներկայացրին Մովսէս Խորենացուն վերագրուած Աշխարհագրութեան մի նոր ընտիր հրատարակութիւն ընդարձակ լառաջաբանով, լուսաբանութեամբ և ֆրանսերէն թարգմանութեամբ, որ աշխատասիրել էր հայր Արսէն Սուկրին։ Էմինը, որ շատ էր հետաքրքրուում ամեն մի բանով, որ վերաբերում էր Խորենացուն, շատ ուրախացաւ և այդ նոր հրատարակութիւնը և նորա մէջ յայտնուած նորանոր հանգամանքները դասախօսութեան առարկայ դարձրեց։ Նորա ուրախանալու պատճառն այն էր, որ նա դեռ Խորենացու իւր առաջին թարգմանութեան յառաջաբանում խօսելով մեր պատմահօր թողած միւս երկերի մասին, յայտնել էր, թէ ինքը մտադիր է ժամանակով ներկայացնել գիտնական աշխարհին և Խորենացու հետաքրքրական Աշխարհագրութեան թարգմանութիւնը, բայց չէր կարողացել իւր խոստմունքը կատարել, որովհետեւ չ'իսոսելով Ս. Մառտէնի այդ գրուածքի վերաբերմամբ յայտնուած կարծիքների մասին, որ չէր կարողացել հերքել Ինջիլեանը, լոյս էին տեսել նոր ուսումնասիրութիւններ, որոնք իսպառ հերքում էին Աշխարհագրութեան Խորենացուն պատկանելը։ Ի միջի այլոց, 1877 թուին դուրս էր եկել Պատկանեանցի նոր հրատարակութիւնը ռուսերէն թարգմանութեամբ, բազմաթիւ ծանօթութիւններով և ընդարձակ լառաջաբանով, որի մէջ նա հերքելով Աշխարհագրութեան Խորենացուն պատկանելու հանգամանքը, վերագրել էր նորան եօթներորդ դարում ապրած թուաբանական և բնագիտական գրուածների հեղինակ Անանիա Շիրակացուն։ Խնդիրը նորանումն է, որ Աշխարհագրութեան բնագիրը 1683 թուին Մարսելում առաջին անգամ լոյս տեսնելուց յետոյ, այլ ևս քանիցս անգամ հրատարակուել էր և թարգմանուել էր լատիներէն 1736 թուին և ֆրանսերէն 1819-ին, բայց

այդ բոլոր հրատարակութիւնները ևս սխալներով ու աղաւաղումներով լցուած վատ ձեռագրից էին եղել, ուստի և բնականաբար այդ տեսակ բնագրի վերայ հիմնուած դատողութիւնները ևս հաստատ հիմք չէին կարող ունենալ: Ամենալաւ հրատարակութիւնը դարձեալ համարուում էր 1843 թուին Միխիթարեանց ձեռքով վեց գրչագիր օրինակների համեմատութեամբ եղածը, որ ազատ էր առաջուալ հրատարակութիւնների շատ աղաւաղումներից և որի վերայից արել էր իւր հրատարակութիւնն ու թարգմանութիւնը Պատկանեանցը: Էմինը կարծում էր, որ 43 թուականի հրատարակութիւնը վերջնականը չէ. նա յոյս ունէր և սպասում էր, որ կգտնուի մի ուրիշ աւելի ընտիր օրինակ, միանգամայն ազատ բոլոր աղաւաղումներից, որ հիմն ի վեր կտապալէ բոլոր մինչև այդ ժամանակները եղած կամ լայտնուած կարծիքները, դատողութիւնները, մանաւանդ որ ս. Էջմիածնի ձեռագրների ցուցակից նա հաւաստիացել էր, թէ Մայր-Աթոռի մատենադարանում Աշխարհագրութեան ձեռագրներից մի քանի օրինակ կայ, որ տակաւին ոչ ոք չի քննել, չի ուսումնասիրել և չի բաղդատել եղածների, տպագրուածների հետ: Հայր Սուկրիի հրատարակութիւնը, որ շատ տարբերուում էր 43 թուականի հրատարակութիւնից և որ աւելի ընդարձակ ու կատարեալ էր, արգարացնում էր հանգուցեալ ուսուցչապետի յոյսերը, ուստի և բնական էր այն ուրախութիւնը, որ նա արտայայտում էր այդ նոր հրատարակութեան յոյս տեսնելու պատճառով, բնական էր և այն ոգևորութիւնը, որ նա ցոյց տուեց այդ մասին խօսելու և դասախօսութեան ժամանակ: Նա ակնարկելով Սէն-Մառտէնի և Պատկանեանցի վերայ, ասում էր, թէ մինչև ցայսօր եղած ուսումնասիրութիւնները, որոնք իբրև թէ հաստատել են, թէ Աշխարհագրութիւնը մեր պատմահօր գրչին չի պատկանում, այլ գրուել է մի ուրիշի ձեռքով կամ եօ-

Թերորդ կամ առսերորդ դասերում, բոլորը ևս հիմք չունին։ Այն տեղերի և քաղաքների անունները, որոնք լիջուում են Աշխարհագրութեան մէջ և որոնք ուսումնասիրողների կարծիքով գոյութիւն չեն ունեցել հինգերորդ դարում, և այն իրողութիւնները, որոնք պատմութեան մէջ և որոնք նոյն ուսումնասիրողների կարծիքով կարող են կատարուած լինել միայն միջին դարերում, աղաւաղումների հետեւնք պէտք է համարել, ուրիշ ոչինչ։ Ինքը համակարծիք է հայր Սուկրին։ Նա կարծում է, թէ որովհետեւ Աշխարհագրութեան լեզուն և ոճը նման են Խորենացու պատմութեան լեզուին ու ոճին և որովհետեւ նոյն աշխարհագրական անունները նոյն խսկ ձևով գտնուում են և Հայոց մեծաց պատմութեան մէջ, այդ պատճառով էլ պէտք է հաւանականօրէն ենթադրել, որ աշխարհագրութիւնն էլ պատկանում է Քերթողահօր գրչին։ Նա անկարելի չէր համարում, որ միջին դարերում մէկը յապաւումներ և յաւելուածներ արած լինի Աշխարհագրութեան մէջ, ինչպէս այդ ենթադրել էր 1873 թուին նշանաւոր Կիպերտը Բերլինի Ակադէմիայում, խօսելով Խորենացու Աշխարհագրութեան մասին, բայց կարծում էր, որ նորա էական մասը հին է և խմբագրուած է հաւանականաբար հինգերորդ դարում, ոչ ուշ ⁷⁸⁾։

Սրտաբաց զրոյցներ անելու հանգուցեալ ուսուցչապետի հետ մենք առիթ ունեցանք մանաւանդ 1881—82 ուսումնարանական տարուայ ընթացքում, երբ նա երկու շաբաթի չափ թեթեւ հիւանդացաւ և բժիշկների խորհրդով ստիպուած եղաւ տանը նստել։ Այդ միջոցում

⁷⁸⁾ Նոր հրատարակուած Աշխարհագրութեան լիակատար վերնագիրն է՝ Աշխարհացոյց Մովսիսի Խորենացու յաւելուածովը նախնեաց։—Géographie de Moïse de Corène d'après Ptolémée. Texte arménienne, traduit en français par le p. Arsène Soukry Mekhitariste. Venise imprimerie arménienne 1881.

Հանգուցեալը մեզ հրաւիրեց իւր բնակարանը դասախոսութիւններ լսելու, որովհետեւ նա իբրեւ վերին աստիճանի ճշգրտապահ մարդ չէր ցանկանում, որ մէկ անգամ ընդ միշտ սահմանուած դասընթացքի ծաւալը չլրացուի, մի բանով պակաս մնալ: Դասախոսութիւնները ալք միջոցում լինում էին երեկոները. մենք հաւաքուում էինք նորա մօտ 6—7 ժամին և մնում էինք մինչև 10—11 ժամը, ալսինքն համարեա՛ն այնքան ժամանակ, որքան նա սովորաբար գործ էր դնում իւր պարապմունքի համար Լիկէոնում, մէկ-մէկ ժամ կարդալով իւրաքանչիւր լսարանում: Հանգուցեալը առհասարակ չէր սիրում յաճախելի բնակարան փոխել. նա ընդերկար ապրում էր միևնոյն բնակարանում, հաշտուելով մինչև անգամ շատ անյարմարութիւնների հետ, և միայն ծալրագոյն անհրաժեշտութիւնն էր, որ ստիպում էր նորան դուրս գալ հին բնակարանից և մի նոր կացարան տեղափոխուել: Այդ նորանից էր, որ նա, նախ, շատ դժուարութեամբ էր ընտելանում նոր բնակարանի սարք ու կարգին, տեղին, փողոցին, երկրորդ, որ նա սիրում էր, որ իւր բնակարանը լինի հանգիստ, ոչ աղմկալից փողոցում և, ըստ կարելոյն, առանձին, հեռի միւս բնակարաններից, որ, յայտնի բան է, շատ էլ հեշտութեամբ չէր ճարուում: Այդ ժամանակները նա բնակուում էր «Красные ворота» կոչուած յաղթական կամարի մօտ, Գոլսկովի տանը: Դա մի փոքրիկ, սակաւասեռեակ բնակարան էր, որ իւր առանձնակի դիրքով և խաղաղ շրջակայքով, կարծես, հէնց մասնաւորապէս կառուցուած լինէր Էմիւնի համար: Դէպի «Красные ворота» տանող մեծ աղմկալից փողոցից աջ կողմը ծռուելով, մարդ ընկնում է մի խուլ փողոց, որի փոքրիկ հրապարակի ձևով յայնացած տեղում կանգնած է մի հնացած, ներկը վալրտուած և առհասարակ արտաքին կողմից շատ անպաճոյճ համեստ տնակ: Այդտեղ, ալք տնակում էր կենում,

որքան մենք լիշում ենք, 80 թուականից ի վեր էմինը, ալդտեղ էր նորա կեանքի վերջին տարիների բնակարանը, ալդտեղ էլ նա մեռաւ: Հին ձևի քարեայ սանդուղքով վեր բարձրանալով և նախասենեակում վերնազգեստներս հանելով, մենք անմիջապէս մտնում էինք նորա ընդունարանը, որ մի միջին մեծութեամբ և համեստ ու շատ մաքուր կահաւորուած սենեակ էր: Մենք իսկոյն բոլորուում էինք սենեակի մէջ տեղում դրուած երկար սեղանի չորս կողմը, ինքն էլ իւր տնային մոխրագոյն զգեստը հագած, փափուկ հողաթափներով տեղաւորուում էր մեր մէջ տեղը և սկսուում էր դասախօսութիւնը: Այդ իսկապէս դասախօսութիւն էլ չէր, այլ տնային զրոյց զանազան նիւթերի մասին, որոնք կապ ունէին մեր դասընթացքի հետ: Մենք հարցնում էինք, նա պատասխանում էր. կարծես, մենք հիւր լինէինք, նա տան տէր, որ զիջանելով բաւականութիւն էր տալիս իւր շատախօս հիւրերի հարցասիրութեան: Մենք խօսում, լսում ու ուսանում էինք, նոյն ժամանակ էլ վայելում էինք թէյ անուշահամ շաքարահացով, որ առատութեամբ մատակարարում էր մեզ հանգուցեալի հին տնտեսուհին — Սոփիան, որին նա նորա երկարամեայ հաւատարիմ ծառայութեան համար կտակեց 3000 ռուբլի և տան բոլոր կահ-կարասիքը: Իւր տնային դասախօսութիւնների ալդ երկուշաբթուայ ընթացքումն էր, որ նա կարգաց մեզ իւր գրաբար լեզուով կազմած գրականութեան պատմութեան հատուածքը, ճարտասանութիւնը, Քիոսի յոյն մետրոպոլիտի թղթի գրաբառ թարգմանութիւնը, պատմեց իւր արած ճանապարհորդութեան մասին դէպի Ս. Էջմիածին, նկարագրեց Մայր Աթոռի մատենադարանի այն ժամանակուայ խղճալի դրութիւնը, ցոյց տուեց իւր հաւաքած ձեռագրները, իւր թղթերն ու չտպուած գրուածները, որոնց մէջ և ամբողջովին իւր կնոջ ձեռքով արտագր-

րուած Խորենացու թարգմանութիւնը և այլն և այլն: Մենք յայտնեցինք, որ ներկայումս, այսինքն 1881—82 թուականներին, Ս. Էջմիածնի մատենադարանը աւելի լաւ դրութեան մէջ է, որովհետեւ վեհափառ Գէորգ Գ-ի աշխատանքով ու հոգացողութեամբ շինուած է առանձին թանգարան և մատենադարան և զըշափիր մատենաները խնամքով հաւաքուած է պահարանների մէջ և ազատուած է խոնավութիւնից, փոշուց և փտելու վտանգից: Նա ուրախացաւ և ցանկութիւն յայտնեց, որ շուտով կազմուի մի կանոնաւոր գրացուցակ, որովհետեւ Մսերի և Կարինեանցի ցուցակները լրիւ չեն և բաւականութիւն չեն տալիս հարցասէրներին: Հանգուցեալի կարծիքով, ներկայումս Ս. Աթոռի մատենադարանում պահուած ձեռագրների մէջ պէտք է որ մեծ գանձեր թաքնուած լինին, որ սակայն կարող է երեւան հանել միայն նոր, կանոնաւոր կերպով կազմուած մի գրացուցակ: Այդ միջոցումն էր, որ նա մեզ ծանօթացրեց մեր ձեռքը հասած մեր ոչ կրօնական բովանդակութիւն ունեցող բանաստեղծութեան, վերլուծեց և թարգմանեց ռուսերէն մեր հին վէպի ոտանաւոր հատուածները, Յովհաննէս Մամիկոնեանի մէջ բերած շէրը, Մովսէս Կաղանկատուացու Դաւթալի երգը և Գրիգոր Մագիստրոսի, Գրիգոր Տղայի և Ներսէս Ծնորհալու բանաստեղծութիւններից հատուածներ: Այդ միջոցումն էր, վերջապէս, որ նա դասախօսեց մեզ այն աշխարհահայեցողութեան մասին, որ մեր նախնիքը ունեցել են Տիեզերագրութեան և ընդհանրապէս աշխարհագրական և բնագիտական զանազան երևոյթների մասին, որի համար նա նախապատրաստել էր մեզ, կարգաւ տալով իւր „Космографическій трактатъ Іоанна Тцортцореци“ թարգմանութիւնը և դորան կցած ընդարձակ յառաջաբանը:

Յրուանդ Եախաղիզ